# ԳԻՐՔ
# ԱՇԽԱՐՀԱՑ
ԵՒ
# ԱՌԱՍՊԵԼԱԲԱ
# ՆՈՒԹԵԱՆՑ.
ՈՐԷ
# ԱՂՈՒԷՍԱ ԳԻՐՔ.

՚ի Հայրապետութեան Տեառն
Յակոբայ կաթուղիկոսի
Սրբոյ Էջմիածնի:

Յամստէրդամ:

---

՚ի Թուին Փրկչին 1668:
Եւ Հայոց ՌՃԺԷ. Հոկտեմբերի
ամսոյ մէկ:

91(47.925)

Ագեմ զբանս գովեստի.
Ճշմարտութեան ատենս մեծի:
Սակաւ բանիւս յայտածողի.
բայց զօրութեամբ զարմանալի:
Կաթնաբուծից չամբքելի.
բայց գիտողաց ախորժելի:
Ուղղորդողաց զկէտ սահմանի.
իմաստութեան որ ըստ կարգի:
Ներակերտեալ զբանս աշխարհի
տարորոշեալ ըստ գաւառի:
Յիւրաքանչիւրսն ըստ պատշաճի
Մովսէս քերթող Խորենացի:

[illegible]

[illegible]

## Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ:

ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐՀԱ
գրութեան յԱ̃ծային գիրս
ոչ ուրեք գտանեմք ո-
ճով ասացեալ. այլ գոյն
ինչ՝ գուն ուրեք՝ և այն դժուարա

հաս և տաժանելի։ Մարդ՝ վասն զի ան
հասք գոյա եղեալ մեզ յարտաքին
սոյն հարկաւորիմք ձեռնարկել։
Սորով զաշխարհագրութիւն յարմարե
ցին 'ի Ճանապարհորդութե՝ և 'ի
նաւարկութե՝ և ստուգեցին յերկ
րաչափութե։ և ինքն երկրաչափու
թիւն՝ գտաւ յաստեղաբաշխութե։
Նախ զի՝ ուշ եդեալ առաջինքն խո
կային, թէ որք տեղիք երկրի, ընդ
որովք են կացեալք մասամբք երկ
նայնոյ բոլորակին։ Եւ զմեծութիւն
տունջեան և գիշերոյ։ և զոր ինչ
երկրի. և զոր իներքոյ երկնից միշտ
բերելով։ յայտնեն և զբնակութիւն
մարդկան։ 'Ի միջօրական գծէն
զդիրն առնելով ասպարիզական չա
փու ըստ Ճանապարհորդութե և
ըստ նաւարկութե։ իմացեալ զկայ
անան և զփոփոխիլն։ զայլ այլուր
այլապէս երևեալ։ քանզի ինչ այրե
ցածին բերին կենդանատեսակքն՝
մտանեն և ծագին։ Բայց փոքր
արջն

արջն գերիվերոյ կացեալ լինի երկ-
նի 'ի հիւսիսային կողմանսն աս-
պարիզօք հինգհարիւրևերկու հրն-
գերեկօք: Նա անդէն Թուլիս
կղզի. որ մեկնէ զհիւսիսականացն,
և ծանուցելոյ երկրի իբրև զգետ՝
ըստ լայնութեն չափու: ուր 'ի միջօ-
րեական շրջանակն երեքհարիւրև-
վաթսունևերկու բիւրուք՝ վեցհա-
զարեկօք մասամբք: Հինգհարիւր
չափուց ասպարիզաց. մեծ շուրջու-
նելութե: Իսկ 'ի հարաւայինն,
խոնարհի 'ի սուզականն. և այլա-
կերպ զայլսն երևեցուցանէ: ուր
Թէոդորոս Սամոսացի պատմէ
զՀնդկաց. թէ 'ի լիմմեռիկոնն
նաւելով յերկիրն՝ ունելով զտու-
ռոնն միջերկնեայ՝ և զլուդայ ընդ-
մէջ կիւռիայ: Իսկ յալիայ ընդ մէջ
նաւելով երկրականն. զտանամբոս-
ասող՝ որ է պպոս 'ի նոցանէ եր-
թեալ. և իմէջ նոցա Մաւրիկիկոն
հնչական. և այլ բազում ինչ:

Եւ զցամաքեալ գօտին բերելով
ընդ մէջ տիեզերականին՝ առ եթեօ
պացւոց Ճանապարհորդութենէ
յԱկիղեբրայ աշխարհէն: Եւ ըզ
Յուասոն ծայր ընդ Ձմեռնային շրջա
ղօք՝ յաներեւականն եւ 'ի սուզա
կանն կոյս: Քանզի եւ յեօթնե նա
հանգէն մինն տուեալէ հարաւա
նոյ միջօրէականի գծին: եւ զայլս
վեցն 'ի նմանէ յարջայինն կոյս:
Այսպէս եւ երկու ընդայինս ժամս
ունելով: երեք ը̄ Աղեքսանդրիայ:
կիսաժամաւ յառաջ մատուցեալ՝
ով̄ եւ ա̄մ: Զորս Պուոտոս՝ որ է մի
ջին նահանգացն, ըստ գնտակին
յայտնութեցն: Հինգ ընդ Հռոմ:
Վեց ընդ Կոստանդնուպօլիս:
Եօթն ընդ Սկիւթիայ: եւ ա̄մ աշ
խարհաց դոցին դասեցան: Յորս
նախ առնլի է զտիեզերաց ստորա
գրութիւ, նմանութ̄ երկու գնտա
կան աստղականաւ՝ զկէս շրջանա
կին մեծի՝ ունելով հարիւրեւութ

սուն

սուներէք բնակութիւն մարդկան։
Եւ զվերաչափութիւն առնելով ժա-
մագիտականաւն, իձեւն երևե-
լոյ աստտուորըոն և սկիւթիւոն գործ-
արանաց։ բայց կարևոր է Պւէտ
պետուայ առի ցամաքաչափութիւն։
որ է Պտղոմէոս և Կղօդէոս։ չա-
փեալ ասպարիզք զամ բնակութիւն
մարդկան։ Երկայնութիւն յԱրև-
մտից սկիզբն արարեալ՝ որ է ծով
անծանօթ Ովկիանոս։ 'Ի ծայրէ
անծանօթ աշխարհին մինչև յԱրև-
ելս՝ յեզր անծանօթ երկրի մասունս
հարիւր ութսուն։ Այնպէս և լայ-
նութիւն սկիզբն արարեալ յայրեցե-
լոյ գօտւոյն՝ չափեալ զհիւսիսիւ-
անծանօթ ծով և երկիր՝ մասունս
վաթսուն և հինգ։ և դարձեալ յայ-
րեալ գօտւոյն 'ի հարաւակոյս չա-
փեալ յանծանօթ երկիր՝ մասունս
տասն և հինգ՝ լինի ամ լայնութիւն
մասունս ութսուն։ Եւ առաւել
յարտաքսկոյս քան զայս՝ չէ ուրուք

զերզը երկրի տեսեալ՝ և կամ գիտա
ցեալ՝ որ̃պ ասէ Պտղոմէոս։ Այլ ծա
նօթ կոչի երկիր և ովկիանոս. յորս
երկրագիրք բոլորակին տիեզերա
գրութեցն առեալ Պապայ Աղեք
[…]անդրացւոյ համառօտաբար երկ
[…]րագրութե։ Յորմէ մեր ծայրա
քաղ արարեալ զմեծամեծսն և
զնշանաւորսն միայն. և զչափս որ
չափութեցն. ոչ ըստ յատակի երկ
րի՝ այլ ըստ բարձրացեալ չերանց
տեսութե. ընդ օդս անցանելով
'ի ձեւն գործարանաց. նկարելով
զնշոյլս արեգական և լուսնի և աս
տեղաց։ ըստ տանց խուրեանց եօթն
նահանգացն՝ փոփոխման սահմա
նաց։ Այս է սահման բան կարծեա
ւոր յայտնիչ բնութե ենթակայ
[…]ութե։ որ զլուրն 'ի ներքս փա
կէ՝ և զայլն 'ի բացորոշէ՝ և չափէ
զմասն։ Այս է մասն հինգհարիւր
ասպարէզ։ և ասպարէզն է հեռա
գնացութե՝ այսինքն է վտաւան մի։

Այս

Նու է ասպարէզն ըստ ողաչափու-
թե քայլս հարիւր: և քայլն վեց
ոտն է. և ոտն վեց մատն: Մղոնն
ասպարէզ մի: իսկ ասպարիզաց աս
պարէզն հարիւրերքառասուներեք
քայլ: և մղոնն է եօթն ասպարէզ:
Ա՟պ լինիլ գետնաչափութե՟ մղոնն հա
զար քայլ: Նու փարսախն երեք մղոն
է: Նայց ողաչափութե՟՝ է մասն
հինգհարիւր ասպարէզ՝ի լայն երկ
րաչափութե, և նոյն չափ է երկայնու
թին չորեքկուսի: ո՟չ զի լինիլ մասին
եօթանասուն և մի մղոն: չորք եօթն,
քսան և ութն: Նրդ՝ այս չափով
չափեցին զերկիր և զծով: սկիզբն
արարեալ յայրեցելոյ գօտւոյն՝ զոր
կոչեն միջօրական գիծ: յորում
բնաւին ոչինչ բուսանի. յաղագս
միշտ յաձախելոյ ընդ նմա արեգա
կանն յամառնային եղանակն: գ[illegible]լա
նակ ձմեռնային փոփոխեալ և անդ
րէն դարձեալ: Վ՟որոյ ասացին
զերեգակն շա՛տ փոքրագոյն քան

զերկիրս զայս լինել։ քանզի՝ վեցեր
որդ կամ երրորդ լինիլ արեգական։
զերկուս նահանգսն ասելով բովան
դակութիւն արեգական՝ այսինքն է
օթևանս քառասուն։ յորմէ ըստ
հեղման օդոյն նրբացեալ բոլոր
քութե ասացին զայրեցական գօ
տին. և աստ՝ և անդ։ Իսկ նորա
զՈվկիանոս ընդմիջելով 'ի բնա.
կութենն, և հարաւային կիսագն
տին, զոր ընդդէմ երկրի կոչեցին,
բնակելոյ երկրիս մեծութ՟է։ ոչ
ըստ սմա՝ այլ հիւսիսային կիսագն
տին. զոր կոչեն գոյացեալ։ քանզի
'ի նմա ասացին փոքրագոյն գծա
գրեալ՝ վ՟ա անձուկ գոլոյ բոլորա
կին. և զդէմսն նմանապէս նորին
հարաւային եզրն զոր կոչեն ցամա
քեալ։ Իսկ ոչ միայն զայրեցեալ գօ
տ[illegible]ւն ասեն զովկիանոս՝ և զա՟մ
երկրաւն շուրջ գոլ։ զոր և Կոստան
դինոս Անտիոքացի 'ի քրիստոնէա
կան տաղագրութեն ասէ՝ յաղագս

տապանակին անցելոյ՝ յարեւելեան երկրէն առ մեզ՝ 'ի մէջ Եւրոպա։ Բայց Պտղոմէոս՝ որոյ արք բազմաշրջութե՛ զնամ չափեցին։ ոչ ամեն շուրջ լինիլ զովկիանոս այլ 'ի միոյ կողմանէ անկեան՝ հիւսիսոյ արեւմտից՝ և տարածի յարեւելակոյս ընդ հիւսիսի։ յերկուց մասանցն մասն մի ընդ արեւմուտս։ 'Ի հարաւակոյս 'ի չորս մասանցն. Երեք մասունքն որք 'ի նմանէ սկսեալք զանծանօթ երկրէ ասէ շրջապատեալ զբնակութին մարդկայինս բնութե։ Նաւ վերից ծովուցն մեծամեծաց ըզ Հնդկայնոյն ասեմ. և զՅունականէն. և զՎրկանին ծով։ և երկիր բնակութի մարդկան ասէ շուրջ լինիլ զնոքօք՝ և է ճշմարիտ։

Ն. Շարահանգիր հարաւած երկրի։

Քանզի զՅունականաւն և զԱրաբիականաւն, և մերոց իսկ արանց պատահեցաւ շուրջ անցանիլ.

յորոյ

յորոյ վարկանիմ և զՀնդկայնոյն նոյնպէս լինել։ և ոչ ոպ ոմանք ասացին Սկիւանոսի պարունակեալ զմի։ այլ հաւանեալ եմ Պտղոմեայ պատմութեան. որոյ արք զայրեցեալ գօտեաւն անցին 'ի հարաւոյ կոյս. և զազգսն զայնոսիկ Ճշգրտեցին. և զսահմանս Ճարակաց նց չափեալ՝ Յակիզլիսիբրայ մինչև 'ի լուսնի լեառն և անդր ևս՝ յանծանօթ երկիր. և շուրջ եկեալ զանծանօթ երկրաւն՝ յՍկիւանոսէ մինչև ցՍկիւանոս՝ և զևսառաւեն լռեաց. զոր ոչ երբէք կոխեաց ոտն՝ և կամ ետես ակն մարդոյ. որում Ի՛ ծայլին գրոց 'ի ձահ գան վկայութիւք. ոպ Յօբ ասէ. թէ ձգեաց զհիւսիս զոչընչիւ. և եթէ հրաման պատեաց զերեսս ջուրց, այսինքն եթէ հրամանն Տն բաւականէ ունել զերը ջրոց անծանօթի ծովուն. ոչ պիտոյացեալ անցանել երկրի. և ոչ եզր սպառուածի անծանօթի երկրի պիտոյացեալ ջրոյ.

ջրոյ· բայց թէ և է զանծանօթ
երկրաւ ծով· կամ շուրջ զանծանօ
թիւ ծովու երկիր· մեք ո՛չ անհաս
եղեալ մտածութեց լռեմք· և
գրեմք զայս միայն· զոր կոխեաց ոտն,
և ետես ակն մարդոյ:

Որդ՝ սկսցուք ըստ Պապայ Ալեք
սանդրացւոյ երկրագծութեն՝
որ ըստ ինքնագիր բոլորակին Կղօ
դիոյ Պտղոմեայ տիեզերագրու
թեցն չափուց· զոր սկսեալ յայրե
ցելոյ գօտոյն կրկնակի , և հիւսիսի,
և՛ի հարաւոյ· բայց սկսանի յայրեալ
գօտւոյն յանծանօթէ երկրէն սիւնե
ցւոց՝ անցանելով Է Տաբրոբանի
կղզւոյ ստորոտն· և ընդ՝ Եղիոս գե
տոյ վտակն և ընդ մի Եթեօպայս
ըստ հարաւոյ կողմանէ Աւէրլնմաց
լերինն· որ կոչի աստուծոց աթոռ·
ընդ ձկնակեր Եթեօպայեցւոյն ,
յանծանօթ երկիր· իսկ յՈվկիանո
սէ , զկողմամբք զեփիւռոս հողմոյ
սկսա

ականի. քսան և մեկ մասն է լուսնութեն
առ ձկնկերովքն Սեթէ օպայեցուքն
և Սէրքիմաց լերամբք. և պատէ
զարեմուտս, մինչև խապառ լուսնու
թին չափու. և դառնայ առ հիւսի
սի յարևելս մինչև վախճանն մասն
լուսնութեն. որ է հանդէպ Սարկինէ
տեղան ծոցոյն Պոնտոսի առ. Բրեռ
առնիւ. և անտի յառաջ անծանօթ եր
կիր. և պատէ զինացեալ մասունսն
հիւսիսոյ. և զարևելս և զհարաւ
քսան մասն յարևելից մինչև ցնոյն
Ովկիանոս. իսկ զաւելին քան զայ
սոսիկ չէ ուրուք տեսեալ և կամ ծա
նուցեալ. վասն այնորիկ անծանօթ կա
չի երկիր և Ովկիանոս. և Ովկիանոս
ծանօթ նաւագնացութե. և կղզիք
երեք հնդէպ ներքսագոյն] իբրև
որք երանելեաց կղզիք կոչին. և դո
ցա ժ արևմտից վեց կղզի այլ է. և դո
ցա 'ի հիւսիսային չորս կղզիք հան
դէպ Մորիտանեաց՝ և մինեղուցն
որ կոչի անպատ, այսինքն եօթնեակ՝

քան

քանզի զեօթն մղոն ունի լայնութե
տեղւոյն՝ որ գետաբար ելանէ յՈվ
կիանոսէ, և ծնանի զյունաց ծովն.
որոյ յարևմտից կղզի կայ այլ մի ևս։
Իսկ Ովկիանոս երթեալ ը̅ հիւսիսէ
և դարձեալ ը̅ արևելս առնէ երկու-
կղզիս մեծամեծս. որք կոչին Իրէ
տանացւոց աշխարհ.ք՝ և զԱւուղիս
մեծ կղզի. որոյ հասարակն անծա
նօթ երկիր համարեալ է. և կղզի մի
այլ՝ որ սկանդրէ անուանի. յորում
գունթք լեալք են. և քն զայս կղզիս
այլ նաւագնացութի չկայ՝ և ոչ հա
սեալ է ուրն մարդոյ. վ̃այնորիկ կոչի
անծանօթ ծով. մտանէն և գետք
քսան և մէկ յարևմտէ յՈվկիանոս։

Իսկ երեք ծովք՝ որովք երկիր
շուրջ է. Առաջին ծով՝ Հնդկայ
կնն. որ կոչի կարմիր ծով՝ յորմէ ծո
ցոյ ելանէն պարսից և արաբացւոց
ծովք. և սահմանի ՚ի հարաւոյ ան
բնակ և անծանօթ երկրաւ։

Իսկ

Իսկ յորդւոցն՝ ամենեցուն աշխար
հաւ․ և ՚ի Հնդկաց՝ Հնդիկք և
պարսիկք և արաբացիք։ Իսկ յորդւ
ոցն Եգիպտացիք և Եթովպա
ցիք։

Երկրորդ ծնունդ Քամայ՝ որ ծնանի
Մեծրայիմն է՝ և բաժանեցաւ ազգի
մինչև յասորիս․ և առ հմանն յորդւ
ոց ասորք և փիւնիկեցիք։ Իսկ
յորդւոց հրէաստանին՝ հարաւոյ
մինչև յԵգիպտոս։ Իսկ յորդւ
ոց Հնդկաց մեծերկրորդ մինչև ց
՚ի Պաղեստին յորում ծովոյ եզերն
Պոնտոսի ծովն։ Իսկ ՚ի Հնդկաց
Եւրոպի մինչև Սերոտ․ Իսկ ՚ի Հա
րաւոյ Եգիպտոսի մինչև Սերոտ։
ԺԴ Երրորդ ծովն Ս ընկալաւ որ կոչի Ասիա
րեկց ծով․ և Հրեշ երկրորդ ընդ ՚ի
ընդարձակ երկրաւոյ և կայր զերծոյ
մինչև մեծամեծ Պոնտոսի և ամենայն
զերծոյ․ և առ հմանն յորդւոցն հայ
ոց․ Իսկ յորդւոցն Հնդկաց աշխար
հիք։

նիւք՝ և Մարքթօք։ իսկ յարևելից
հիւսիսոյ Սկիւթացօք. իսկ յարևե
լից ազգաւն՝ որ կոչի Արիականք
ամբոստակէք։ իսկ յարևելից հա
րաւոյ Հրկան աշխարհաւն։ Իսկ՝ի
հարաւոյ Մարօք՝ Գեդրօսիօք՝ և Գեդր
մօք՝ և Կասբիւք. մինչև ՝ի մուտս
Երասխայ։ Նոյնպ և զերկիր բա
ժանեալ յերիս. յԵւրօպիայ՝ ՝ի Լի
բիայ՝ և յԱսիայ. և ունի զարևմտա
կան հիւսիսային կողմանէ Եւրո
պիա մինչև ՝ի Տօնաւիս գետ։ Եւ զա
րևմտական հարաւային կողմամբ
Լիբիայ մինչև ցկարմիր ծովն։
Իսկ այսոցիկ սահմանաց յարևելա
կողմ զհիւսիս և զհարաւ զմէջ
Ասիա ունի մինչև ցանծանօթ եր
կիր. վ՜ որոյ մեծագոյն է քան զայլ
հաստատեալ։ Իսկ միջոց աշխար
հի բնակութի մարդկան Պտղոմէոս
զԵրջանիկն զԱրաբիայ ասէ. բայց
ես ոչ հաւատամ։ քանզի Աւետա
րանն զԵրջանիկն Արաբիայ ծագս

երկրի կոչէ ուստի եկն դշխոյն Հա
րաւոյ՝ բայց մէջ լսի՝ որ զմիաչափ
հեռակացութի ունի 'ի ծայրիցն և
յեզերացն. և այն է Նինէ, որում և
աստուածայինք գիրք վկայեն. Թէ
պէտ զչափուցն Պտղոմեայ երկայ
նատարած յարևելս կոյս. այլ զեր
կուս չափս 'ի մի դնելով նկարա
գրեսցուք այսպէս. և հարաւայինն
ութ աւելի գայ. քանզ հիւսիսայինն
ըստ Պտղոմէական չափուն. զոր եր
կու 'ի մի եդեալ կերպագրեսցուք
զերկայնութի չափուցն, ութսուն
ամբողջ պահեսցուք՝ մ̃ զինեղ է. և
զհարիւրն կրկնեսցուք լինել յիսուն,
և այնպ̃ նմանագրեսցուք: Նոյնդու
նակ և ըստ հարաւոյ յայրեցական
գօտեաւն կրկնեսցուք զութն 'ի
չորս. և բերէ ստուգապ̃ զնմանու
թի զՊտղոմէական երկրագրութն:
Իսկ արդ՝ որովհետև բովանդակե
ցաք զհասարակախօսութին. այսու
հետև սկսցուք պատմել զաշխարհ

աւ

տուանձինն ըստ գրոց տեղագրու-
թեցն Պապայ աղեքսանդրացւոյ.
սկիզբն արարեալ յարեւմտէ յՈվ-
կիանոսէ. ՚ի սպանիոյ աշխարհէ։

## Սպանիօք աշխարհն Եւրոպիոյ։

Սպանիա՝ է երեք անկիւնի ձեւ-
ով. կալով ի մէջ ծովուց որպէս
կղզի. սահմանի յարեւմտից եւ հիւ-
սիսոյ Ովկիանոսիւ։ իսկ յարեւե-
լից Պիւռենեանէ լերամբ։ իսկ ՚ի հա-
րաւոյ յունաց ծովուն։ Եւ բաժա-
նին յերիս աշխարհս փոքունս որք
ունին գաւառս բազումս՝ եւ քա-
ղաքս. զորս անուանել յիշատակել
աշխատութիւն անշահ համարեցաք.
եւ ոչ միայն զգաւառս եւ զքաղաքս,
այլեւ խորհեցաք միայն գրել զլե-
րինս անուանիս՝ եւ զգետս հզօրս՝ եւ
զքաղաքս հոյակապս. եւ եթէ այլ
ինչ նշանաւոր իցէ։ Թողլով իւրաց
զթիւս եւ զչափս եւ զմանրամասնա-
բար պատմութիւնս։

Բրիտանացւոց՝ որք են երկու կըղ
զիք՝ի հիւսիսային Ովկիանոսի
՚ի վերոյ կողմանէ Սպանիոյ. և ա-
նուն արևմտեան կղզւոյն՝ Իիռմ
բեռնիա. և է գարեհատաձև
ճղճկեն՝ յորում գետք հզօրք տասն
ևմէց՝ և ազգք բազումք. իսկ անուն
արևելեայն կղզւոյն՝ Բրիտանիա.
որ է մեծ քան զնա՝ և է տղրկաձև
բազմաճիւղ. յորում գետք հզօրք
քսանեհինգ. և յոյժ մեծածաւք
անտառք. և շուրջ զկղզեաւն մա
նունք կղզիք քառասունեհինգ և
Թուղիս մեծ կղզի:

Գաղղիա յարևելից կալով սահմա
նիւ. և սահմանի՝ի հիւսիսոյ,
և յարևմտից Ովկիանոսիւ. իսկ՝ի
հարաւոյ յարևելից յունաց ծո
վուն. և բաժանի Գաղղիայ աշ
խարհս չորս. յորում լերինք մեծք՝
և գետք հզօրք քսանեհինգ. և կղզիք
շուրջ զնովաւ տասնեչորս: ունի
քա

քաղաքն և ազգս բազումն՝ և հզօրս. զայգն փռանգաց։ լինի 'ի նմա գօմէշ սպիտակ և սպանօղ։

Գերմանիա, յելից կալով Գաղղիոյ առ հիւսիսային Ովկիանոսիւ. մինչև ցՍարմատացւոց լերինսն. և ցԴանուբ գետ. որ է Յօզու Ռուսաց. գայ և մտանէ 'ի Պոնտոս ծովն։ և սա մեծ է քան զՅօնաւիս։ ունի Գերմանիա ազգս եօթն՝ յորոց մինն Պունդաք. ունի լերինս անուանիս երեք։ ունի և գետս հզօրս տասնևմի՝ և կղզիս ինն. և անտառս չորս յոյժ մեծածառս. ունի և զերկաթ ակտրութեն։

Դաղմատիա յելից կալով Գաղղիոյ և առ եղի Գերմանիոյ՝ և սահմանի յարևմտից ակամբք Պանոնայ գետոյ. իսկ 'ի հիւսիսոյ և յարևելից նոյն Պանոնայ դարձուածօքն. իսկ 'ի հարաւոյ՝ Յունիոն ծո

ցոյն. և ունի Պաղեստինա աշխարհս վեց՝ քաղաքս և գաւառս բաղումս. ունի և լերինս վեց՝ և գետս քսան՝ և կղզիս եօթն։ Նու լենի՛ ի Պաղեստինայ գաղթան ոմն զերդն՝ Բոնոնոս անուն. որ զկուն ձգէ որսորդաց եւրոց, և այրէ։

Աստալիայ է յարևելից Պաղճիոյ՝ և առ երի Պաղեստինոյ ՚ի հիւսիսոյ կուսէ. և սահմանի ըստ արևմտից և հիւսիսոյ՝ Բամալիացօք, և Սկութ լերամբք. իսկ ըստ հիւսիսոյ և արևելից, Յունականն և Բադրիականաւ խորշիւն. իսկ ըստ հարաւոյ Միջերկրական Պեղագոսիւն։ Նու ունի Աստալիայ աշխարհս վեց. քաղաքս և գաւառս բազումս։ ունի և լերինս. և գետս տասնևվեց. և կղզիս տասնևեօթն. յորոց մին Պոնտիոյ՝ ուստի Պեղասսոնէր։ Սէնի և մայրաքաղաքս երկուս. զհօյակապն Սենոյ և զմեծն Հռօմ, բայց ենյ Աստալիայ

և

և այլք աշխարհք Կօսիկ անուն. 'ի Ակեանոս կղզւոջն. չորսհարիւր մղոնաւ շրջապատելով. յորում գաւառք տասնևչորք. և գետք վեց. և մի Ոսկի անուն լեառն՝ ուր ոսկի և արծաթն հատանի երկրաբուսակ նորև ծնեալք:

Սարդոնիա է մեծ կղզի. հուպ կալով 'ի Ակեանոս կղզին ընդհարաւոյ. երկայն թևով 'ի հիւսիսոյ 'ի հարաւկոյս: Նոյ ունի գետս չորս. և լերինս դժուարս, և ամուր տեղիս: յորում քաղաքք նոյն. և գաւառք քսան: մանունք կղզիք նոյն. և շրջապատութն Սարդոնիոյ եօթնհարիւր ութսուն մղոն:

Սիկիլիա՝ է մեծ կղզի՝ յարևելից կալով Սարդոնիոյ կղզւոյն: Նոյ է Սիկիլիայ երեք անկիւնեք ձևով. 'ի ծայրէ 'ի ծայր հարիւր մղոն. յորում գաւառք եօթն: քաղաքք նոյն.

գետք տասնևութն. կղզիք տասն և վեց։ Լերինք երկու, և Պաւթենոս՝ յորմէ գետք բղխեն. և Ըստականոս՝ որոյ կատարն հրով տոչորի. և է Սիկնիմեայ յոյժ արգաւանդ։

Սարմատացւոց՝ որոյ հասարակն յարևելից կողմ, Օ աղուրայ որ է Պուլղարք Գերմանացւոց՝ առ հիւսիսայն Ովկիանոսիւ՝ մինչև ցանծանօթ երկիր. զոր Պալոք կոչեն՝ և Ջուպիա լեառն, յորմէ ելանէ Տօնաւիս գետ. և ունի Սարմատիա աշխարհս փոքունս՝ և քրիստոնէից զՌուսոն խորեմն, որ է ցամաք կղզի. և 'ի հեթանոսաց բազումս։ Ունի լերինս հինգ. գետս տասնևերեք. փոքրլիճ մի. և կղզիս երկուս։ ունի և քաղաքս երկուս մինն կոչի Աղեքսանդրու. և միւսն Կեդարու։

Թրակացւոց աշխարհն յարևելից կողմ Դալմատիոյ։ և ունի

Թրա

Թրակիայ՝ փոքր աշխարհս հինգ, և մի մեծ ։ յորում են Սկալաւացւոց ազգք քսանևհինգ. որոց փոխանակ մոխին Գունդք. ունի լերինս՝ և գետս՝ և քաղաքս՝ և կղզիս՝ և լիճս. և մայրաքաղաքն զԵրջանիկն Կոստանդնուպօլիս ։

Մակեդոնիայ ելից կալով յունական Պեղագոսին՝ առ երի Դալմատիոյ՝ և Թրակիոյ. ՚ի հարաւ Թողլով զԹեսաղիայ։ Նա ունի Մակեդոնիայ լերինս վեց. և գետս չորս. գաւառս երեսուն՝ քաղաքս տասն և եօթն. ծովս երեք. կղզիս չորս ։ Նա լինի ՚ի Մակեդոնիայ մարմարիօն կանաչ սպիտակախայտ ։

Թեսաղիայ առ երի կալով Մակեդոնիոյ՝ ի մէջ Պեղագոսացն ։ Նա ունի Թեսաղիայ փոքր աշխարհս վեց. զԹսպրուտիդ. զԷ. քաոնիայ. զԷ. տաոկէ. զԹուբիայ զապառած. զԵրիտէս մեծ

մեծ կղզի. և Սպեղեռնիոս ցամաք
կղզի։ Ունի լերինս՝ և գետս՝ և գա-
ւառս՝ և քաղաքս՝ և կղզիս բազում
յոյժ. ունի և մեհեանս երիս,
ծծ—է զԻռայ և զԱրտեմիս և զՊօսեդո-
նոս՝ ունի և մայրաքաղաք զՏոյա-
կայն զԱթէնս. ունի և ջուրս՝ ի
կղզւոջն զՍիւռս՝ որ անպատ-
ճառ այսր անդր հոսի, ուր խորա-
սոյզ եղև Արիստոտէլ։

### Աշխարհ Լէհէաստանայ. ոաքին։

Ռուսինն՝ է որ է Սինկուրուրա.
Մօրխտանիայ. Տինգանի տարա-
ծի 'ի Սեպտէէ առ հարաւակոյս
արևմտեայ Ովկիանոսի։ Եւ ունի
Մօրխտանիայ լերինս մեծ. գետս
տասնևերեք։ այդս տասնևմեկ. և
զՊտունինն Պեգինն, որ է հրադոյն
դաշտ։ Մօրտատանիայն, Կիտուայն,
Իսայն, յեղից կալով Տինգանայ՝ և
տարածանի 'ի հարաւակոյս՝ առ ի
Ռ եղելեօք։ և ունի գետս տասնե
եօթն՝

եօթն՝ և փոքր լիճս երէք՝ և լերինս
հինգ ։ և քաղաքս բաղումս՝ և գաւ-
առս քսանևհինգ՝ և զպղնձափորա
նոց երկիրն ։ լինի ՚ի լերինս այսմիկ
ընտիր Տինաբաուխ · այսինքն է
դեղ կարմիր ։

Ափրիկէ յելից կալով Սօրխտա
նիոյ առ ծովեզերբն · և բա
ժանի Ափրիկէ յերկուս աշխարհս ·
և մի այլ առանձնակի, որ Տրապօ
լիս անուանի ։ Եւ ունի Ափրիկէ
լերինս ութն · գետս տասնևինն ·
գաւառս քառասունևմի ։ լիճս
ութն · ծովս եօթն · կղզիս տասն
ևմեկ ։ և քաղաքս բաղումս ։ և զԿար
կեդոնեայ մայրաքաղաք ։ Լինի
յԱփրիկէ բանջար ինչ Լուսաս
անուն · զոր եթէ ոք ուտէ, զհայրե
նիս մոռանայ · լինի անդ և կարմիր յա
կինդ՝ և եախուտ լինի անդ սևաթ ։
բոյս փափուկ ՚ի ծովու՝ որ ելեալ յա
րևէ յօդ կարծրացեալ քարանայ ։
Բրև

Կիւռենականն, որ է Պենտափօլիս՝ յելից կողմ Ափրիկոյ յերկրի ծովեզեր: Սա ունի Պենտապօլիս գաւառս տասնևհինգ: և գետս երեք. և լիճ մի. և կղզիս երկու. և քաղաքս բազումս՝ և զՀերակլեայն լերինս. և զԱնդաբեր երկիրն. և տեղիս ինչ նորակերպս գաղանուտս. և զերեկորնական պարտէզսն. և քարայրս Լակինեցւոց.

Մարմարականն Լիբիա՝ և ամ Եգիպտոս յելից կողմ Կիւռենական աշխարհին՝ և առ երի ծովեզերն յարևմտէ՝ խորշ երկճղի կարմիր ծովուն. և ունի Եգիպտոս լերինս տասնևերկու. և գուբս երկու չինուածոյս: և լիճս երեք ինքնեղս: և երեք լիճք այլք՝ զորս Նեղօսի վտակքն առնեն. և գետ ունի զՆեղոս՝ որ է Գեհօն: ունի և գաւառս քառասունևմի՝ և քաղաքս բազումս՝ և մայրաքաղաք զՄեծն

Աղէք

Ալէքսանդրիայ․ ունի և կղզիս ՚ի Յունաց ծովուն տասնևմի․ և ՚ի Կարմիր ծովուն երեք։ ունի և զաւազուտ, և զանանձրև երկիրն։

Ենտոս Լիբէ․ որ թարգմանի ներքսագոյն Լիբէ․ յելից կալով արևմտական Ովկիանոսի․ յերի կալով Ափրիկոյ։ և սահմանի ներքսագոյն Եթէօպաւ առ այրեցելով գօտեաւն։ Եւ ունի Ենտոս Լիբի․ լերինս ութն․ գետս քսանևմէկ՝ լիճս վեց․ կղզիս տասնևերեք։ և Ճարակեն Ենտոս Լիբէ՝ ազգք տասնևվեց։ լինին և թռչունք մօտ Ովկիանոսի ՚ի Սպիտակ լերինն․ անցանեն ընդ Ենտոս Լիբէիայ և ռնկեղջերք գազանք յՈվկիանոս ՚ի Նեղոս․ ուր կոկորդիլոս գազանն, և այլք գազանք՝ անցանեն ընդ Ենտոս Լիբէիա․ որք կոչին Նափինթք․ մարդակերպք են և գինեսէրք։

Մերձն Եթէօպիա յերի կալով Նոմոս Լիբիոյ. և վերնոյն Եգիպտոսի առ կարմիր ծովուն. անցանելով զայրեցելով գօտեաւն ՚ի Հարաւակոյս առ Ներքագոյն Եթէօպացւոցն. ցնոյն սահման Նոմոս Լիբիոյ։ Եւ ունի Եթէօպիա փոքր աշխարհս երեք. զՄառբառնայ՝ և զԱզանիայ՝ և զԱմօլօգաս յերիկէ՝ և գաւառս ազգաց երեսուն և վեց։ ունի և գետս երեք. և լերինս տասն. ունի և կղզիս յԱրաբացւոց ծոցին քսան և հինգ։ և ունի զԶմռնաբեր երկիր. և զԽնկաբեր՝ և զԿինամոմոնաբեր գաւառսն։

Ներքին Եթէօպիոյ սկսանի յարևմտական անծանօթ երկրէ՝ յեզրկալով Ովկիանոսի՝ և Նոմոս Լիբիոյ. և ՚ի Հարաւոյ սահմանի անծանօթ երկրաւ. առ որով բնակեալք են Երեկորնականքն Եթէօպայեցւք՝ ՚ի Հարաւոյ այրեցելոյ գօտւոյ

կող

կողմանէ․ մերկք, վիշապամարդք․
և յերինջ ըստ Հիւսիսոյ առ Ովկիա
նոսիւ ձկնակեր Եթէօպացիքն․ յո
րում կենդանի ինչ Տուբուս ա-
նուն՝ ոչխարանման՝ երկակենցաղ
և ձկնակեր․ առ որով Աթակէնք
Եթէօպացիք․ յորում առիւծա
շուն գազանն․ որոյ ըստ Հիւսիսոյ
յերի Եղջերք Եթէօպացիք․ յո
րում կենդանի ինչ նման Օ անալու
թոյ մարդամարմն և անուշահոտ․
առ որով Պերպիկէ, և Պերմու
նայք․ յորում աղծառասէրք՝ մար
դամարտք՝ ընձուղտք․ որոց ՚ի Հա
րաւոյ մինչև ց՚Եդոս աշխարհ մի
Եթէօպացւոց՝ յորում փիղք սպի
տակք․ եղջերակնճիթք․ և վա
գերք․ յորոց յարևելից լերինն՝ յո
րում վագերաձիք, և այծամարդք,
և ինձք գեղեցկախայտուցք։ Եւ աս
ցա՚ի Հարաւոյ աշխարհ մի առ ան
ծանօթ երկրաւ․ յորում է գազան
ինչ կանացի ունելով զգլուխ և
ձեռս՝

ձեռս՝ և զանձն չորսոտանի։ այլ մարդակերպ ինչ մերկ գազան շանակնձիթ՝ և մեծականջ՝ ագևոր․ ոտն զառիւծակապիկ․ որոց յելից բարձրագագաթունք Եթեօպացիք․ և այլք մինչև ցլուսնի լեառն․ յորում լինին քօշք սպիտակք՝ զօրաւորք և բռնաւորք․ որոց յելից կուսէ Պաբսացիք՝ և ներքոյ սոցա մարդակեր Եթէօպացիք․ յորում գազան ինչ հրաշունչ վարազանման․ և Սաղամանդր գազան՝ որ նմանէ կոկորդիլեցի․ անցանէ ընդ հուր՝ և չիջուցանէ զնա։

Աշխարհ ընդհանուր Ասիայոյ։

Սուաջին բաժին երկրի ընդ հանուր Ասիա է։ և ունի կողմունս․ և նախ զկողմն միջերկրայս՝ որք մտանեն ընդ մէջ Յունաց ծովուն և Պոնտոսի։

Բիւթանիայ, յելից կալով Թագաւորական քաղաքն Կոստան

գինուորին · և ունի Լիթուա-
նիայ՝ լերինս՝ և գետս՝ և լիճս՝ և կղ-
զիս · ունի և մայրաքաղաքս մեծա-
մեծս երեք՝ զՎիլնեայ · զՏռօկիլ-
դան · զՎլադիմիրդայ ։ որք ունին ընդ-
հիրեանս քաղաքս տասնևերեք · և
դղեկսաքաղաքս ծովեզերեայս՝ և վա-
ճառատեղիս · ըմպի և ի Լիթուա-
նիայ հող ազնուական՝ զոր մանրաղա-
ցեալ և ցանեալ ՚ի քանդուկս խեճ-
ցորենոյ, ԽԽի ոչ ուտէ ։

Մոսկովայ՝ որ կոչի Լեհաստանատու-
առ. երկիրուրով Լիթուանիոյ · և
ունի Մոսկովայ լերինս երեք՝ գետս
հինգ · երկ զիս երկու · քաղաքս քառա-
սուն և մէկ ։ և մայրաքաղաք ծովե-
զերայ զԿլիպեդն՝ յորում տաճարն
է Լ.Յ անուանեալ հրաշից ։

Լ · սիա առանձնակի յերի կարով
· Մոսկովայ առ ծովուն · և ու-
նի Լ · սիա վիճս աշխարհս քաղա-

զԵդեսիայ · զՆուսիբին · զՃոյնա·
Դէ-Դու- զԿաթիայ · ունի Ասիա լերինս
ֆայ եօթն՝ կղզիս տասն · գետս եօթն՝ քաղաքս տասնեւհինգ · եւ Մայրաքաղաք զԵփեսոս՝ եւ այլ եւս վեց ։ եւ լինի յԱսիայ Անղոաքէ 'ի խաժէ Օսմանցոց ։

Լիկիայ յելից կալով Ասիոյ ։ եւ ունի Լիկիայ լերինս երկու · գետս երեք ։ կղզիս հինգ ։ քաղաքս երիս ։ եւ մայրաքաղաք զՄիւռնիայ · եւ լինի Լիկիայ խունկ Օսուդերն՝ եւ Տրաւէ · 'ի ծառոյ ծորելոյ որպ զխիժ՝ լոյծ որպ մեղր · կամ որպ մրուր ։

Փռիւգիայ յելից կալով աւանձ նակամ Ասիոյ՝ յերի Լիկիոյ · եւ ունի յինքեան Փռիւգիա աշխարհս երիս ։ զՊիսիդիայ՝ որ ունի մայրաքաղաք զԱնտիոքիայ՝ ուր ասեն չինեալ զառաքեալն Պօղոս, եւ այլ քաղաք քսանեւվեց ։ Նաեւ յորոց մայրաքաղաք

ղաք Լաւոդիկայ՝ և այլք քաղաքք
քառասուն՝ և աշխարհք երեք։

Մաղուսալիայ․ որոյ Մայրաքա
ղաք Սիդօնիա․ և այլ քաղաքք
երեսուն․ և ունի լեառն զԼի
բանոն․ և գետս հինգ․ և լիճս տասն
և չորս․ և դաշտս մեծամեծս։

Ոնորիա՝ յելից կալով Բիւթա
նիոյ․ և առ երի Փռիւգիոյ․
մինչև ցՊոնտոսի ծովն․ և ունի
Ոնորայ մայրաքաղաքս զԿլօդիու
պօլիս․ ընդ որով այլ քաղաքք
հինգ։ և գետ ունի զՊարթենիոս
զերեք վտակեան․ յայսմ աղբերբ երդ-
նուին դնեք վն անչափ ցրտութեն։

Փեղղագօնիայ․ յելից կալով Ոնո
րիոյ աշխարհին․ որ է 'ի ծո
վուն Պոնտոսի․ ունի գետս երկու․
և մայրաքաղաք զԳերմանու պօ
լիս․ որոյ բերդն Գանգր և քաղաքս
 հինգ․

հինգ. և բերդս տասնևմի. գաւառս վաթսունևմէկ։

Գաղատիայ առաջինն յելից կայ ըստ Փռիւգիոյ. և առ երի Պափղագոնիոյ. և լեառն ունի զերկ բորդ Անդիմոն. և գետս Օ խնոն. որ յառաջասացեալ աշխարհն Թափի։

Գաղատիայ երկրորդ յելից կայ ըստ Փռիւգիոյ. և առ երի առաջնոյ Գաղատիոյ. մինչև 'ի Պամփիւլիայ։ ունի լերինս՝ և գետս մանունս. որք յառաջասացեալ գետն անկանին. և որք զլիճս առնեն։

Պամփիւլիայ յելից կայ ըստ Լիկիոյ. և առ երի Գաղմատիոյ. ունի յինքեան աշխարհս փոքունս հինգ. և լեառն մէկ, գետս երեք. և կղզիս երկու. և քաղաքս։ լինի 'ի սմա խունկ Տիւռակինթոյ՝ 'ի փորոյ կեբածոյ ձիձոյ։

Սորեայ

Սօրեայ յելից կալով Պամփիլիոյ·
առ երի ծովուն հանդէպ Կիպ
րոս կղզւոյ· և ունի լեառն զՏօրոս·
և գետս զՄխմադոս· և է՛ ի նմա մայ
րաքաղաք Սելևկիա· և այլք քա
ղաքք քսանևչորս· և լինի յաշխար
հիս յայսմիկ խունկ դեղ բակոձոյս
Սպուդոմփիոն· Կաղամբեւ· ամենե
քեան 'ի ծառոյ ծորելոյ 'ի ձձոյ
միոյ կերոնածոյ։

Լիկոնիա յելից կալով Պաղատիոյ
և առ երի Սօրեոյ ունելով զտա
րածութիւն իւր 'ի դաշտս ընդար
ձակս· և զնոյն գետս· և լերինս փո
քունս· և լինի երեք։

Կապադովկիա երկրորդ յելից կա
լով Պաղատիոյ՝ և առ երի Լիկո
նիոյ· ունելով լերինս մանունս· և
գետս· և լայնութիւն տարածեալ 'ի
դաշտս արձակս։

Ելենոպոնտոս յելից կալով Պամ
փլագոնիոյ· և առ երի Կապա

դովկիայ և ծովու․ ունի լերինս փա-քունս բազումս․ և գետս հզօրս․ և Լիւկոս․ և այլ մանունս։

Կապադովկիայ առաջին յելից կո-ղմ երկրորդ Կապադովկիայ․ և առ երի Պօլեմոնական Պոնտոսին։ ունի լեառն զԱնտիտօրոս՝ և այլս փոքունս․ և գետս զՍերոս և զԱլիս։

Պոնտոս Պօլեմոնական յելից կո-ղմ Ելենոսպոնտոսի՝ առ երի Պոն-տոսի ծովու․ ունի լերինս փոքունս և դժուարավայրս․ և գետ զԹերմոնոս․ և այլ մանունս։

Կիլիկէ ըստ նոյնեան առաջին և երկրորդ՝ յելից կողմ Լիկոնիայ և Սօրիայ՝ յերի Կապադովկիայ առաջ-նոյ․ լեառն ունի զՏօրոս․ և գետս վեց․ և մայրաքաղաքս երկու․ զՏար-սոն․ և զԱնարզաբայ՝ և այլ քաղաքս բազումս․ և բերդս երեքհարիւր վաթսուն և հինգ․ և դրունս երկու՝ ելա

ելանելոյ աստերեաց. և Կիլիկէ ամենա բեր. Հանգոյն երկրին յորդանանու:

Կիպրոս կղզի յելից կալով Պամփիւլական Պիղագոսին առ երի Սորիոյ և Կիլիկեոյ. և ունի Կիպրոս լեառն զՈղիմպոս. և գետս երեք. լինի 'ի նմա աղանդամոյն 'ի ցօղոյ անկեալ զխոտովք կոռէի. Թափիչ վարոցս՝ և մօրուս քօշից. և ունի Կիպրոս զսահմանս իւր յերկայն մասունս երեքհարիւր երեսուն մղոն. իսկ 'ի լայնն մասն մի:

Հայք յելից կալով Լիկիոյ առ Տորոս լերամբ. և ունի լերինս երկս. գետս չորս. և գրունս երկուս ելանելոյ Սորուոց:

Առաջին Հայք յելից կալով առաջնոյ Կապադօկեոյ՝ առ երի երրորդ Հայոց. և սահմանի յելից Եփրատաւ՝ և լեառն ունի զԱր գէոս՝ և գետս զԱլիւս. և այլ մանունս

Երկրորդ Հայքն. որք կան յետ Կապադովկիոյ. և երկայն տարածի մինչև ց Եփրատ. և ունի այլ գետս երկու. և լերինս բազումս մեծամեծս քսանևերկու:

Կապա- դովկոյ Պոնտոս Կապադովկիոյ. յետ Կայ կալով Պօղոմենական Պոնտոսին՝ առ երի ծովուն 'ի ցամաքական լերինսն. որք բաժանեն զնա, և ընդ Մեծ Հայս: ունի լերինս երիս. և գետս չորս:

Մ՝ծա նաւապարէյան Միջերկրեայք նուէրցեալք.

Սարմատացւոց աշխարհին հասարակն է. որ բաժանեալ է արևելեան ծայրիւն, և Ճուպիաւ լերամբ. և Տանայիս գետով. և Մէոտիս ծովակաւ. և անտի ընդ Կովկասային լերինսն առ Ալ րօք և Գ. զուգանիւք, մինչև ց Կասբից ծովն. և ունի Սարմատիայ լերինս զՀ ամթարինն. և զՉ

Զիա

Զինականն. և զայլ լեզուս, եգետս բա
զումս. զի օթանասնամտակն Եթիլ
յորում ամբանայ ազգն Բարսլոց :
Եւ բնակին ՚ի Սարմատիայ ազգք
բազումք. որք են այսոքիկ : Խազիրք·
Բուլխք· Բարսեղք· Ափշեղք· Ափ
խազք Թագաւորական · Սարմատք·
Զիակերք · Նախճամատեանք· Աշ
լակերք· Միւսիլիկացիք· Միւթուլիգա
ցիք · Ամազոնք · Ազոանք · Խե
բուրք· Բուգետք· Սկիւթք: Ար
գաւետք · Սարդուլք · Թակուլք·
Արգոզք· Պաճանք· Փինչք· Պոշ
ալք· Հոնք· Սափուրք· Ոսանարք·
յորում Ազոան դուռն. և Ոսաքին
դուռն · Թմուշք· Խուշք· Բուս
տրք· Մարդակերք · Յխաւատք·
Պուդամակարք · Պոճիճակք·
Պխգայք · Պ էք · Կատապատա
կանք · Ալուտականք · Խենօթք·
Րեղայք · Դ՚իւղայք · Խեղայք·
Կաղբք · Փուլխք · Րոշանք · Խա
րանք · Թաւասպարոյք · Հեճմա
տակք·

տանք. Խժմանք. Փասխք. Խուխա-
փէքոնայք. Բայքանք. Սագրութք.
մինչև ցԿասբից ծովն. յորս և բա-
զուկն Կովկասու հայի. ուր ածեալ
է պարիսպն Դարբանդայ. աշտա-
րակ ահագին 'ի ծովուն կացեալ.
իսկ 'ի հիւսիսոյ նը՛ հոնք. և քա-
ղաք Նոյա Սառաչան՝ և այլք ընդ-
նմա. և թագաւորն հիւսիսոյ է
Խականն. որ է խազրաց տէր. և
դշխոյն թագուհի է խաթունն. որ
է կինն խականայ 'ի Բարսղաց ազ-
գէն։

Սողքիան այսինքն է Սոգեր. յելից
կալով Պոնտոս ծովու՝ առ երի
Սարմատիոյ. և ունի Սոգեր փոքր
աշխարհս չորս. զՄառնէղիտ. զՏ՝գ-
ուլիկէ. զՍազիւ. զՂ՛անիւ. որք
են Սաւտիք։ ունի լերինս բա-
զումս. և գետս. և դաշտս. և քա-
ղաքս՝ և բերդս. և այլ գիւղաքա-
ղաքս՝ և այլ վաճառատեղիս։

Սե

Սեւխայ այսինքն է Սեւ լեռք․ յելից
կալով Լեգերայ․ առ երի Սար
մատիոյ՝ առ Կովկասու․ մինչեւ ցա
ղուանից սահման առ Կուր գետով․
եւ գաւառք են ՚ի Սիրս այսոքիկ․
Կղարջք․ Արտահան․ Տուշէթ․
Ջաւախ․ Սամցխէ․ Տձորա․
Թռուրգա․ Սաթլիսխ․ Տառնէ
ասխ․ Սանկղեաց փոր․ Բռուէշ
փոր․ Փողնափոր․ Թռրեղք․ Կան
գարք․ Տաշիր․ Խաչաւ․ եւ Պռուան․
Ղամխա․ Բոզիթ․ Կրիզլ․ Կոսխ․
Սածխուձէթ․ Կուռէթ․ Նոր
ծայ․ Խերկ․ Թղիանէթ․ Կանիսխ․
Յինոսձմայ․ Ռաղալէթ․ Օա
փան․ Բեէթ․ Ջելթ․ Սեւցխէ․
Բուշէդա․ Տաք․ Պարուար․
Օորբափոր․ Ջօրափոր․ Խանցխե․
եւ Բողաք Սրաց Տփխիս․ Տամ
շողդէ․ Սխիթայ․ ուր Տր․ խաչն
է․ ունի եւ բերդս՝ եւ գետս՝ եւ ծովս
լի ձկամբք։

Ալուանիայ. այսինքն Աղուանք յե-
լից կողմ Վրաց. առ երի Սար-
մատիոյ՝ առ Կովկասաւ մինչև ց Կաս-
պից ծով՝ և ց Հայոց սահման առ-
Կուր գետով: և ունի աղուանք
դաշտս արգաւանդս. և գետս բա-
զումս, և եղեգունս հզօրս. և քա-
ղաքս՝ և բերդս. և գաւառք են
այսոքիկ. Լիբուխ. Բանբիճան.
Հողմաղ. Շաքէդ՝ Լուօւ. Շա-
քէ ոստան. Համբասի. Մործայա-
նան. Բաղադաշտ. Խեաղական.
և այլք գաւառք. զորս ՚ի Հայոց
հանեալ են. Շակաշէն. Գարդա-
ման. Կողթ. Բուստ. Փառնէզ.
Կաղթազունէ. Ուէ. Փուկքա-
տակ. Աստուոստակ. Աստպայիակ.
Մեծ Կափանք. Մեծ Իրանք. Գար-
ծկանք. Մոխանք. Գիխանք. Հարջ-
լանք. Սկունիք. Փոքր Համանդ-
Րստիսականն. Աստաստատաւի.
Րերձորս. Մտաստուուս. մինչև ց
Խառնումն Երասխայ ՚ի Կուր գետ:
Մեծ

Մեծ Հայք յելից կալով Կապուտակիայ և փոքու Հայոց՝ առ Եփրատ գետով. մերձ 'ի Տօրոս լեառն, որ բաժանէ զնա 'ի միջագետաց. և 'ի հարաւոյ սահմանի առ Ասորեստանիւ. և դառնայ առ Ատրպատականաւ ը̃ Մարս մինչև 'ի մուտս Երասխայ 'ի Կասպից ծով։ Իսկ ըստ հիւսիսոյ առ երի կալով Աղուանից և Վրաց. և Եգերայ՝ մինչև ցնոյն դարձուածն Եփրատայ 'ի հարաւ կոյս։ և ունի Հայք լերինս անուանիս, և գետս մեծամեծս և մանունս, և ծովակս երեք. Եւ ունի Մեծ Հայք փոքր աշխարհս տասնևվեց. որք են այսոքիկ։

Առաջին Բարձր Հայք. այսինքն Կարնոյ կողմն։ Չորրորդ Հայք։ Աղձնիք. Տուրուբերան. Մոկք. Կորճայք. Պարսկահայք. Վասպուրականք. Սիւնիք. Արցախ. Փայ

տակ

տակարան Ուտիաց. Գուգարք. Տայք. Այրարատ։

Արդ կամիմ զսոսա մասնաւորաբար պատմել. ընդ է առաջին չինչ աշխարհեցէ 'ի գիր եւ 'ի ...։

Արդ ունի բարձր Հայք գաւառս ինն. Դարանաղի. Արիւծ. Մնձուր. Եկեղեաց. Մանանաղի, Դերջան. Սպեր. Շաղգոմք. Կարին. եւ ըստ անուանդ արդարեւ բարձր է Հայք քան զամ երկիր. քանզի ընդ չորս կողմունս արձակէ գետս. ունի եւ լերինս երէք. եւ երէս բազումս. եւ հաւս պիտանիս, եւ ջերմուկս, եւ աղս, եւ զայլ պատրաստութիւն՝ եւ քաղաք զԿարնոյ. որ է Թէոդուպօլիս։

Չորրորդ Հայք յերի կայ բարձր Հայոց. եւ գաւառք են 'ի նմա ութն։ Խորձէն. Հաշտեանք. Պաղնատուն. Բալահովիտ. Ծոփք. Շաղախ. Անձիթ. Գորեք. Դեգիկ։

գինկ: և ունի չորրորդ հայք բերդս. և գետս, և լերինս. և բիւրեղս: ունի և երէս՝ և հաճս՝ և ձկունս. և 'ի գազանաց զԱռիւծ:

Աղձնիք առ Տիգրիս գետով կայ. գաւառս ունի տասն. զԱրզն. զՆփրկերտ. զԿեղ. զԿեթէկ. զՏատիկ. զԱզնուաց ձոր. զԽերհէթ. զԳզեխ. զՍալնոյ ձոր. զՍասուն: ունի զնաւթ և զերկաթ. առաւել ևս զխնթոր. և հաւ զդեզակ:

Տուրուբերան. յերի կայ չորրորդ հայոց, և գաւառք են 'ի նմա տասնևվեց: Խոյթ. Ասպակունիք. Տարօն. Աշմունիք. Մարդաղի. Դասնաւորք. Տուարածատափ. Դալար: Հարք. Վարաժնունիք. Բզնունիք. Երևարք. Աղիովիտ. Ապահունիք: Տկորի. Խորխորունիք: ունի և ծով զԲզնունեաց. յերկայն հարիւր մղոն. և 'ի լայնն վաթսուն: ունի

ունի և զԴապատէ․ և զՄեղր․ և զմաշկամիրգ։ և զսոփիտակ նաւթ․ և զերկաթ։

Մոկք յելից կողմ Աղձնեաց՝ ունի ամուրս Տօրոս լերինն․ գաւառս ունի ԺԱ․ զԻշայր․ զՄիւս զԻշայր․ և զԻշոց գաւառ․ զԱռուէնից Ձոր․ զՄիջա․ զԱրանձնակ մոկս․ զԱրքայից գաւառ․ զԱրգաստովիտ․ զՃերմաձոր։ ունի և մրգաց զՀրշակ․ և զմանրագոր․ և 'ի գազանաց զԱնձ գեղեցկախայտուց․ և 'ի հաւուց զԱրքաւ։

Գաւհրա շուն

Կորճայք յելից կայ Մոկաց առ Ասորեստանիւ։ և Գաւառս ունի տասնևմէկ․ զԿորդուս․ զԿորդրիս․ զՏմորեանս․ զՄոգոռեանս․ զՊասիրանս․ զԿարթունիս․ զՃահուկ․ զՓոքրաղբակ․ և ունի զՏուրկ․ և 'ի պատից Ճագանակ։

Պարսկհայք յելից կայ Կորճէից. և առ Ատրպատականաւ: Գաւառս ունի ինն. Այլ. որ է Կուճիձան. Մարի Թորակն. Աղուերս. Առնա. Տամբեր. Զարեհուան. Զարուանդ. Հեր. և ունի երեղձիւն. և զԱյծեամն:

Վասպուրական է 'ի մէջից Պարսկահայոց և առ երի Կորճէից. Գաւառք են նր երեսուն և եօթն և են այսոքիկ. Ռշտունիք. Տոսբ. Բուզունիք. Արճիշակովիտ. Աղաւխ. Բառխիզակովիտ. Կաղանովիտ. Գառնի. Բաղախովիտ. առ Բերանի. Բաժունիք. Առնոյոտն. Անձևացիք. Տրպատունիք. Երուանդունիք. Մարդաստան. Արտազակէ. Աղբակմեծ. Անձախաձոր. Թոռնաւան. Ռուաշուոտ. Կրճունիք. Մեծնունիք. Պալունիք. Գուկան. Աղուանդռոտ. Պարսպատունիք. Արտաշիսեան.

տան · Արատուանեան · Բագրան ·
Գաբիթեան · Գաղրիկէն · Տանկ
րնայն · Վարաժնունիք · Գողթն
գինեւէտ · Նախչուան · յորում քա
ղաքն է եւ Աստապատ :

Սիւնիք յելից կայ Այրարատոյ ընդ
մէջ Երասխայ եւ Արցախայ ·
եւ ունի գաւառս երկոտասան ·
Երնջակ · Ճահուկ · Վայոցձոր ·
Գեղարքունի · եւ ծովն Սոդք ·
Աղահեճք · Ծղուկք · Հաբանդ ·
Բաղքձորք · Արեւիք · Սիսական ·
լինի 'ի նմա մուրտ · եւ գերերի · եւ
նուռն , եւ ամուր տեղիք :

Արցախ յերի կայ Սիւնեաց · եւ
գաւառք են նր տասնեերկու ·
զոր աղուանք ունին : միւս Հա
բանդ · Վակունիք · Բերդաձոր ·
Մեծ Իրանք · Մեծ Կուանք · Հարճ
լանք · Մուխանք · Պիանք · Պայծ
կանք · Սիսական · Քուստակ · Փաս
տեմ ·

տիմ. Փառնէս. Կոլխթ. յորում լինի քարախունկ։

Փայտակարան յելից կայ Ուտւոյ առ Երասխաւ։ գաւառս ունի. տասնևերկու։ զոր այժմ Պարսկատականք ունին։ Հրաքոտ Պերոժ։ Վարդանակերտ։ Եօթնփորակեան բագինք։ ունի Ատշի բագուայ։ Բաղանռոտ։ Առոս։ Բախժանհան հանի։ Աթլի։ Բագուան։ Սպան դարանպերոժ։ Որմզդպերոժ։ Ալեւան. լինի 'ի նմա Բամբակ անբաւ և Գարի ինքնաբոյս։

Ուտի առ մին կայ Երասխայ՝ ընդմէջ Արցախայ և Կուր գետոյ։ ունի գաւառս՝ զոր Աղուանք ունին եօթն։ Առանռոտ։ Տուի։ Տոպացեան։ Աղուէ։ Տուչքատակ։ Գարդման։ Շիկաշէն։ Ուտի առանձնական. յորում Պարտաւ քաղաք. լինի 'ի նմա Զիթենի, Նարնկենի. և 'ի հաւուց Կատակ։

 Գու

Գուգարք 'ի մօտից կայ Սեւանայ։ և ունի գաւառս ինն՝ զոր Վիրք ունին։ Ձորոյ փոր։ Ծոբոփոր։ Կողբոփոր։ Տաշիր։ Թռեղք։ Կանգարք։ Արտահանք։ Ջաւախք։ Կղարջք։ լինի 'ի նմա Անալութ։ և հաճարածառ. և Սերգեւիլ՝ և Տօսախ։

Տայք առ երի կայ Գուգարայ՝ ամրոցօք և բերդօք կառուցեալ։ և ունի գաւառս ինն. զԿողը։ ըղ Բերդացփոր։ և զպարտիզացփոր։ զՃակատ։ զԲուխայ։ զՈքաղէ։ զԱզորդ։ զԿափոր։ և լինի 'ի տայս Թուզ՝ և Նուռն։ Աղտոր։ Սերկեւիլ. Պտղախակ և Նուշ։

Այրարատ 'ի մէջ կայ յառաջասացեալ աշխարհացդ. և գաւառք են 'ի նմա քսան։ Բասէնք։ Գաբեղեանք։ Աբեղեանք։ Վահագունիք։ Արշարունիք։ Բագրեւանդ։

Ծաղ

Ծաղկոտն : Շիրակ : Վանանդ : Արագածոտն : Ճակատք : Մա-
սեացոտն : Կոգովիտ : Աշոցք : Նիգ :
Կոտայք : Մազազ : Վարաժնունիք :
Ոստանն դվնայ՝ մինչև ցդաշտն
Շարուր : Եւ ունի Արարատ լե-
ռինս և դաշտս՝ և զամ պարարտու-
թի : և ծովակն Գայլոտոյ : և
որդն սխշաբերեալ յարմատոյ ուն
զարդ կարմրութե գունոյ : և զմայր
եկեղեցեացն, 'ի Թագաւորաբնակ
և յարքայանիստ Վաղարշապատ
քաղաքի :

[illegible] :

Ասորիք յելից կալով Խուրեանց
ծովուն՝ և Հիւսիսոյ Հրէաստա-
նի : և ունին Ասորիք փոքր աշխարհս
ութն . և լերինս անուանիս զԼի-
բանան . և զԿարմեղոս . և գետ Հզօր
զՅորդանան . և քաղաքս բազումս .
և Անտիոքաքաղաք զԱնտիոք . և զԴ-
Դամասկոս . զԿնշրին . զՍամարիայ .
և

և դրունս երկու․ և վայրս ընդար
ձակս՝ և պխտանիս՝ և բարիս։

Հրէաստան յելից կողմ Փիւնի
կական Պիլիստացւոց և սահմանի
Եգիպտոսի․ և Արաւած Արա
բիաւ․ և ունի Հրէաստան աշխարհս
երեք․ զԳալիլեայ․ զՍամարիայ․
զՅուդայիա․ և Լիճն երկու․ զՏիբե
րադա և զԱսփալտ ծովն․ և գետ
զՅորդանան․ և մայրաքաղաք ըղ
օրէն Եէմ․ և է Հրէաստան քաղց
րաբեր և պտղալից․ և է անուշա
հոտ․ որ բղխէ զկաթն և զմեղր։

Արաւածն Արաբիայ յելից կո
ղմ Եգիպտոսի․ և արևմտեան
ծոցիւ Կարմիր ծովուն․ ընդ որ
անցն է Նիլի․ յերի կողմ Ասորւոց
և Հրէաստանի․ և ունի Արաբիայ
Արաւած փոքր աշխարհս հինգ․
զՆաձկաստան․ և զՓաւնիկիաս
ուր զաւուն Աբրահամու բաշխա
ղէն․

զէն. և այլևս երեք աշխարհս. և գետս ոչ մի։

Միջագետս յելից կալով Ասորւոց առ Եփրատ գետով. և մտից Ասորեստանի. առ Դգլաթ գետովն. յերի կալով մեծ Հայոց. ունի լեռինս երկու. և գետս երկու. և քաղաքս բազումս. յորոց մինն է Ուռհայ. ուր անձեռագործ պատկեր փրկչին։

Բաբելոն յերի կալով Միջագետտաց առ Կղօդաւ. մինչև ց Պարսկային ծոցն. և ունի աշխարհս չորս. զԿողա. զՊարսա. և զԲաբելոն. զՔաղդեան. և գետս ունի զԵփրատայ վտակսն. և զԴկլաթայ. ունի և այլ քաղաքս բազումս՝ և գաւառս. և լինի՛ի սահմանս այսորիկ ակն Մարդիան և Բոկէքար. և է Բասրա ամենայլից վաճառօք, և եկք նաւուց՛ի Հնդկաց և յամ կողմանց յարևելից։

Անապատն Արաբիա յերի կա-
լով միջագետաց ընդ հիւսիսայ-
յելից կալով Ապառաժ Արաբիոյ
և 'ի մտից Խուժաստանի։ և ունի
Արաբիա ազգս ինն. բայց լեառն,
գետ և ոչ մի։

Երջանիկն Արաբիա. յերի կա-
լով Ապառաժ և Անապատն
Արաբիոյ. մտանէ ընդ մէջ խոր
շից Կարմիր ծովուն որպէս ցամաք
կղզի. և ունի յինքեան ազգ մի.
և գաւառս տասն և չորս. լերինս
տասն. գետս չորս. աղբիւրս մի. և
կղզիս բազումս. և աշխարհ ամենա
բեր և ամենագիւտ. և է որ յիւրմէ
աշխարհէն է. և է որ 'ի վաճառացե-
կելոց. 'ի Ճենաց և 'ի Հնդկաց. գտանի
անդ ոսկի և ակունք պատուականք.
խունկք բազումք. և իւղք անու-
շունք. փայտք անփուտք. և անտի
էր Տիկինն Սաբայ. և բնակիչք
աշխարհին ոմանք քաջասէրք, և ո-
մանք

մանք ապխտակասեք · Թխագոյնք
քան զմեզ · և խուզք անոյշք 'ի նմա
և ծաղիկք տասնևվեց · Զալէ ·
Գաւու · Սողապ · Մախակ · Րեհ
գի · Լախունա · Խալար · Բուխ
տակ · Նարդոս · Բալասան · Բանն ·
Ճասմիկ · Նարդան · Վարդ · Մա
նուշակ · Մարզգուշ ։

Սարք որք կոչին Բուստիքանց
կոխք՝ յերի կալով հայոց · և առ
երի Կապելից ծովուն ։ ունին յաշ
խարհս զայսոսիկ · զՏորպատա
կան · զՍնէ · զՊիրլան · զՄուկան ·
զՊիրլուման · զՀմատան · զԱամբ
վար · զՍպարատան · զԾմ · ըզ
Բչոշ · զՍուճան · ունի և լերինս
և գետս · և զծովակն որ կոչի Բա
պոտան · ունի և քաղաքս բազում ·
յորոց մինն գանձակ շահատան ։

Երուսաստան՝ որք կոչին Տորեա
տան · այսինքն Մուծղ · յելից
կալով

կալով Միջագետաց՝ առ երի
Հայոց։ ունի լերինս և գետս. և
քաղաքս զՆինուէ։

Եղիմացիք են. որք կոչին Բուստիխորասան. յելից կալով Պէկեադայ. և ՚ի մտից Պարսից. և ունին Եղիմացիք աշխարհս փոքունս զայսոսիկ. զԽուժաստան. զՍած. զՄասպան. զՄիհրան. զԲրտակ. զԲաշտար. զԿարմական. զՆրանաստան. զԿարկաւառ. զՆոստար. զՇխրական. զՄարձին. զՍրհէն. ունի և քաղաքս հինգս. և գետս չորս. յորոց մինն է Գունդի շապուհ. յորում այնիւ Շաքարն գործին. ունի և կղզիս երկու համդէպ խուր ՚ի Պարսկային ծովին։

Պարսք՝ որք կոչին Բուռտիստեմ առօղ. յելից կալով Խուժաստանի. և առ երի Մարաց. ունի յինքեան
փոքր

փոքր աշխարհս քան. զՊարս.
զԻսպահան. զՄեշուն. զՀակար.
զՊանայիտ. զԿրման. զԼուրան.
զՄակուրան. զՍինդ. զՀինդ. ըզ
Սըրան. զՊէտ վաշտ. զՍագաս
տան. զԶապլաստան. զԴւեր. զՍեդ-
զՄահիկ. զՍաուն. զԽոճեհրաս
տան. զՊալհ. զՏրբուհայ. ունի և
դեստ և քաղաքս բազումս. յորոց
մինն է Նեշիր պարհսան քաղաք.
յորում աղնիւ Մարգարիտն ելա
նէ. և Պիօհարք մարգարտին՝ այս
է. գրակ վեցդանգեան. արժէ
քառասունհազար Պուլիայ. հինգ-
հարիւր. միջայիս երէք դանկա.
չորս Պարմուշքա. Պարմուշիս.
Հաւթադրամ. Հաշտադրամ.
Պահադրամ:

Երէք. որք կոչին Բուստի Խորա
սան. յերիկալով Մարաց. և Պար
սից, մինչև ցՀնդիկս. և յերի Սըկա
նի ծովուն. և աշխարհք են Տըրաց
այսո

այսոքիկ. Կոմս. Միլան. Պըշանծր. Սըրում. Կրոմանտա. Հրեկատէշան. Լոտիմանակ. Բաժնիւ. Մողկան. Պոլկան. Մոնայկ. Հրում. զՄակիւրոս. Լաւխծեր. Պըզին. Մուազակ. Մարջան. Սանտան. Փակատան. Բահրդ. որք են Պարթևք. Պոլմատ. Լարիմանակ. Ո երի. Սարիկան. Պոլքոն. և ունե արիք. լեռինս և գետս և կղզիս բազումս. լինի հրամուշկ. թեպետ և ոչ ազնիւ. և կղզի մի է հանդէպ Մրեաց 'ի Հնդկաց ծովուն. յորում Թագուհիք, լինին երեք թզեան հասակաւ. որք և պատերազմին ընդ խորթոց հաւուց մն Ճարակելոյ նոցա զանդաստանս Թագկաց.

Սկիւթիա՝ որք են Մպախտարք. այսինքն Թուրք. որք սկսանին Իւթիլ գետոյ մինչև ցՆամաւօն լեառն. և անդր ձգի մինչև ցՈվկիանոս. և Նամաւօն է լեառն բարձր և երկայն

կայն քան զԻմ լերինս. և ունի Սկի
թիա ազգս քառասունևչորս. Սո
գիք. Թուխարիք. Հեփթաղք. և
այլք Խուժադուժք անուանք. և
ունի Սկիթիա լերինս. և գետս բա
զումս և հզօրս. և դաշտս անա
պատս. և ջերմ երկիր և անջուր.
և է ՚ի նմա հրադոյն դաշտ. և են Սո
գիք հարուստք և արուեստաւորք.
վաճառականք, որք բնակեալք են
ի մէջ Թուրքաստանի և Պարսից
աշխարհին:

Հնդկաստան յելից կողմն Պարսից
աշխարհին. և առ երի Սկիւթա
ցւոցն. և է Հնդիկք բաժանեալ
յերկուս աշխարհս. զորս բաժանէ
Գանգէս գետ. որ է Փիսոն. և
արևմտեան կողմն ունի ազգս յի
սունևհինգ. իսկ արևելեանն եօթա
նասունևերկու. ոմանք Մարդա
կերք են. և ոմանք Վայրենակերք.
ոմանք Ագևորք. և այլք Կարճահա
սակք,

տակք, Տափակաքիթք. լայներեսք.
Սպիտակք: և ոմանք Սեւք
իմաստակք. որք գործս անիրաւու
թե ոչ գործեն. և զմարմինս կեն
դանեաց ոչ ուտեն. ունին Հըն
դիկք լերինս, և գետս, և կղզիս
բազումս. լինի 'ի Հնդիկս երե
Համորանման աւեղջեր. որ սպանա
նէ զԱռիւծ. և ահեղ երե. և այլ
գազան նման Առիւծու՝ բայց կըն
ճիթն նուրբ է և երկայն. և Ինձ
ուղտք՝ և Կորեանք. և Կապիկք. և
Իբաղաղք փետրամօրուսք. և
Փիղք. և Վագերք. և Վիշապք.
մեծ Մրջմունք. և Մրջմնառիւծք.
և Մկունք. Իեշկ մշկոյ. և Կո
կորդիլ գազան. և Միեղջերու.
որ է մեծ քան զա՟մ գազանս. և
խլերայ ողինն ձանք. և զփիլն լե
զունին Սպանանէ. և Պասկուճ
հաւ. և Մուշկ երե. և Ոչեղջե
րաւոր: լինի անդ Ոսկի. Արծաթ.
Պղինձ. Անագ. Մարգարիտ. և
ակն

ակն ամենագօհար · լինի և պղն
ձի · և սնդրուկէի · և թմ Բոլա
Ճառք · հայրուէս · Փայլոնգամուշկ ·
Բռաֆուր · Բանդան · Նայիբուան
ակ · Հըրբուանակ · Պաւկրբուանակ ·
Պոյիբուանակ · Կասիմն · Պոլա
դակ · Մահասոր · Սարդաբիշար ·
և թագուհիք դեղք բժշկականք · և
գուհարք հայրուէից չորս, Հնգրէ :
Սանգր · Բոսարադ · Վնուաւոր ·
Օնակոտկէն · լիտրն արժէ եօթն
դահեկան · Օամիկիմարխայ · նման
է Օանոր · լիտրն արժէ չորս դա
հեկան : Բռողակ · չէկ է և թե
թև · և արժէ լիտրն չորս դահե
կան :

Տապուրեանխա է մեծ կղզի քան
զամ կղզի · հազարև հարիւր
մղոն երկայն է · հինգ հարիւր և տասան
՝ի լայնն, յելից կալով · և ունի այլ
կղզիս շուրջ զինքեաւ մանունս ·
հազար երեքհարիւր եօթանասուն
և եր

եւերկու. ունի եւ լերինս՝ եւ գետս՝ եւ ազգս տասնեւերկու. լինի ՚ի նմա Ոսկի եւ Արծաթ եւ Ակունք պատուականք, եւ Նոլիձայք. Փիղք եւ Ա ա գերք. եւ որք աշխարհին վարսիւք կնոջ պատեն զգլուխս իւրեանց. աստ ասեն զանկումն սատանայի:

Չենաստան յելից կողմ սկիւթեայ մինչեւ յանծանօթ երկիր. եւ է Չենաստան ընդարձակ գաւառ տարածեալ եւ են ՚ի նմա ազգք քան եւ ինն. յորոց մինն մարդակերք: Եւ ունի Չենք լերինս՝ եւ գետս բազումս. լինի ՚ի Չենաց աշխարհին Դարիճենիկ. եւ հօշտբուակ. եւ բուլի ճենիկ. եւ կասխմոն. եւ սրիկոն. ունի եւ հրեշ՝ եւ մուշկ. եւ սիրամարգ շատ. քրքում անբաւ. տպրիշում շատ եւ ազնիւ. վ՚ո որոյ եւ բնակիչքն արուեստաւորք՝ կերպասագործք. հարուստք՝ ընչեղք. որոց արքայն կոչի Չենք[illegible]կուր. որ նստի ՚ի քա

ղաքին սիւռուխոյ առ անծանօթ եր
կրաւ :

Մէնեացուոցն առ երի կալով Ո՛ւ
նաց մինչև ցանծանօթ երկիր.
յորում բնակեալք են ազգք եօթնե
ունի լերինս՝ և գետս բազումս.
բայց անտի յանծանօթ երկիրն՝ որ
ինչ պատմի անհաւատալի է : Դա
զանք անծանօթք մարդակերպք՝
կիսանձնեայք. երդկիմք՝ վեց
ձեռնիք՝ փոկոտունք՝ վիշապա
տոտունք՝ կիսահաւք՝ կիսանդամք՝
ան գլուխք :

Ահա կատարեցան ամ՛ տեսչեցե՛ և դատ
մասնին խօսից :

Ահա կամիմ ըղձալի աշխարհիս
համառօտել մղոնախաղաց ոտ
նաչափութի̄ ուղղեկաբար. առ
պարզաձեմ դրութի̄ :

Ի դուռնայ մղոն երկուհարիւր 'ի
կարնոյ քաղաք :

Անտի մղոն հարիւրևքսան 'ի փոս աշխարհն Հայոց և Յունաց։

Անտի մղոն իննսուն 'ի Կոնիո նիոյ բերդն։

Անտի մղոն հարիւր 'ի Նիկի տար։

Անտի մղոն ութսուն յԱմա սիայ։

Անտի մղոն հարիւրևերեսուն 'ի Պանդրայ։

Անտի մղոն ութսուն յԱնկիւ րիայ։

Անտի մղոն երեքհարիւր քսան 'ի Կոստանդինուպօլիս։

Անտի մղոն վեց հազար 'ի Հռօմ։

'ի Հռոմայ մղոն հարիւրևեօթանա սուն 'ի Խլաթ։

Անտի մղոն ութսուն 'ի Պրճնի մար։

Անտի մղոն հարիւրևութսուն 'ի յՈւռհայ։

Անտի մղոն քառասուն յԵփ րատ գետ։

Անտի

Մնատի մղոն հարիւրևյիսուն յԱմասիայ։

Մնատի մղոն հարիւր ՚ի Դամասկոս։

Մնատի մղոն իննսուն ՚ի Թաւրօր լեառն։

Մնատի մղոն հարիւր ՚ի քաղաքն յԻծմ։

՚ի Կոնիայ մղոն վաթսուն ՚ի Բերդկունեան։

Մնատի մղոն հարիւրևվաթսուն ՚ի Պարտաւ։

Մնատի մղոն իննսուն ՚ի Ծովն Կասպից։

՚ի Կոնիայ մղոն եօթանասուն ՚ի Նախչուան։

Մնատի մղոն հարիւրևքսան ՚ի Գանձակ Շահաստան։

Մնատի մղոն երեքհարիւր և եօթանասուն ՚ի Տարօն։

Մնատի մղոն եօթանասուն ՚ի Յակողոն։

Մնատի մղոն հարիւրևքառասուն- ՚ի Պասրայ։

Մնալ մղոն քառան ՚ի Ծոփս Պարթ
կայեն ։
Դարձեալ ՚ի Գանձակայ մղոն
հարիւր ՚ի Նինուէ ։
Մնալ մղոն հարիւրեւյիսուն
Յուռհայ ։
՚ի Դունեայ մղոնյիսուն ՚ի Կողբ ։
Մնալ մղոն հարիւրեւհինգ ՚ի
Կոտ գեղ ։
Մնալ մղոն հարիւրեւքառա
սուն ՚ի Տփխիս ։
Մնալ մղոն եօթանասուն ՚ի
Խունարկերտ ։
Մնալ մղոն հարիւր ՚ի Պարտաւ ։
Դարձեալ է յԱրճէշ մղոն հինգ
հարիւր յԱղեքսանդրիայ ։
Մնալ մղոն հազար ՚ի Պենտա
պօլիս ։
Մնալ մղոն երեքհարիւր ՚ի Տրա
պօլիս ։
Մնալ մղոն հազարեւերեսուն
յԱփրիկայ ։
Մնալ մղոն իննհարիւր ՚ի Սեպ
տէ ։ Մնալ

Ընդ ի մղոն հազար Ովկիանոս ծովն անծանօթ ։

## Չորս Գետոցն Են.

Փիսոն 'ի Հնդկաց և յԵթեօպաց՝ Գանգէս կոչի․ իսկ Յոյնք Հնդկաց գետ ասեն, ելանէ Յեմաւօն լերանէ՝ և զամ երկիրն Եւեղատայ շրջապատէ․ այսինքն զփոքր Եթեօպիայ և զմեծ․ և զկողմանս Ելեմացւոց․ և յանցանելն ընդ մեծն Եթեօպիայ՝ իջանէ ընդ հարաւայ ին մուտս 'ի ներքոյ Գանդիրայ՝ յՈվկիանոս ծովն ։

Գեհոն յԵթեօպիոյ փոքունէ իջանէ 'ի Նոբացիսն․ և ընդ Սոյէմիտացիսն՝ և Յօքոմետիս․ և ոռոգանէ զԵթեօպիայ․ և յԵգիպտացւոց ծովն մտանէ՝ ըստ Երեմիայի ։ զի՞ կայ քո և երկրին Եգիպտացւոց ըմպել զջուր 'ի Գեհոն գետոյ 'ի պղտորելոյ ։

Տիգրիս 'ի Կորդուաց լերանց ելա-
նէ. և գնայ ընդ կողմանս Ասո-
րեստանեաց. քանզի ձևէ զկող-
մանս արևելից. ընկղմի յերկիր՝ և
ելանէ 'ի Կորդիս. և Հայք 'ի մի-
ջի մնայ:

Եփրատ նոյնպէս ելանէ 'ի դրախ-
տէն. մտանէ ընդ երկրաւ. և
ելանէ 'ի Հայք, 'ի Բագրևանդայ
և 'ի Կարնոյ լերանց. մօտ 'ի յարծն
քաղաք:

Գետք. և գնացք նոցա Սինդ և անուա-
անք: [illegible]:

Սաւանայ և Փարփայ՝ 'ի Դամաս-
կոս ելանեն, և անցանեն ընդ
Բաժան քաղաք՝ և անկանին 'ի
ծովն Հռոմայեցւոց:

Յորդանան երկու ակունք են,
իջանեն 'ի Սանիրայ և 'ի Հերմոն
լերանց. և միաւորեալ անկանին 'ի
ծովն Հռոմայեցւոց:

Տօնաւիս՝ 'ի Պալպաքայ ելանէ, և անցանի ընդ Տիւրոս և ընդ Սեդոն. և անկանի 'ի ծովն Արաբացւոց մերձ Չինեկուրոն:

Տիգրիս՝ ելանէ 'ի Կորդուաց լերանց՝ և անցանի ընդ Մօսլ՝ և 'ի Թէրակլիսայ. և Հերձակոտոր առնէ զաշխարհն Ասորեստանեաց՝ և անկանի 'ի ծոցն Հնդկաց՝ անդ.քանս զԱենիկորն:

Արածանի 'ի Հայոց ելանէ 'ի Միլէրկրացն. և միաւորի ընդ Եփրատայ:

Եփրատ՝ 'ի կարնոյ ելանէ՝ և անցանէ ընդ Խաղուծաւձ. բանայ զԵկեղեաց՝ գայ 'ի Սամուսատ. իջանէ 'ի Ռուրեպլիան. և անցանէ ընդ Կառայ. և գնայ 'ի Բաբելոն. միաւորի ընդ Տիգրիսի. բաժանի 'ի Բասրայ. և անկանի 'ի ծով: Բասրայ

Գեհոն 'ի դրախտէն ելանէ՝ և անցանէ ընդ սահմանաւն Հնդկաց՝ և անցանի 'ի Սլեւան. և անկանի

նի 'ի Սողոմնիայ. իջանէ յԵգիպ
տոս. և անցանի 'ի լոյս՝ որ Թարգ
մանի արևակաբուղխ. և մտանէ 'ի
ծոցն հարաւոյ:

Նաքսիոս՝ և փիսոն՝ 'ի դրախտէն
ելանեն. և կոչեն նմա Հնդիկէս
գետ. և Եթէօպացիք՝ Գանգէս
գետ. և Հոռեն ծովակ հատանէ.
ընդ Մախլեանտէս քաղաք անցա
նէ՝ և ընդ Սիբլեանտէս անցանէ՝ և
անկանի 'ի ծոցն Մղոռսիկայ:

Թևեւածիս գետ՝ 'ի Բաղոմայ ելա
նէ. և ընդ մըսր՝ և ընդ Բաբելօն
անցանի. և Ձգի 'ի Գանդգերոն
'ի ծոցն հարաւոյ:

Մորտակամչիս գետ 'ի Սարմարի
տէս քաղաքէ ելանէ. նա ոչ ունի
կերպարանս գետոյ՝ այլ ծովունմա
նակ է. զի տասն վտաւան է խո
րութին նորա՝ և եօթն վտաւան լայ
նութին նորա՝ և ընդ Բևերիտոն ան
ցանի մերձ յԵթէօպիայ՝ և անկանի
'ի ծոցն հարաւոյ:

Տու

Տուրէս՝ և Հեղինիկոս սոքայ՝ ՚ի պարոից ՚ի Բակտրոնայ ելանեն. և անցանեն ընդ Սամուրեայն՝ և ան կանին ՚ի ծովն Կասբից։

Գանդէս և Խոլիմոս գետք. որոց խորութիւն մինչև յանդունդս է՝ և Լաւ ծաւալեալ մինչև յերկինս. և լայնութիւն նորա երեսուն մղոն. անցանեն ընդ Ո՛ննաս քաղաք. եր թայ ՚ի Սապուասլիան ՚ի Սապու՝ և Յակեսպոն. անցանէ ՚ի խորին Հնդիկս՝ մերձ ՚ի խոլթէբասուն՝ ՚ի Համազունան՝ որ Թարգմանի կա նանց աշխարհ՝ մօտ յանծանօթ եր կիրն. և անկանին ՚ի Հեսամիտոն ծովն։

Սկոն՝ և Հինէս՝ և Բերմիս տէս՝ սոքա երեքեանս ՚ի մի ՚ի Հիւ սիսային լերանց ելանեն. և Օպաս՝ ՚ի մօրեաց ՚ի վայր իջանեն՝ և ընդ միմեանս խառնեալ ընդ աշխարհն Սղոմանից՝ անցանեն մերձ ՚ի Լի կէթ՝ և անկանին ՚ի ծովն Սպրաար տիկոս։

Տարտարիկոս՝ և Սարկաւոս՝ Գաւակիրոս՝ և Օքոս ։ Սոքա չորեքեանս յարևմտից իջանեն՝ ՚ի Պերսիմոս լեռնէ․ որ կոչի այրեցեալ գօտի արեգականն՝ և անցանեն ընդ Լիկոն և ընդ Սպանիայ․ մերձ ՚ի Բիւտրոն՝ և անկանեն ՚ի ծովն երեկոյին ։ Երասխ՝ ՚ի Բասենու ելանէ․ Սեծամօրն՝ ՚ի գոճնայ ելանէ․ Կուր գետ յակուռն ելանէ․ Ճորոխ գետ՝ ՚ի Սենխայ ելանէ․ Հուրաստան գետ՝ Գեղարքունեաց ելանէ․ Գինեգոյն գետ՝ յՍնիւոյ ելանէ ։ Սոքա ամենեքեան ընթանան և յերասխ խառնին ՚ի Նախչուան՝ և ՚ի Մօրանդ ՚ի Շարուանդ՝ ՚ի Խուրէշ․ ՚ի Պարսանխախտուս․ ՚ի Սագաստան․ յՍպլաստան․ ՚ի Տուճանս․ ՚ի Մատուրան․ ՚ի Սամուրան․ ՚ի Գիլմաստան․ ՚ի Դարական․ ՚ի Փայտակարան․ և անկանին՝ ՚ի ծովն երեկորին՝ արևմտից երեկոյին ։

Նապ

Ռաւղիլկէս՝ և Ռէխա՝ ’ի Սեբաստիոյ եղանին՝ և ընդ Պամբրաց աշխարհն անցանեն՝ և երթան մերձ ’ի Նիկոմիդայ.քաղաք յարևմուտս կոյս. և ողորի ընդ հիւսիսային կողմանն. և անկանի ’ի ծովն Պոնտոս:

Օախտաւիկոն գետ՝ յԵկոնիան գաւառէ եղանէ՝ և ընդ Տրապօլիս երթայ ’ի Լիդիայ՝ մերձ ’ի Հելլէնս. և անկանի ’ի ծովն Բուղան:

Սաւմուս՝ և Կուկապրիս՝ գետն՝ ’ի Կոնոսայ եղանեն՝ և ընդ Թրակէս անցանեն. մերձ ’ի Սաւնիայ. և անկանին ’ի ծովն Եփեսացւոց:

Դանուբիկ՝ որ ընդ Հօսէ եղանէ. և Տօնաւիս Յակոմոնացւոց՝ և գան յանդիման արևելից մինչև յաշխարհն Բուլղրաց՝ և առ Պօլօրն. և Նուստուալիան. և Նուագաստլիծն. և անցանի յաշխարհն Գոթաց՝ և մտանէ ’ի ծովն Բասոյաց:

Տիբերինոս գետ՝ ելանէ 'ի Կա
պուտ լերանց հիւսիսոյ՝ և անցանէ
ընդ մէջ Հռոմայ՝ և անկանի յՏոսա
ճիայ. և մտանէ 'ի ծովն արևմտից։

Ակամանդոս գետ՝ 'ի Փռանկաց
ելանէ. և ծովամուտ լինի մօտ
մերձ 'ի Տալրիկ. և 'ի Ս րիկա
նիք. և մտանէ 'ի ծովն երենկորէ
արևմտից։

Տանաշիս՝ և Պօնտոս՝ և Հեղինա
պօնտոս յանծանօթ երկրէն ելա
նեն. և ընդ անմարդ անապատ ան
ցանեն ընդ Բարանձաւս. և ընդ
Բերդուկս. ընդ Խուխունս. և
ընդ Բարաքիթս 'ի վայր վայթին.
և անկանին 'ի ծովն համատարած.
որ է ակն ծովուց. և պատէ զչորեք
ծագեան աշխարհս ամ. Ընդ ամ
միահամուռն. են գետք քառա
սունևերկու՝ մեծամեծք. որք ելա
նեն 'ի ծովէ՝ և չորս 'ի դրախտէն
ելանեն՝ շրջին ընդ աշխարհս ամ.
և դարձեալ մտանեն անդրէն առ

ծնօղն

ծնօղն և մայրն իւրեանց համատարած ծովն։

Սքանչելագործ արարչին ամե̃ փառք։

### Նշանաւոր Քաղաքաց Հնդկաց և Պարսից։

Պանխան քաղաք՝ ուր թ աւուրց ճանապարհ ընդ ցամաք պիտոյէ ընթանալ. Պանխանու գաւառքն Հնդիկք են. բայց 'ի Խաղնոյթեան խօսի. զի 'ի վաղնջուց հաւանեցուցեալէ պարսիկն և առեալ. այլ երկրին բնակիչքն Հնդիկք են։

Տիգնաւոյ քաղաքն է մեծ՝ և ինքն 'ի Խաղնոյ խօսի՝ և երկրին բնակօղքն Հնդիկք են. կան և ազգ մի պարսիկք՝ վեց աւուր քան զԽաղնիայ 'ի վայր է։

Պոյստ քաղաք է մեծ՝ մեծագանձ և մեծահարկ. և ունի զթէմ ընդարձակ. և ճանապարհ չորից աւուրց է 'ի Տիգնաւէ 'ի Բոստ՝ և

այս

այս երկրիս բնակիչքն Հնդիկք
են և 'ի Աղանի խօսին։
Պուրշաւուր մեծաշահ քաղաք՝
և թեմ ընդարձակ. ելանէ յուրմէ
շատ Լեղակ. և Հինա աղէկ. 'ի
Աղանոյ 'ի Պուրշաւուր տասնև
հինգ աւուր ճանապարհ է։
Գապուլէ՝ է քաղաք մեծ և մե-
ծաշահ և մեծահարկ. ելանէ յուր
մէ Հլէլիճ և Գապուլի. և այլ
օգտակար դեղք. քառասուն փար
սախէ 'ի Պուրշաւուրէ մինչև 'ի
Տիգնաւէ։
Լահուր քաղաք է մեծ՝ և մե-
ծագանձ աշխարհ՝ և երկիր ընդար-
ձակ. գեղեր ունի չորսհարիւրհա-
զար։ Սահմուռ սուլտանն է զի-
բեանքն հարկատու արարեր՝ և
հաւանեցուցեր. են ամք վեցհա-
րիւր. է մեծաշնորհ քաղաք. և
որինչ յամ երկիր պատուհական և
հարկաւոր իրք լինին՝ ամէնն 'ի քա-
ղաքն գտանի. զի անդ ըներեալ ծա-
խեն

խեն վաճառականքն. և ա՟մ վաճառականքն անտի. քաղեն զա՟մ ինչ՝ զի իվր ճանապարհին է. քաղաքն և թագաւոր է մեծազօր:

Խշմիր քաղաք մեծ է. և գաւառս ունի հարուստս՝ և մեծաշահս. 'ի Լահուրէն քառասուն օրն երթան 'ի Խշմիր. մուշլինի խփալի ասեն ցած մուշք է. նա անդ շատ գտանի. Երանէ Սնփուլ. և Խարափուլ. և այլ որ ինչ պիտոյ է մարդոյ՝ դեղեր մարդկան համար. քաղաքն լեռն է և մորի և կապիննի:

Պանկլար՝ քաղաք է մեծ՝ և բնակիչք քաղաքին Հնդիկք հարուստք՝ և մեծաշահք. և մայրին ինքեան մօտ է. և մայրուոյն փայտն ամէնն ծխանելի է. և բնակիչք երկրին գտանեն զաղէկ ծխանելին 'ի ցեխսն թաղած: Իւրեանց թագաւորին ութն հազար փիղս ունի: մեծ թագաւոր է և հարուստ՝ և ա՟մ պատուական իր գտանի 'ի յիւր քաղաքն:

'ի Խշմի

'ի Խշմիրայէ երեսուն աւուր ճանապարհ է մինչև 'ի Պանկլար. երբ մարդ այլ ճանփով 'ի Լահրոռայ կամի գնալ, քսանևհինգ օրն երթայ 'ի Մուլթան քաղաք:

Լահրոռայ և Մուլթան՝ քաղաքք են մեծամեծք և մեծաշահք. ունին ընդարձակ գաւառս՝ և գեօղս երեքհազարս. և 'ի խաղնի խօսին՝ և բնակիչք երկրին հընդիկքեն:

Մելուլ քաղաք է մեծ՝ և մեծագանձ. քառասուն աւուր ճանապարհ է 'ի Տեպուլայ 'ի Սնդիկ. քաղաք է Տեպուլ՝ և մայրեքն դժուար՝ և ճանապարհքն՝ և կապանի՝ և լերինք. և իւր փոքր Դ'ելուլ դեռայն է շինեալ Մելուլ քաղաք. բայց 'ի Լահրոռայ Թեմն խօսի:

Սումնաթ՝ քաղաք է հնդիկ՝ 'ի ծով եզերին հնդկաց՝ և է բազմագանձ քաղաք և մեծաշահ. հընդ-

կաց ՀաՃիւքն 'ի Հօն գան յուխտ. ու-
րեանց երեցանց և ալոկերոյն Ռահ-
բամայ կոչեն. ամէն քաղաքն նք̃ են։

'ի Սօմնաթայ շատ գողեր ելանեն
նաւով. և ի̃ր ծովու շատ ծեծ-
առնեն. և 'ի Նահրո̃ւալայ խօսին։

Պորտատ քաղաք է փոքր և ծով
եզեր. և մօտ է 'ի Նահրո̃ւալայ։

Ռամկաթ քաղաք է 'ի ծովե-
զեր. և մերձ է 'ի Պորտատ քաղաք։

Պուրճ քաղաք է ծովեզեր՝ և
Նահրո̃ւալայ խօսին. և մերձ է 'ի
Ռամկաթ. և երկու աւուր ճա-
նապարհ հեռի են 'ի միմեանց։

'ի Պուրճ քաղաքն յամէն չորս
տարի Ն̃ծ մի պաշտեն. և 'ի յաւար
տել չորս ամին, փոխեն. նք̃ բարբան-
քեն թէ ջրհեղեղն նա մեզ չէ եկել։

Սայոլ մեծ քաղաք է՝ և ծովե
զեր է՝ և մեծաշահ. շատ շաքար և
շատ լեղակ ելանէ յիւրմէ. և շատ
պատուական իրք գտանին անդ։

'ի Պուրճ քաղաքէ երթայ մարդ-

'ի Գոլմուտրայ. և անտի երթայ.
ճանապարհորդն 'ի Պլոտրայ:

Պլոտրայ քաղաք է ծովեզերի-
մեծ, և մեծաշահ՝ և բազմագանձ.
այս քաղաքնիս Նահրուանայ խօ-
սին. հարիւրհազար դեօղ ունի այս
քաղաքս. և ամէնն շուրջ ծովեզե-
րուն շինած. այս քաղաքս և նորա
վաճառականն նաւերն ընդ ծով եր-
կարութն ծովու վաճառուով ընթա-
նան. Այս քաղաքնիս և այս գեղերն
երկուհարիւրհազար շաքմի են. և
հնդիկ լեզուաւ են. և ամէնն շաք-
մի խօսին:

Մէպարն քաղաք է մեծ. մեծա-
գանձ և մեծաշահ, և առաջին
քաղաք 'ի Մէպարէ երթայ ճանա-
պարհորդն 'ի Տարաւն որ է մեծ քա-
ղաք. անտի երթայ 'ի Սուֆրայ. 'ի
Սուփրայէ երթայ 'ի Խանայ. ան-
տի 'ի Փունաւէ. և 'ի Փունաւոյ 'ի
Սանդապուր՝ ուր շատ պղպեղն լի-
նի՝

նի՝ և այլ պիտանի համեմունք. և
ամէն Քաղաքնիս հետ իրաց են։

'ի Սանդապուրէն երթայ ճանա
պարհորդն 'ի Պանքուր քաղաք. և
անտի 'ի Պանկլուր. և անտի Ջեպն
պնիթոն. և անտի 'ի Վլրայ. և
անտի 'ի Փանդրիանէ. և անտի 'ի
Ռինկլ. 'ի Ռինկլի շատ Քրիստո
նեայք կան՝ և շատ եկեղեցիք. և
ամէնն Մելէպան դաւառի խօ
սին. Զոլխանդ անունն է թեմին. 'ի
յայս թեմս է մը առաքելոյն Թովմա
վկայեալ. թեմին առաջին քաղաք
Պլինձ՝ մեծ և մեծաշահ. 'ի
Պլինձու երթայ ճանապարհորդն
'ի Պնիպոթին 'ի տասն օրն. անտի
'ի Խուտոյն քաղաք օր մի. անտի 'ի
Նախէպոթին օր մի։

Նախէպոթին քաղաք է մեծ.
շատ եկեղեցիս և շատ Քրիստո
նեայս ունի ընդ ճնքեամբ. և ամ
քաղաքնիս ծովեզերք են։

'ի Նախէպոթոյն երթայ երկու
օրն

օրն 'ի Տահպաթլին. անուն երթայ 'ի մէ Առաքելոյ գերեզմանն. և ասեն անուն քաղաքին Սալապ. ծովեզեր է քաղաքն. և մնացեալ է յինքն սակաւ մի քրիստոնեայ. 'ի Սալպայէ երթայ մարդ 'ի Զուծր. Այս քաղաք է մեծ՝ և մեծագանձ և մեծաշահ. 'ի Սըլապ քաղաք ուր մէ առաքելոյն գերեզմանն է Թովմայի. աղբիւրքն ամէնն տղրուկ եռացուցանեն. բայց միայն յայն աղբերէն. որ մերձ է 'ի գերեզմանն Թովմայի. Այն աղբեր ջուրն յիստակ է և բարեհամ. և մէ է 'ի աղըրկէ. այս ամ. քաղաքս Չոլիան կոչի:

Սեղան կղզի Հնդիկ անուամբ է. և Սառանտիպ՝ տաճիկ անուամբ. 'ի յայս կղզիս ասեն Հնդիկք՝ թէ երբ եհան Ա՛ծ զադամ 'ի դրախտէն. նա աստ բնակեցոյց. պատուական գօհար եղանէ յայն կղզւոյն. և կարմիր Յակունդ բազում.

ղում․ և այն որոյ ասեն Հնդկերէն Կատուի․ իսկ տաճկերէն Մինիլ լինհօռ։ և այլ այն ելանէ․ զոր պարսկերէն ասեն Չաշմիդուրպայ․ և այլ այն ելանէ որոյ անունն է Նլէ․ իւր գոյնն կապուտ լինի․ և անուանեն Հնդիկք՝ Նիլսէ։ և այլ այն ելանէ դեղին․ Պյտորոյ ասեն իւրն․ և կարմիր Յակունդ ելանէ․ որ քան զամ ակունս և յակունդս հարկաւոր է և մեծագին․ և այլ պատուական իր՝ որ թագաւորաց անգ է։

Ոսկեգետոյն գաւառն Բեմինզար ասեն իւրն․ զի բաղում ոսկի ելանէ յիւրմէն՝ քանի աշխատիլ դը կարէ․ և Ոսկեգետոնյն են անուանքս այս։

Առաջին քաղաք և կղզի՝ Դամրին․ աստի ելանէ շատ Սրդն․ փայտ Պկամ․ և այլ պատուականք իրք․ աստի երթայ մարդ՝ ի Պարչուր․ այն քաղաք է և կղզի մեծաշահ․ պա

տու՛ակն Բաֆուրն անուն ելանէ. 'ի Մամբրու մօտ կը գի կայ՝ զանուն Բրուտ ասեն. Հներ թեթեւագին անուն ելանէ՝ եւ անդ կազմի:

Բրուդայի քաղաք է մեծ. եւ մերձ 'ինա կը գի մի է Սամուէլ ասեն. մեծ ադիր, եւ մեծաշահ. եւ իւրներքոյ այլ կը գի կայ՝ որ կոչի Պուրէ. եւ զ՚ամ պատուական իր՝ զորինչ ուզէ մարդն գտանէ 'ի կը գւոջն: եւ իւրներքոյ, Սփանէս կը գի. 'ի յայն կը գւոյն ելանէ բազում Բաֆուր. եւ 'ներքոյ Պլայոյ է թագաւորն Սակէգեանին. 'ի Պլայոյ կը գին նստի Օապինձաց թագաւորն. երբ իւր հայրն մեռանի կամ մայրն. փոխան ծնողացն 'ի չափ նոցին կուռս շինէ Սակի. սոցա ազգքն կռապաշտք են. եւ չեն հնդիկք. սոքա Օապէձ կոչին. եւ միս մեռելոտի՝ զոր գտանեն, ուտեն. եւ զխուրեանց մեռեալս, եւ զայլ սահմանաց մարդ, զորս կալնուլ կարեն. որս համարին:

Սա

Եւ յորժամ ընդ այլ ազգի կռուին, և յաղթեն. զորոյ կոտորեալսն զոր խուրց է՝ և զոր թշնամեացն՝ զամենն ուտեն. բայց վաճառականի և ձանապարհորդի ոչ մեղանչեն. զի խուրց ապուրսն 'ի վաճառականաց լինի։

Ամբի կղզի է. և իւր ներքոյ այլ կղզի կայ՝ Բաղաքփինչի անուն. մերձ 'ի սա կղզի մի այլ. յայս կղզիքս եղանէ կլայեկ շատ. և ոմն պատուական իր հօն գտանի. հանց որ թագաւորաց վայելէ. և մերձ այս կղզիս է, Յալա. և Բալա. և Սակուլէ։

Այս է Սակեգեանի քաղաքն, և կղզիքն, և գաւառքն. և ազգքն որք ընկեալ են Օսպեձլեզու են։

Օլին և մաչլին երեքհազար եւթհարիւր քաղաքք են՝ և բազմաբարեք գաւառք. ամենն կռապաշտք են. և երկիրն ցամաք է. բայց չեն հաւանիլ ոչոր ազգի. զի իւր թագաւորն բազում և գաղանաբարոյ հեծեալս ունի. և սիրեն զքրիստոնեայսն. և

լաւ ընդունին՝ յԱղէքսանդր Թա
գաւորէն 'ի վեր. զի 'ի նմանէ շատ
աղէկ են գտեալ և ազատութի. և
զՀռոմն խիստ սիրեն:

Իսկ այն տեղւոյն զոր Հնդիկք ու
տեն. զկեր անուննն Թմբուլ ասեն.
ծուրեանց նուղլ և այսուր այն է. և
առողջութի տայ. և մեծրիկ է և
կարմիր՝ և անունն Ջուհր ասեն:
և Սողան ծառոյն ասեն. որ կուր
տեղւն հինգ կանգուն է. ասեն
բնակիչքն, Թէ նր տեղւոյն ծած
կեցաւ Ադամ, յորժամ 'ի դրախ
տէն ելաւ: Հնդիկք երիցանցն
բահրամայ կոչեն. և կռոցն դև:

Սալ քաղաք է 'ի Թուրքաս
տան. ամուր լեռան. և շատ քրիս
տոնեայք կան 'ի յայն գաւառն.
Սունդրի ասեն քաղաք. երկանէ յեւր
մէ Խունկ և Սապու. Սկունդրի
այս քաղաքք են Հնդկաց և Պար
սից: Իսկ ՋՅԻ ԹԻ արարչէն մին
արարածոց փառք յաւիտց յւտնս:

# ԳԻՐՔ
# ԱՌԱՍՊԵԼԱՑ
## ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆՑ
Որ ասի
## ԱՂՈՒԷՍԱԳԻՐՔ

Արարեալ սակս խրատու եւ
շատ շահեկան։

Թագաւոր մի կազմեաց սե- Ա
ղան դեսպանացն. և առաքեաց
մատաղորդացն զկաշին ե-
դին յարոց ի մէջ շուկային. Իւ
ի մէջ գեղերին ժողովեցան շունք
քաղաքին յուսով զկաշին. Իւ ասէ

միոյն 'ի նոցանէ՝ որ մեծն էր և ի մաստուն. ասէ, եկէք նախ զջուրն լակեսցուք՝ և ապայ կերիցուք զկաշին. և սկսան լակել՝ և պատառեցան. և ոչ ժամանեցին յուտել զկաշին: Այսպէս գայ մահն ի վերայ մեր. և հեղձուցանէ զմեզ. զի ոչ կարեմք հասանիլ այն կենաց:

Է Թագաւոր մի բարի և բարեմիտ Ճաշ արարեալ յեզր գետոյն. և շուն մի սոված եկն առ Թագաւորն: և նա ետ հաց մի ոք: Եւ առեալ շանն գնայր ընդ եզր գետոյն. ետես 'ի ջուրն զիւր շուքն իբրև զայլ շուն. և զհացն 'ի բերանն նորա: Եւ շունն ագահեալ մոռացաւ զհացն որ 'ի բերանն էր. վազեաց 'ի գետն զի առցէ զհացն 'ի միւս շանէն. և ոչ էգիտ զի շուքն էր: Եւ զայն հացն՝ զոր ունէր՝ գետն տարաւ. և շունն եկեալ երթայր սովամահ. Ցուցանէ թէ Թագաւորն Քս է. և սովեալ շունն

ագա-

ազգ մարդկան է. և ո՛ր հացն իւր
շնորհն, և պատուիրանն, և իւր
ո՛ր մարմինն։ Նա սատանայ կերպա
րանէ առաջօք մեր առաջի դնէր
աշխարհի, և զամ մեղս. զագահու
թն, զարծաթսիրութն։ Նա մեք ջա
նամք մեծ աշխատութե զհետ փա
ռաց և մեծութե. և զհետ սուտ՝ և
անցաւորաց ջանամք։ Սէ և առ
նումք, մահն հանէ 'ի մէնջ. և մեք
լինիմք ողորմելիք. զի կորուսանեմք
զայս կեանս և զայն։

Թագաւոր մի յարեւմուտս բազմե Գ
ցաւ յաթոռ։ և եկին բազում
դեսպանք առաջի նր. Նա ահա շուղ
լինչ կայր 'ի մորուս նր. և սպասա
ւորքն նր ասեն. ով թագաւոր, ահա
տեսանեմք ոսկի բաղայ իւր ոսկի
ձղին. և նա ոչ իմացաւ զուամն։ Նա
գնաց առնուլ զշխուղն՝ ի մորուացն. և
նա մահ արարն նմա. և սպասաւորն է
հար զերեսն նր և ասէ. մեք գիտեմք

 եթէ

Եթէ Այ հաւաստար թագաւորեա-
նա նման արջոյ կամիս թափել զիս։
Ցուցանէ. թէ այսպ պարտէ յան-
դիմանել զթագաւորն՝ և զառաջ-
նորդն՝ և զդատաւորն. թէ եղա-
նէն յիրաւանցն. և թիւրեն 'ի կա-
մացն Այ։

Է Թագաւորի միոյ որդի էհաս 'ի վերջին աղքատութի. և յոլով ժամանակս ծառայեաց լնկօք և ճրագօք կռոց հօր իւրոյ։ Եւ աղաչէր զնա՝ զի փարթամացուսցէ զնա. իսկ նա ևս քանզևս աղքատանայր։ Եւ նա բարկացեալ յաւուր միում եհար ուռամբ զգլուխ կռոցն, և հերձաւ. և բազում գանձս հոսեցաւ 'ի գլխոյ կռոցն՝ զոր հայրն իւր պահեալ էր։ Ով որդեակ՝ վայ ինձ ողորմելի մեղաւորիս. քանզի այսպէս ցուցանէ առակս. թէ որքան ծառայես մարմնոյ քոյ հեշտութե և հանգստութե. և պարարտու-

տութե՟. և մեղօք. դու ևս քանզի ես
աղքատանաս հոգւով. և ողորմե
լի լինիս: Ապա թէ տանջես զմար
մինդ, չարչարես, և սպանես զմ՟ բա
րեգործութե՟. ապա կարես փար
թամանալ հոգւով. և փրկիլ ՚ի դը
ժոխոցն:

Թագաւոր մի սաստիկ նեղացաւ Է
՚ի լուէն. և արուեստիւ կալաւ
զնա: Ասէ լուն. աղաչեմ զքեզ՝ մի
սպանաներ զիս. զի փոքր է վնաս իմ
զոր արարի քեզ: Իւ՟ նա ասէ՝ դու
ինչ ՚ի քո ուժդ կայր՝ արարեր:
այժմ ՚ի ձեռաց իմոց մեռանիս:
Ցուցանէ. թէ բնաւ ՚ի կեանս քո
չար ումեք մարդոյ մի առնել: Իւ՟
դարձեալ ասէ. թէ պարտէ իշխա
նաց և դատաւորաց զփոքր չարա
գործն հոգալ և տանջել. զի երկե
ցեն մեծամեծ չարագործքն:

Զ Թագաւոր մի մեծ և բարեմիտ. ունէր խոզմի սիրուն 'ի տան իւրում. և խորհեցաւ մեծարել զնա՝ և փառաւորել. Կազմեաց նմա գինտ մի յոսկւոյ հազար դահեկանի. և մետաքս ոսկէզօծ՝ սպիտակ բեհեզ՝ ուստիկ ծանրագին էածխիլերայ նր. և զգինտն էած 'ի քիթն նր. և նա առաւօտու ժամուն շրջէր Ը. քաղաքն. և զամենայնն 'ի տիղմն թաւալէր. և զգինտն ոսկիոր կայր 'ի քիթ նր. Ցուցանէ. Ր՛ մեղաւորք մեղս առնեն. և յամժամ թաւալին 'ի տիղմն մեղաց. և աղտեղեն զլուսափայլ պատմուճան սրբոյ աւազանին. և ամ ընդ աղբ, և շարաւ մեղաց շփեն զգինտն մը՝ որ 'ի միտս և հոգւոյ նր պատկերին մը:

Է Թագաւորն կոստանդիանոս 'ի բազմաց ժամանակաց ցանկացաւ տեսանել զճգնաւոր ոմն. որ էր անապատական՝ և յոյժ անուանի. և

օրհ

օրհնել ՚ի նմանէ. և խրատ առնուլ և ոչ կարէր երթալ ՚ի բազում զբաղանացն: Եւ օր մի յանկարծակի որսոյ պատճառաւ գնացեալ յանապատն: Եւ սպասաւորք Թագաւորին յառաջընթացեալ ազդեցին ճգնաւորին զգալուստ Թագաւորին. և նա ելեալ աւելեաց զխցիկն. և զաւելածն կուտեաց ի մէջ տանն. Եւ ինքն մերկացաւ, և կտոր մի վալոյ ի վերայ Թիկանցն կապեաց՝ և նստաւ ի վերայ սեմոյ դրանն մերկ. մէկ ոտքն ՚ի ներս և մէկ ոտքն ՚ի դուրս. և եդ զմէկ ձեռն ի վե՛ր բերանոյն՝ և զմիւսն ի վերայ ծածուկ մարմնոյն: Եւ եկեալ Թագաւորն ետես, և զարմացաւ. և փութանակի յետ դարձաւ. Իշխանացն հարցեալ զպատճառն շտապ դառնալոյն. Ասաց, Թէ տասն տարի ՚ի մօտն էի կացեալ, այնչափ խրատ չէի կարել ուսանել՝ որչափ այսմէկ պահս: Եւ ասացին զինչ էր խրատն ուսեալ՝

նեալ՝ զի ոչ դու խօսեցար՝ և ոչ նա՞
Եւ ասաց, թէ այն որ զաւելորդսն
կուտել էր. զայս ուսուցանէ, թէ
աշխարհիս ինչքն իբրև զայս աղբս
է։ Եւ այն որ մերկ էր, զմարմին իւր
թիկանցն էր կապեր. զայն ուսուցա
նէ, թէ յաշխարհէս զայս չափ իրքս
պիտի տանիմք՝ քանի շատապրիմք ու
ժողովեմք։ Եւ այն որ իւր չեմոյն
էր նստեալ. զայն ուսոյց՝ թէ մար
դոյս մէկ ոտքն ՚ի յայս կեանքս է՝ և
մէկ ոտն յայն։ Եւ այն որ մէկ ձեռն
իւր բերանոյն էր եդեալ և զմէկ
իւր ծածուկ մարմնոյն՝ զայս կու
նշանակէր. թէ մարդ որ ուզէ ասա
ու մարդիկք պարզ երես լինիլ և
անդ առ ԱԾ, թող զայս երկու
դուռնս պահէ։

Է Այր մի ելանէր ՚ի դժուար դար
մի վէր. ՚ի տօթ ժամանակի.
յոյժ աշխատեցաւ. և սկսաւ բամ
բասել զԱդամ և զԵւայ. թէ

էր անկայ.ք 'ի դրախտէն անհամ
բերութ͞ե ձերով: Եւ երեւեալ հրեշ
տակին ասաց: Թէ տանիմ ըզ
քեզ 'ի դրախտն, դու համբերես:
Եւ ասաց, թէ երբ լինի այդ: Եւ յան
կարծակի քուն ի վերայն անկաւ:
Եւ տեսեալ զինքն 'ի դրախտին ու
րախացաւ: Եւ ետես զի մարդիկ
զողոյ ծառերն 'ի վայրտային. և
չհամբերեաց, և ասաց թէ այդ-
ենչ աներկեւղ մարդիկ էք. որ ըզ
չորն և զգօսացածն թողեալ էք՝ և
զողոյ և զմատաղաչ ծառերն 'ի վայր
կոտայ.ք. որ զողայոց մահն նշա
նակէ: Եւ բացեալ զաչսն ետես
զինքն 'ի դարն 'ի վեր՝ և զաղն 'ի շա
լակն ջոճալով. և սկսաւ լալ: Դար
ձեալ ետես զհրեշտակն, և ասաց.
այլ չի խօսիմ. և տեսեալ զինքն 'ի
դրախտին. և տեսանէր զմարդիկ.ք
զի զփուշ և զծխուղս ծառոց շալակ
դնէին. և չէին կարել շալկել՝ նա
կու շատցնէին. որ զմեղս նշանա

կէ. որ չափ շատանայ նա այլ գոր
ծէ. և չհամբերեաց. և ասաց, ով
անմիտք թեթևացուցէք, որ կա
րէք շալկել: Եւ տեսեալ զինքն այլ
ևս՝ ՚ի դրախտէն: և տեսեալ վէմ մի
մեծ. և երկոտասան լուծք լծեալ
՚ի նմա: և ամէնմէկ յուր գլխոյն
քարշէր. և վէմն չէր շարժել: Եւ
չհամբերեաց՝ և ասաց, ով անմիտք,
ամէնքդ ՚ի մէկ գլխոյ լծեցէք:
զի խախտել կարիցէք: Եւ վէմն
էր ինքն Ք͞ս, և լուծքն լծեալք,
են հաւատք ուղղափառաց երկո
տասան ազգաց քրիստոնէից. իւրա
քանչիւր յինքն ձգելով. և բացեալ
զաչսն ետես զինքն ՚ի դարն ՚ի վէր՝
և զաղն ՚ի շալակն:

Թ̅ Սեն մի երթայր յԵէմ բազում
զօրօք՝ և բազում ընչիւք: Եւ ՚ի
Ճանապարհին հանդիպեալ յեզեր
միոյ եկեղեցւոյ. և այն եկեղեցւոյ
դուռն երկու ծառ կայր. բուսած
մէկ

մէկ 'ի յաջ դիհն. և մէկ 'ի ձախմն.
և յանկարծակի յիրեար եկեալ
համբուրեցին զիրեար: Ու գիտա-
ցեալ զի երեք մի կայր անդ 'ի պա-
տարագն. և 'ի միջ յերախայիցն
համբուրեցին զիրեար: Ու ասաց
կինն յերեցն. Թէ մէկ ջորէբեռն
մալ.քեզ՝ հանց պատարագ մի ինձ
չինէ. և մէկ այլ օրն չինեաց. և չհամ-
բուրեցին զիրեար ծառքն: Ու խմա-
ցեալ զպատճառն. ասաց երեցն,
Թէ յայնժամու խորհուրդ անկաւ
'ի սիրտս իմ, Թէ զջորին այլ պիտի
տայ՝ Թէ ոչ: Աստամամբ երդումն
արար. Թէ ջորին այլ քեզ. լուր
հանց ժամ չինէ: Ու մէկ այլ օրն
չինեաց. և ծառքն համբուրեցին
զիրեար: և Աշխարհն եղեալ է և
ոչ է սուտ:

Միայնակեաց մի նստեալ էր 'ի վի- ժ
մի միոջ. և կայր յառաջեն աղ-
բեւր մի: Ուկն առ աղբեւրն զօրա-
կան

կամ մի, և նստաւ անդ. եկեր զհաց, և ըմպեաց զջուր. և հինգհարիւր սպիտակ 'ի տեղւոջն եթող՝ և գնաց: Եկն մարդ մի այլ խմեաց ջուր՝ և եգիտ զդրամն, և գնաց: Եւ զօրականն դարձաւ 'ի խնդիր դրամին և չգտաւ զդրամն, և մարդ մի այլ եկեալ էր 'ի ջուրն: Եւ իսպահին ասաց տուր զիմ դրամն. և նա ոչ էր առեալ զդրամն, էզարկ և սպան զայն մարդ: Եւ միայնակեացն զարմացաւ. Թէ այս ինչ գործ էր. որ գործեցաւ: և 'ի զարմացմանէն 'ի քուն լեալ: Եկն հրեշտակ Տ̅ն և ասաց. Թէ այն իսպահու հայրն այն մարդոյ հօրն հինգհարիւր սպիտակ պարտէր. նա զիւր պարտքն էառ, և գնաց: Եւ այն մէկայլ մարդոյ հայրն այն զօրականի հայրն սպաներալ էր. նա զիւր արիւն էառ. և նա զիւր պարտքն, զի Ա̅ծ դատաստանն ճշմարիտ է աստ և 'ի հանդերձեալն:

Իշխանի միոյ որդին մեռաւ. և ծա
բերին զխաչն իւր սպասաւորք խաչին. և յերեաւ որդի իշխանին. զի էին ընտիրք սպասաւորքն այնոքիկ: Եւ եղև զի այլումեմն իշխանի որդի մեռաւ. և բերին զնոյն խաչն իւր՝ և ոչ յարեաւ: Եւ աղաղակէր հայր մանկանն, և ասէր. թէ խաչս այն խաչն է. և Ք՟ս այն Ք՟ս է. զի արդ ոչ յարեաւ մեռեալս: Եւ հրեշտակն երևեալ ասաց. թէ խաչս այն է, և Ք՟ս այն է: բեր զայն աջն, որ բունէր զայս խաչս:

Պբան աւետարանին, որ ասէ. ծբ
ուր գանձք ձեր են անդ և սիրտք ձեր եղիցին: Մեռաւ ոմն իշխան, որ ունէր բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ և յականց. և ոչ ասաց խոստովանահօրն: Եւ 'ի լուծանալն գտին բալանի մի յանթատակն. և տարան առ վարդապետն, և բացեալ զսնդուկն տեսին՝ զի սիրտ


արկեղն

արիւն աթաթախ կայր ելք ընչիցն՝ զի ճշմարտեալ է:

ԺԳ Աղբ այր ումն գնաց առ հայրն. և զամենայն յանցանս իւր խոստովանեցաւ. և տեսեալ յանուրջս հայրն զդատաստան եղեալ. և այրն այն մերկ, և մարմինն ամենայն հրալից ոլաքով ՚ի լի. և յորժամ խոստովանէր հրեշտակն աքցանով մէկ մէկ քաշէր զոլաքսն. զամէնն քարշեալ մի ևս այլ մնաց. և զարթեաւ հայրն, և պատմեաց. և ասաց, թէ այլ մեղք է մնացեալ որ չես ասացեալ. և ասէր այն, որ մի զկայր մի կատակ արարի. զի ցեխն ՚ի ներս ըղորդեցի, և զցամաքն թողի:

ԺԴ ՚Ի պատմութե՟ ժամանակի ասի, թէ ՚ի քաղաքին այր մի աղքատացաւ՝ և զարտ մի ունէր վաճառեաց. և այր ումն գնեաց զարտն զայն.

զայն • եգիտ երեք կարաս ոսկի • և յղարկեաց առ տէր արտին • և ասէր • եկ, առ զոսկին • զի վարեցից զարտս • և ասաց ոչ է իմ, այլ քո է : և նա ասէր , ես զարտն եմ գնեալ : և վիճէին ընդ միմեանս զբարուոք մարտն • և ձայն եղև 'ի պալատ թագաւորին , և թագաւորն , և պատրիարգն , և իշխանք քաղաքին եկին , և տեսին ամենեքեան • և դատաստան արարեալ՝ ետուն զմէկ կարասն յարքունիս • և զմէկն յեկեղեցին և յաղքատս՝ և զմէկն 'ի պէտս երկոցունցն • և ետուն զնր̅ դուստր ուստեր նր̅՝ և զարտն պռուքս • և սիրով միաբանեցին • և ցանեալ զարտն ցարեան • և 'ի ժամանակի հնձոյն երթեալ տեսին զի մարգարիտ էր պտղաբերեալ • և քաղեցին որցակ մի • և տարեալ 'ի կոստադինուպօլիս եդին 'ի յարկ թագաւորին վա̅ յիշելոյ : և գտեալ զայն յայլում ժամանակի

և խնդիր արարեալ գտին ծեր զմի
պատմեալ զամ միրատմիոջէ. և
փառս ետուն Ա՟յ:

ԺԵ Թագաւոր ոմն մեռաւ. և մնաց
երեք որդի. և պատուական ակն
մի. որ դնիմաց թագաւորութեան էր:
Եւ անդարձ արար. թէ վիճակաւ
յովանկանի ակն, զթագաւորութին
այն որդւոյն վայել է: Եւ գողացեալ
կրսեր որդին պահեաց: Եւ յորժամ
թաղեցին զթագաւորն՝ ոչ գտին
զակն, և ոչինչ հնարեցին: Եւ ասեն իշ
խանքն, թէ յայս անուն աշխարհ թա
գաւոր մի կայ իմաստուն՝ նա պիտի
գտանէ զակն: Եւ երեք եղբարքն
գնացին յաշխարհն յայն. և հանդի
պեալ ի ճանապարհին թագաւորի
ըղտապանին: Եւ ասաց ըղտապանն.
թէ չէք տեսեալ զուղտ թագաւո
րին՝ զի կորուսեալ է. Ասացին, թէ
երթ ընդ ճանապարհդ պիտի գտա
նես: և իմացեալ զպատճառս նց:

Եւ

Ու նք՟ ասացին թէ ուղտն քո կաղ
է: Ու մէկ եղբայրն ասաց, թէ միա
կանի է ուղտն: Ու միւսն ասաց. մե
դիհի ատամունքն խառն են: Ու զար
մնացաւ ըղտպանն, թէ զուղտն չէք
տեսեալ: Ու զիարդ զարատն գի
տէք: Ու նք՟ ասացին. թէ 'ի Ճանա
պարհին կաղ ոտն հետ ոչ էր արա
րեալ: Ու 'ի մէկ կողմն էր արածեալ.
ևայն դիհն որ ատամունքն խառն էին
լեալ զխոտն չէր հաւասար կտրեալ.
և հիացաւ ըղտպանն ընդ իմաստու
թ՟ն: Ու գտեալ զուղտն գնաց 'ի
քաղաքն, և պատմեաց թագաւորին
զիմաստութ՟ն: Ու եկին որդիքն
թագաւորին 'ի քաղաքն. և թագաւ
որ քաղաքին ուղարկեաց ն՟ց զուղ մե
խորոված, և գինի՝ և խապզի հաց.
Ու ն՟ց տեսեալ՝ մին եղբայրն ասաց
թէ ուլս շուն է ծծել: Ու մէկ եղ
բայրնասաց. թէ թագաւորն ձեր
խապզի որդի է եղեալ: Ու միւսն
թէ 'ի գինիս մարդոյ արիւն կայ: և

երթեալ պատմեցին Թագաւորին . և նա զարմացաւ յոյժ ։ Իսկ յետոյ հարցեալ . թէ զիարդ գիտացիք . և նոքա ասացին թէ շան միան կծկած երբ. խորովէն ։ և մարդոյ արեան փրփուրն սպիտակ լինի ։ և հայն 'ի խապղէն էր ։ Իսկ Թագաւորն հիացեալ կոչեաց զհովիւն . եհարց զպատճառն . և նա ասաց թէ ուղ-այն , մեռեալ էր մայրն , սովորեալ ծծէր զքած շուն մի . և հարցեալ զայգէպանն . և ասաց . 'ի կիթ այ-գւոյն կորեաւ դանակմի՝ անկաւ 'ի խաղողն . և 'ի կոխելն կտրեաց զոտն կոխողին , և արիւնն խառ-նեցաւ 'ի գինին . և մայր Թագաւո-րին ասէ . թէ քո հօր ժամանակն յոմ օր խապաղն հաց կուբերէր . և անկայ ընդ նմա 'ի պոռնկութի , և դու 'ի նմանէ ծնար ։ Իսկ Թա-գաւորն բերեալ վաղւեն զերիս եղբարսն . և նոքա ասացին զեւ-րեանց գանգատն ։ Իսկ ասաց Թա-

գաւ

գաւորն թէ աղջիկ մի խօսեցաւ
երիտասարդի միոյ նշանեալ՝ և հար
սանեացն զա̃մ ինչ պատրաստեալ
մինչ 'ի պսակն ։ Եւ այր ոմն երիտա
սարդ բռնութբ̄ խլեաց զաղջիկն՝
և տարեալ պսակեցաւ ։ և արար
հարսանիս , և մտին յառագաստն ·
և ոչ մերձեցաւ 'ի նա · և եռ տանիլ
առաջնոյ առն իւրոյ ոսկւով և մար
գարտով՝ և ա̃մե զարդարեալ ։ և
ոչինչ էառ 'ի նմանէ ։ Եւ ոռք 'ի նո
ցանէ թուի ձեզ ինաէփոլ · և ասաց
մեծ եղբայրն , թէ առաջինն · զի
ասաց թէ նր̃ խամմթէր · և ոչ 'ի
հետ գնաց ։ Եւ ասաց միջնեկն, թէ
ոչ · այլ յետինն էր ինաէփոլ · զի կա
րողացաւ մինչ 'ի պսակն , և յառա
գաստին ոչ մերձեցաւ 'ի նա ։ Իսկ
յետինն եղբայրն ասաց թէ առաւել
այն է զարմանալի՝ որ զոչինչ էառ
ամենևին յոսկւոյ կամ յարծաթոյ
կամ յականց ։ Եւ ասաց թագաւորն
թէ զակն դու ունիս ։ և գնա տուր
'ի

՚ի տեղին. իբրև լուեան գնացին խաղաղութեամբ ՚ի տունս իւրեանց։

ԺԴ Աղեքսանդր յամ՟ տեղիս ինքն երթայր էլչի։ Որ մի գնաց ՚ի պօղլիոս թագաւորն ՚ի մօտ. և նա եաղութ թասումն այախ ետ ՚նմա. նա խմեաց զգինին, և զայախն ՚ի ծոցն եդ. ասաց թէ էր արարեր՝ ասաց թէ իմ թագաւորի սահմանքն հանց է. և պօղլիոս հնազանդեցաւ. և քոյր պօղլիոսի իմաստասէր էր. ճանաչեաց զԱղեքսանդր՝ և ասաց, թէ արի, փախիր. թէ չէ յայս պահս կու բռնեն. և նա հեծաւ ՚ի ցլադլուխ ձին, և փախեաւ։

ԺԵ Յորժամ մեռանէր աղեքսանդր. անդարձ արար թէ զիս յիմ տունն տարէք, և յիմ ձ՟նիժին յառջեն, հազար մարդ ոսկի սինիով ակն և մարգարիտ առէք. և հազար մարդ մերկ և չուլ հագուցէք. և հա

հազար ձի զագին և զբաշն կտրեցէք. և քէշ և ըեղըիկ կապեցէք. և բուումբ՝ և աղեղունք. և հարիւրհազար սրաւոր յառաջ յղարկեցէք. նոյնպէս արարեալ տարան: Եւ տեսեալ կնոջն և մօրն ոչ արարին սուգ. իշխանացն հարցեալ թէ ընդէր ոչ արարիք սուգ: Ասաց մայրն, թէ իմ որդին պատուիրել է՝ թէ ճար կայր՝ ի մահուն փրկիլ. ես զայսմէնս նդեմ յղարկեցի. և ոչ մեռեց մահն, և սուգն պիտի մեռէ:

Աղէկսանդր հանդիպեցաւ յեղը աշխարհիս. եդիտ իմաստասէրս յաշխարհէս փախուցեալս մերկ. և կերակուր նոցա էր կաթն և բրինձ: Եւ ասաց թագաւորն աղէքսանդր՝ եկէք ընդ իս, և տամ ձեզ բազում ինչս. և ասացին իմաստասէրքն. թէ մէկ խնդիր ունիմք. թէ զայն կարես տալ մեզ հետ քեզ կուգամք: Ասէ թագաւորն զինչ- ԺԸ

նոքա

նոքա ասեն, թէ անմահութին կարես
տալ։ Ասաց թագաւորն զայրա
ցեալ՝ ոչ էք իմաստաւորք. ես մարդ
եմ մահկանացու. զիարդ տամ զան
մահութին։ Որդ զոր ունի զայն
կարէ տալ. զոր չունի զի արդ կարէ
տալ։ Իսկ ասացին իմաստաւորքն.
թէ յիրաւի գիտես որ մահկանա
ցու ես. և զիարդ զաշխարհս կու
աւերես։ Իսկ ասէ թագաւորն ես
չեմ աւերել։ Ա՛ծ ետես որ ամ̃
մարդ 'ի ճանապարհէ ելաւ. չար
և վատ չկայր. նա զիս 'ի ձեռն էառ
Ա՛ծ՝ և զաշխարհս ինձ կու խրատէ.
որ 'ի ճանապարհ գան. և հաւա
նեալ իմաստաւորացն լուեցին։

ԺԹ Պանդխտեալ աղէկսանդր յերք
տեղի մի հեծելոյն՝ և բերեալ
նուռն մի կտորեցին, և ելից զթափ
սին. և կոտրեցին զնուռն օրթուն.
և կուժն լցաւ գինով։ Իսկ խնա
ցեալ աղէկսանդր. հարցաւ՝ թէ
ում

ում է այս տեղս․ և ասացին աղէկ
սանդրի։ Ու խորհեցաւ չարիս առ
նել․ և բարին այն խափանեցաւ․
և չորսհինգ նուռն զթափսին այլ
չէր լնուլ․ և այլ ՚ի նռնէն կուժն
չէր լցվիլ։ Ու ասացին թէ մեր թա
գաւորին սիրտն ծռեալ է հետ մեզ։
Աղէկսանդր բազում զօրօք իջեալ
՚ի կղզի մի ծովուն ամենեքեան
կրակ վառեցին։ Ու սկսաւ կղզին
՚ի շարժիլ․ և իմացեալ ՚ի նաւ մը
տին․ զի կրիա էր։ Օ ի ասեն իմաս
տասէրքն․ թէ յաշխարհս երեք
կենդանի կայ․ որ քանի շատ ապրի
մեծանայ՝ մէկ կրիայն․ մէկ օձն․
մէկ ձուկն՝ որ վիշապ լինի։

Աղէկսանդր բազում զօրօք պա Ե
տահեցաւ ՚ի տեղի մի, և եղև
ձիւն մեծ։ և սկսան զօրքն ՚ի սովու
կոտորիլ։ Ու ասաց թագաւորն․ թէ
այժմ զայժմուս զվաղին պարտէ
հոգալ․ յորժամ յաստից աղատիմք
զայն

զայլ վաղւն հոգամք ։ կոտորեցէք
զձկանդ, և կերէք ։ Նմանք ասեն թէ
մահուամտն է ասացել՝ վասն այնո
րիկ զձկու միան կուտէ մսլման
ազգն ։

եա Զոր մի ըմբռնեցին մի գողութեն.
երկու շաբաթ խիստ չարչարե
ցին ոչ՚ի խոստ երեկ ։ Նա յորժամ
զինքն զաւակն կախեցին, և մէկ փայտ
զարկին. և գոչեաց հայլին և՚ի խոստ
եկն զգողութին ։ Նա ասացին, թէ եր
կու շաբաթ զքեզ չարչարեցինք.
և դու ոչ ասացեր. և մի մէկ փայտն
զաւակին քոյ վաղվաղակի ասացեր ։
Նա նա ասաց՝ թէ իմ մարմինս յիմ
ծնողացն էր, ոչ ցաւէր՝ որ յոր
ժամ զիմ որդին ծեծէին ։ Մարմին
նորա յիմ յաղեացս էր՝ խարշեցաւ
աղիքս՝ և ասացի ։ Նա գութ ծնո
ղացն և Մ.Յ համեմատք են. զի յոր
ժամ ծնողն զզաւակն ծնանի ։ թէ
գութն չէր յորժամ մէկ ծնող ծնա
նէր,

նէր, այլ ոչ ծնանէր. և ոչ հոգայր
հեշտութեան, ա՛խ, աւաղ ես։

Մարդ մի գերեզմանակնոր. օր մի ԻԸ
զլխաթուն մի թաղեցին շատ ըն-
չիւք. և 'ի գիշերին եկաց զգերեզ-
մանն, և մերկացոյց մինչ 'ի ներքին
հանդերձն։ Իսկ կինն ափցի յերեւմն
եզարկ, և ասաց. Մէ եօթն տղայի
մայր եմ, և զարեան յերդիքն եկեր
եմ տեսեալ։ Իսկ դու չես վախիլ
յԱ՟Յ. որ զիս հրապարակ կառնես։
Իսկ ասաց՝ թէ աղքատ եմ. և ապրինք
չունիմ։ Իսկ ասաց՝ թէ հետ ինձ գե-
րեզման մի կայ՝ երեք գանձ կայ՝ առ
և տարեալ ծախէ, և քեզ ապրանք
արա։ տարաւ 'ի ծախել։ Իսկ առեալ
առաջին շինեաց ոսկի շիշ՝ և եած
'ի մէկին ականջն, նա 'ի մէկայլ
ականջն 'ի դուրս ելաւ։ Իսկ մէկ
այլին եած դնաց մինչև 'ի կէսն. Իսկ
'ի մէկայլն եած ամէնևին ոչ մտաւ.
և զայն այլ խեղացընկէց. Իսկ ասաց

ինչ գինն կուզես · և մեկին տասնհա
րիւր դրամ երետ ։ և ասաց զխաս
լխաթն ։ Թէ այն որ չիշն 'ի մեկալ
դիհն եյաւ · ամենևին բանն յա
կանջն չէ պահել · 'ի մեկ դիհն 'ի
ներս է մտել · 'ի մեկալն 'ի դուրս
ելեր ։ Ու մեկալն ամենևին բանն
տեղեք չէ տուել ։ Ու այս մեկալն
գին չկայ · զինչ բարի բան լսեր է
զամենն պահեր է · և այս գանգս
ամեն ցաւոց դեղ է ։

եգ Յաշխարհիս հինգ բան 'ի մարդկա
նէ անգիտելի է ։ Մեկ որ մարդ
զմարդոյ խորհուրդն չի գիտել · և
ոչ հրեշտակք , և ոչ դեւք ։ Երկու
որ յաւուրս 'ի վաղն չգիտեմք թէ
ինչ պիտի լինի ։ Երեք որ զինչ
որ սկսնումք չգիտեմք թէ յինչ իրք
պիտի աւարտի 'ի բարի թէ 'ի չար ։
Չորս որ մահու օրն անգիտելի է ։
Հինգ զկատարածի օրն չգիտեմք ։
Երեք իրք որ զմարդն 'ի չարէն 'ի

զատ

զատ կուպահէ. խիղճմտացն՝ և երե
սին ջուրն. և բնական խելքն. նորև
զառաջնորդ և ղլաուզ է։

Թագաւոր մի յիւր խաղինան հա Իզ
զար ակն ունէր պատուական։ և
մէկն առաւել պատուականէր։ Նու
ունէր միամիտ խաղնադար մի. և
օր մի խաղինադարն զայն ակն փո
խեց. և Թագաւորն եկեալ տեսա
նել զակներն. և ետես՝ որ մէկ ակն
փոխածէր. և զխաղինադարն բա
զում ժամանակ չարչարեաց. և 'ի
խոստ ոչ եկաւ. և չէր զիմիչ առ
նել որ սպաննէր։ և ոչ զակին Թարկն
տալ կարէր։ և խմատաէր մի
տայ՝ ես առնում զակն. և տարաւ
յանդէտ մարդոյ խմոտ զնդան
ձգեց. և հարցաւ անդէտն զպատ
ճառն։ և ասաց։ Նա ասաց, Թէ
քարին համար ինչու զնդան ես
մտել։ և ձանձրացաւ, և ետ զակն
'ի խօջայ մի։ Նա շքատացաւ, ոչ

արուեստ գիտէր, և ոչ կարէր մուրալ: գնաց ՚ի խօջայի մի մօտ, և ասաց. Թէ հազար ստակ ՚ի փոխ տուր. նա չէր ետ. նայեց որ չէր ետ: Նա գնաց ՚ի ղատին. և ասաց Թէ այս անուն խօճայ՝ տասնհազար ըստակ պարտի ինձ. ոչ Թուխթ ունիմ և ոչ վկայ: բեր որ դատեմ. ղրկեց, և բերեր: Եւ ասաց, Թէ երեսուն ջրի գինն զինչ է: Ասաց ղադին. տասն հազար ստակ. ասաց Թէ երէք տարպայ զիմ երեսուն ջուրն ձգելեմ. և ասաց ղադին, Թէ տուր տասնհազար ըստակ:

Իե Մարդոյ մի բազրկանի զբեռներն տարան, և աղքատացաւ. և դռնէ ի դուռն կու մուրայր. և սովորեցաւ ՚ի յայն: Որ մի ՚ի տեղ մի օԹեցաւ. և գօմէշ մի քենով զիւրեն ժողոված հացերն կերաւ, և եղաւ զգօմէշն ջլատեց: Եւ ելեալ վաղչինեն տեսին, և բռնեցին ըզ

մար

մարդիկքն· թէ ով արել է։ և եկեալ աղքատն ասաց, թէ ես եմ արել· և ասաց զիւրեն աղքատութեն պատճառն· և ասաց՝ թէ յորժամ մուրացած հացն 'ի փորն մտաւ այլ 'ի տուն չի պիտէր կենար· և հալալ վաստակ առնէր· ոմ̄ն որ ես յիմ տունն չգնացի։

Մարդ մի յեն̄էմ կերթյր· և հորեւր ֆլորի մարդոյ մի մօտ ամանաթ եդ և գնաց։ Երբ երեկ՝ ասաց տուր զիմ ամանաթն՝ նա ուրացաւ թէ տուեալ եմ· և տարաւ յեր դուռն։ և զֆլորին 'ի դաւաղանին մէջն էր դրել· և երետ զդաւաղանն 'ի ֆլորուն տէրն· և եդ զձեռն իվ̃ր մեծ խաչին, և երդուաւ՝ և ոչ ինչ նշան եղև։ Նա տրտմեցաւ այրն՝ և 'ի քուն եղև· և տեսաւ յի րաղի· զի ասաց փոքր խաչն 'ի մեծն՝ թէ յեր ոչ պատուհասեցեր· և ասաց մեծ խաչն թէ Նայ̄ դատաստանին Իզ

 եմ

եմ թողեր։ Եւ ասաց փոքր խաչն, թէ ինչ Տ՛Ջ դատաստանն է, այն մարդն կու թերահաւատի. և զարթեաւ՝ և ուրախացաւ։ Եւ ասաց թէ արեկ ՚ի փոքր խաչն երդուիր։ Եւ եկեալ եդ զձեռն իւր ՚ի փոքր խաչին, և փակեցաւ ՚ի ձեռն. և իբրև զհուր վառեցաւ, և կանչեց թէ Հանդ Փլորին ՚ի գաւազանիս մէջն է։ եկաւ, և ուրախացաւ։

ԻԵ Թագաւոր մի իւր իւրոյ աշխարհին ՚ի ժուռ գայր, և տեսանէր. և եկն ՚ի քաղաքի մի եղեր։ Եւ ահա տեսան այր և կին, ունէին զհաց, և զկաթն, և զգինին. և թողեալ զանոյշ կաթն, և զգինին, և զհացն. և զաղբն ուտէին. և զգողն խմէին։ և Թագաւորն ետես իւրեանց անմտութիւն՝ և բարկացաւ. Հրամայեաց թէ սպանէք զդոսա, և սպանին։ Ցուցանէ։ Թագաւորն Տ՛Ջ է. և այնք որք զկաթն, և զգինին,

և

և զհացն թողեալ էին․ զաղբն ու-
տէին, և զգողն խմէին։ Ադքա են․
որք թողուն զուրբ պատկն․ և զնո
ամուսնութիւն․ և երթան պոռն-
կին, և շնան։ Այս ամենայն որ թո-
ղուն զիւր ո͞ր ամուսնութիւն․ և զպա-
տուական անկողինն․ և երթայ
յայլ կին․ որ ոչէ իւրն։ Ադքա զերդ-
զայն տասն այլն և կինն են․ որք
զաղբն ուտէին․ և զգողն խմէին։
Այս թագաւորն Ա͞ծ է․ որ յաւուր
դատաստանին զպոռնիկն և զշնա-
ցողն, ընդ մարդասպանին, և ընդ ա-
ւրինահերցն տանջէ, թէ ոչ դառ-
նան և ապաշխարեն։ Այս ասէ Պօղոս․
զշուն և զպոռնիկս դատէ Ա͞ծ։

Թագաւոր մի զբարձր և զուղորդ- Եր
զախն մի կանգնեաց․ և մարգա-
րիտ մի գեղեցիկ և մեծագին խլը-
սեանն եդ․ և ասէ, թէ մարդ որ ընդ-
այս սիւնս ՚ի վեր ելանէ և առնու
զմարգարիտն․ ես տամ նմա զմար-

գարխոն։ Եւ ժողովեցան բազում
մարդիկ, և ոչ կարէին ելանել ընդ-
սիւնն' ի վեր։ Եւ եկն այր մի և եխած
զորունան, և զանդամն, և զձեռսն․
և զբազուկսն, և պատառեաց՝ և ա-
ռիւնն հեղաւ․ և խածատած տեղին
եղև զերդ սանդուխտ․ և ձգեալ
զձեռն գրկեաց զսիւնն, և ել․ և
եառ զմարդագարխոն․ Թագաւորն
դովեաց զայրն, և ետ նմա զմարդա
րխոն։ Ցուցանէ․ Թագաւորն Քս
է․ և այն սիւնն զոր կանգնեաց մարդ-
կան, է պատուիրանն Այ․ զի մար
դիկ սակաւ պահեն զօրէնսն․ ով
մարդիկ․քն այնոքիկ՝ որք ոչ կարէին
ելանել ընդ սիւնն։ Եւ մարդագարխոն
այն է, զի Քս պարգև խոստացաւ
մարդկան․ որ և բազումք ցանկան
գտանել զմարդագարխոն զայն, և ոչ
կարեն։ Այլ նորա առնուն զմար
գարխոն․ որք զիւրեանց մարմինն
տպանեն վասն արքայութեն Այ․
Մարտիրոսքն, և արդարքն, որք հե
զին

զին զարխունս կուրեանց վ̃ս Տ̃ն․ ում
այրն այն որ բաղում նեղութ̃է եղ
ընդ սիւնն, և էառ զմարգարիտն․
և զանանց բարին։

Թագաւոր մի ունէր գեղեցիկ այգի․ և յեզերն խոր խանդակ․ և փայտիւ և տախտակով կամուրջ կիւր ձգած․ բայց 'ի գիշերն քար չէին զկամուրջն։ Նա որ 'ի գիշերն գայր 'ի վիհն անկանէր․ և ում 'ի ցորեկն գայր յայգին մտանէր։ Այգին է Արքայութիւն, և վիհն դժոխք․ և կամուրջն բարի գործն․ և ցորեկն այս կեանքս։ Իսկ գիշերն մահն․ ուրոր ունի զբարի գործս նա անցանի յարքայութիւն․ և որ ոչ ունի, իջանէ 'ի դժոխս։ ԽԹ

Թագաւոր ումն ետես տեսիլ․ զի երկնէ զանձրև իջանէր աղուէսս։ Նա քարոզ հրամայեաց կարդալ․ եթէ ով զինչ մեկնեսցէ տեսիլ․ հա Ծ

զօր դահեկան տաց նմա. եւ լու
եալ այր ոմն աղքատ։ Եւ երթեալ
ասաց. եթէ երկու աւուրս տացես
ինձ ներումն, յայտնեցից։ Եւ եր
թեալ շրջէր յանապատի խոկա
լով. եւ վիշապ մի տեսեալ զայր տա
րակուսեալ՝ ասաց. զինչ ինձ տա
ցես, եթէ զտեսիլ թագաւորին
քեզ յայտնեցից։ Եւ նա ասէ. զոր
ինչ խոստացաւ թագաւորն, քեզ
կէսն եղիցի։ Եւ ասէ, երթ, եւ ասա.
թէ ժամանակ է այսուհետեւ, զի
մարդիկք ենգաւորք եղիցին. եւ
խաբեբայք իբրեւ զաղուէս. եւ եր
թեալ ասաց. եւ հաճոյ ասացեալն
թուեցաւ, զի նմանն այնմ իսկ էին
մարդիկքն. իսկ ետ հազար խոստա
ցեալ դահեկանսն. եւ այրն ստեաց
վիշապին, եւ ոչ դարձաւ անդրէն։
Եւ զկնի դարձեալ զայլ ետես տե
սիլ. զի իբրեւ զանձրեւ իջանէր ոչ
խար. եւ հրամայեաց կոչել զայրն.
զի նմանն առաջնոյն մեկնեսցէ։

Եւ

Իսկ նր՝ զնոյն խնդրեալ ներքումն. և
ամաչէր երբեք զպատերազմ. և եր
թեալ առ վիշապն զանձն պար
տաւորելով. ասաց՝ մեղայ. բերդ.
յայտնեա զերկրորդս. և մեկնեաց
նմա ոչ յիշելով զյանցումն։ Իսկ
ասաց, երթ, և ասա. Թէ ժամանակ
գայ. և եկեալ է. զի մարդիկ.ք երբեք
զոչխար պարզամիտք իցեն. և ե-
կեալ պատմեաց։ Իսկ այնմ ևս հա
նեալ ետ նմա հազար ևս դահե
կան։ և առեալ առն տարաւ վիշա
պին. ընդ առաջնոյն, և ընդ վերջ
նոյն հազար դահեկան։ Օկնի այ
նորիկ դարձեալ այլևս ետես տեսիլ.
և ահա երբեք զանձրև իջանէր սու
սեր։ Իսկ հրամայեաց դարձեալ
զայրն կոչել՝ զի զայն ևս մեկնես
ցէ. և առն զնոյն խնդրեալ ժամա
նակ. և երթեալ առ վիշապն. և նա
առ ժամայն մեկնեալ երբեք բարե
կամի։ Երթ, և ասա թէ ժամանա
կէ. զի մարդիկ.ք յարեցեն բռնաւ

որ.ք

որք՝ և սուսերաւորք։ Նա զայս ու
սեալ առն ասաց. ընդէր այժմ թո
ղից վիշապիս վեցհազար դահճե
կանս. և կամ հինգհարիւր այլ
ևս բերից։ Հարից զվիշապս, և սա
տակեցից։ Եւ ջանաց հարկանել զվի
շապն՝ և ոչ յաջողեցաւ նմա. զի
խոյս ետ՝ ի նմանէ վիշապն։ Նա առն
զղջացեալ խորհէր թէ չարիս գոր
ծեցի. զի թէ այլևս հարկ հասանի
ցէ. ո՞վ եկեցաւ սա։ Նա տեսեալ
վիշապն զայրն սորջացեալ ասաց
նմա. այր դու մի որոտմիր. զի յանձ
նէ ինչ ոչ արարեր. այլ՝ ի բերմանէ
ժամանակի։ Ո իսատելն.քո՝ ի կեղ
ծաւորաց ժամանակն է. և զղջա
նալն, և տալն զհազար դահճեկանն
՝ի միամտաց ժամանակն։ և կամիլն
ապանանել՝ ի բռնաւորաց ժամա
նակն։ Ոչ այլ ինչ առակս ցուցանէ.
բայց զժամանակին գիտել զմար
դիկ.ք. և զգուշանալ յանձանց.
զի զզանազան բերէ ժամանակս
զմարդ.

զմարդ․ և երբեմն նենգաւորս․ և
երբեմն պարզամիտս․ և երբեմն
բռնակալս․ և նման այսորիկ այլս
բազումս։

Թագաւոր մի կայր՝ և չունէր ժա Ծա
ռանգ աթոռոյն իւրոյ․ ոչ դուս
տր՝ և ո՛չ որդի․ բայց քրոջ որդի
մի միայն ունէր։ Եւ կամեցաւ զնա
թագաւորեցուցանել․ և ժառանգ
առնել աթոռոյն իւրոյ։ Եւ թա
գաւորն զնա յոյժ սիրէր․ զի էր իմ
աստուն մանուկն այն՝ և կարի աղօ
թաւէր․ և չարացաւ ընդ նմա մեծ
նայիպ մի։ Հնարս իմացաւ, թէ ո՞պ
չարախօսեսցէ զքրոջ որդին առ
թագաւորն․ զի ինքն կալցէ զթա
գաւորութիւն նր յետ թագաւորին։
Եւ յաւուր միում ասէ ընդ քրոջ
որդւոյ թագաւորին․ թէ բերան
քո հոտեալ է, և դու ոչ գիտես․ եր
թաս, և նստիս առ թագաւորն․ և
գէշ հոտերթայ առ թագաւորն․
և

և նա բարկանայ քեզ. և քուրոջ որ
դլին ասէ՝ ապա զինչ առնեմ: Ասէ
նայիւն, թէ յորժամ նստիս զե-
ջեալ, յայլ դից արա. և նա ասէ այո:
Երթայ նայիւն առ թագաւորն.
և չարախօսէ՝ և ասէ. թէ քուրոջ
որդիդ քեզ չար կու խորհի: Եւ
նա ասէ. զինչ գիտես. և նայիւն
ասէ. թէ յորժամ հետ քեզ նստի,
զերեսն յայլ դից պիտի դարձնէ.
զի կամի զքո թագաւորութիւն առ-
նուլ՝ մինչ դեռ կենդանի ես: Եւ
թագաւորն ըստ իւրում սովորու-
թեն կոչեաց քուրոջ զորդին առ
ինքն, և նա ոչ գնաց վն բերանոյ հո-
տոյն՝ զոր ասաց նայիւն: Եւ երբ և
սախալեաց, գնացեալ նստաւ առ
թագաւորն. և զերեսն յայլ դից ա-
րար: Եւ թագաւորն երկմիտ եղև՝
և կամէր սպանանել զքուրոջ որ-
դին. և յայտնի ոչ կարէր, զի քու-
րոջ որդի էր: Այլ դիր ուղար-
կեաց նովաւ առ վերակացու երկա-
թե

Թիւքմանին. և գիրն այս էր գրեալ։ Եւ է առաջին մարդն՝ որ առ ձեզ գայ՝ 'ի կրակն ձգեսջիք, որ այրի. և թէ ասէ՝ թէ ես թագաւորին քրոջ որդի եմ՝ կամ նայեակն. մի լուիք. 'ի կրակն արկէք՝ որ այրի։ Եւ յուղարկեցին զքրոջ որդին թագաւորին յերկաթի քանն՝ զի արկցեն 'ի քուրայն որ այրի։ Եւ յորժամ էհաս երեկոյին ժամն. ի մէջ լերինն անմարդաբնակ տեղի լսեց զձայն ժամահարի. և ասաց 'ի միտս իւր՝ թէ ԱԾ թագաւորաց թագաւոր է. զԱՅ հրամանին պարտէ կատարել յառաջ, ապա զիմ.քեռուն։ Եւ գնացեալ եկաց յաղօթս և եկաց գիշերն անդ. և աղօթեաց առ ԱԾ։ Եւ եղեալ չարախօս նայեակն 'ի ձի գնաց յերկաթի քանին դուռն. թէ ոչ է ձգած՝ ինքն տայ ձգել։ Յայնժամ առին զինքն և արկին 'ի կրակն։ Եւ յորժամ լուսացաւ եկն.քուրոջ որդին թագաւորին.

րին. և տեսեալ զեղեալ գործսն զարմացաւ 'ի սքանչելիսն Ա՟Յ. զի աղօթք էին իւր պահապան։ Յուսանէ առակս։ Թէ աղօթիւք ազատի մարդ յա՟մ չարէ. ո՟պ երէք մանկունքն ի մէջ հնոցին. և Դանիէլ յառիւծուցն. և Երեմիայ ի մէջ տղմին. և տէրն Գրիգոր 'ի խոր վիրապին ի մէջ թունաւոր յօձիցն։ Եւ ինչ աղօթ արար կայ. իւր աղօթքն զինքն արժանի Ա՟Յ առնէ. և յա՟մ փորձանաց պահէ Ք՟ս Յ՟ս մեր ամէն։

Լ՟Բ Թագաւոր մի անիրաւութե առնէր. և ունէր զորդի մի բարի. որ ասէր, և խրատէր զհայրն թէ զանիրաւութե մի առնէր. և նա ոչ լսէր որդւոյ իւրոյ։ Եւ որդին ասէր թէ չերկնչիս դու յԱ՟Յ զանիրաւ դատաստան առնելով. զի աւետարանն հրամայէ վասն թագաւորաց. թէ որով դատաստանաւ

նաւ դատէք դատեւլոցէք. և ա՛մ
Ո՞ճաշունչ գիրք զայս ասեն: Եւ
յաւուր միում բարկացաւ, և աք
սորեաց զորդին իւր՝ և զկին որ
գոյ իւրոյ գնալ յօտար աշխարհ:
Եւ առեալ որդին թագաւորին ըզ
կինն իւր՝ և գնաց ոչինչ ունելով
զհետ իւր: Եւ երթայր ՚ի քաղաք
մի. և ետես զնա ոմն իմաստասէր.
զի գեղեցիկ էր տեսլեամբ. և ասէ
՚ի միտս իւր: սա կամ թագաւոր է,
կամ թագաւորի որդի: Եւ գնաց
յառաջ՝ և մեծարեաց ՚ի տուն իւր.
և ասէ: Ուստի գաս, և կամ յո՞
երթաս. և նա զիրաւն ասաց: Եւ
առեալ նմա դարպաս մի մեծ զի
կացցէ անդ՝ մինչև հայրն խնդիր ա-
րասցէ. և զի ոչինչ ունէր որդին թա
գաւորին, զի զպէտս տանն գնէր.
զի կարի դատարկէր: Եւ ելեալ
գնաց ՚ի մշականոցն՝ զի կալցեն զնա
՚ի վարձու՝ և ոչկալան զնա: Եւ նա
գնաց ՚ի հանգուցեալ եկեղեցին.

և անդ աղօթեաց մինչև յերեկոյ,
և գնաց դատարկ՝ի տունն իւր։ Իսկ
ասէ կինն, թէ ուստի գաս. զի այնքա̃ն
գիտէր թէ կերակուր ունէր։ Իսկ
ասաց որդի թագաւորին. թէ այն
մարդն, որ զիս՝ի վարձու տարաւ.
նա ասաց թէ վաղն եկ բանեց՝ որ եր
կու աւուր վրձն մէկ տալոյ տամ։
Իսկ ասաց կինն բարի է։ Իսկ գնաց
վաղիւն, և ոչ կալան զնա՝ի վարձու.
և նա գնաց յեկեղեցին, այն և աղօ
թեաց մինչև երեկոյ. և գնաց դա
տարկ՝ի տունն։ Իսկ համարէր կինն նր̃
թէ կերակուր ունէր՝ զի երկու օր էր
որ անօթի էր։ Իսկ ասաց այրն դար
ձեալ՝ թէ այն մարդն որ զիս՝ի վար
ձու կալաւ. նա ասաց թէ վաղն այլ
եկ բանեց. և ա̃ն երեք աւուր վարձն,
և գնա։ Իսկ կինն ասաց թէ բարի է.
և գնաց վաղուեան օրն՝ և ոչ կա
լան զնա՝ի վարձու. Իսկ նա գնաց
յեկեղեցին, և աղօթեաց. և յոր
ժամ ճաշք եղև եկեալ լուսակերպ
այր

այր մի, որ էր եկեղեցին այն. և ըն-
րեալ եմ երեք ակն պատուականս
և գեղեցիկ՝ երից աւուրց վարձն,
և ետ'ն կինն. Նու ասաց լուսաւոր
այրն. թէ զմէկն ծախէ, և զտան
պէտն տես, ասաց որդի թագաւո
րին: Նու երկուքն պահէ. զի ա-
մէն ակն երկու հարիւր դահեկան
արժէ, որ է կարմիր. և արար նոյն
պէս՝ զոր պատուիրեաց լուսակերպ
այրն. և յորժամ եկն որդի թա
գաւորին. ետես, զի կինն երկու
ակն ետ ինքն: Նու ասաց որդի թա
գաւորին. այս ինչ է: Նու նա ասէ,
դու ուղարկեալ էիր զլուսաւոր
այր մի: Նու ունէր զերիս ակունս զե-
րից աւուրց վարձն. և զոր պատուի
րեալ էիր դու ինձ զայն արարի,
նոյնպէս եղև: Յայնժամ դիտաց
որդի թագաւորին զքանչելին. և
ետ փառս ԱԾ: Յուցանէ առակս
թէ որ ԱԾակոյս կողմանէ լինի և
համբերէ. նա ԱԾ ոչ թողու զնա

ոմ̃ զաբրահամ. և զիսահակ. և զյակօբ և զամ̃ սբ̃ս. որք համբերեցին վասն անուան Տ̃Ն և պսակեցան յԱ̃Յ. նոյնպէս և ամ̃ մարդ:

ԼԳ Ագռաւու մի պանիր ունէր 'ի բերանն, և նստէր 'ի բարձրաւանդակ տեղւոջ: Իսկ աղուէսն փորձ առնոյր 'ի նմանէ հանել զպանիրն: Եւ մատուցեալ մօտ անդր և զակն 'ի նա հարեալ. երանի տայր բնութենն. զի սեւաթոյր գունով և գիշերոյ մանուկ. և վայելէ քեզ ծաղկիլ 'ի գունոյդ: Այլ և զօրութիւդ քո 'ի քեզ. որչափ ոչ այլում բայց և իմաստութիւդ. և ոչինչ ևս արգել ունէր զթագաւորութե. զարծուոյ զանց արարեալ ամենեւին: Եւ թագաւոր հաւուց եթէ ձայն դոյր, և ոչ ամենեւին կարօտ գտանէիր յիրիք: Արդուեցաւ 'ի գովութեն ագռաւուն. և զմեծաձայնութե ցուցանել կամեցեալ. եբաց

ծռեաց զբերանն, և գոչեաց յոյժ մեծ. և պանիրն 'ի վայր անկեալ որս լինէր աղուեսուն: Եւ նա առեալ կերակուրն. ձայն քո 'ի քեզ ասէ, կարի քաջ ով ագռաւ. բայց 'ի միտաց պակաս ես: Զայս առասպելս գիտելով. մի երբէք պատրիցիս 'ի սուտակասպաս գովութէ:

Մի յառաւկաց. արծուին, և կաքաւն խիստ չարկամացան և արծուին անդադարնեղէր զկաքաւն. և անհանգիստ պահէր: Գնաց կաքաւն և եբեր լորն բարեխօս որչափ թռչունք կայր առ արծուին. և նա չէառ յանձն՝ և ոչ հաշտեցաւ հետ կաքաւուն. կաքաւն նստեալ կայր. լայր, և հանէր արտասուս պըղտոր: Եկն ըզէզն. և ասաց կաքաւն զիւր գանգատն. և էառ տարաւ զըզէզն առ արծուին բարեխօս: Եւ արծուին ոչ լուաւ աղաչանաց ըզէզին. զայրացաւ ըզէզն. և ոխացաւ ԽԴ

ցաւ հետ արծուոյն. քանի արծուո
յն զձուն հանէր. երթեալ բզէզն
ելանէր 'ի բոյն արծուոյն. և գլո
րէր և ձգէր 'ի վայր զձուն. և կոտո
րէր: Իսկ բազում ժամանակս անոր
դի առնէր զարծուին. Իսկ գնա
ցեալ արծուին էած զձուն իւր 'ի
գոգ Թագաւորին. և իմացեալ բզէզն
եմուտ ի մէջ ոտից նորա. և էխած զծայր
երանացն. և նա ելեր վաղեաց. և
ընկեցեալ բեկաւ ձուն: Ցուցանէ:
Որ թէ հնար իցէ բնաւ մի առնէր
քեզ թշնամի զոք 'ի մարդկանէ.
թէ պէտ և աղքատ և տկար լինի:

ԼԵ Որսորդ մի կալաւ զկաքաւ մի,
և կամէր զենուլ. և ասէ կա
քաւն մի սպանաներ զիս. զի ես խա
բեցից զբազում կաքաւս, և ածից
յակնատս քո: Իսկ ասէ որսորդն. և
այժ առաւել մեռցիս 'ի ձեռաց
իմոց: Զի զընկերս քո' և զազգա
կանս մատնես 'ի մահ: Ցուցանէ:

Թէ

Թէ մի կազմէր զորոգայթ սիրե-
լեաց. զի ոչ հաճի ԱԾ ՚ի գործս քո.
և դարձեալ քեզ պատրաստէ զնա։

Գղոռնես մի քաղցեալ՝ և եգիտ ԼԴ
սառն. և սկսաւ խածանել և ու-
տել։ Իսկ սառն վայ լինէ. զի ահագին է
դող դայլոյն և աղաղակս ՚ի գլուխս
իմ. և փորս իմ ոչինչ իջանէ։
Ցուցանէ։ Փառք և մեծութի աշ-
խարհիս զերդ երազ է. և միայն զա-
ղաղակ ունի, և զզուառումն. յետոյ
ոչ երևի, զի անցաւոր, և խաբեօղ է։

Հարցին ընդ աղուէսուն թէ քա- ԼԵ
նի ցեղ արուեստ գիտես.
Պնաց կկզեցաւ, և ասէ. հազար
ցեղ արուեստ գիտեմ։ Երեսուն
ազ ուղս առաջի շանն՝ թողթէ քա-
նի անձամբս։ Այս մեծ արուեստս-
այն է. որ ոչ ես զշունն տեսանեմ,
և ոչ նա զիս։ Ցուցանէ։ Թէ ան-
թիւքեն, որք ապաշխարեն զմեղս

և Ա͞յ լինելն։ Ապա նա է կատա-րեալ մարդ՝ որ ոչ մեղանչէ։

ԼԲ Այրի կին մի ունէր տղայ մի։ Եւ սկսաւ տղայն գողանալ միրգ և բանջար։ Եւ մայրն առեալ ճաշակէր և ոչ խրատէր զտղայն ՚ի կամս Ա͞յ։ Եւ նա ևս աճեցոյց զգողութիւն. եբեր անասունս, և անօթս. և այր եղեալ՝ եղև աւազակապետ ՚ի լերինս. և բազում չարիս առնէր։ Եւ կալեալ տարան զնա ՚ի կախել։ և ասէ բերէք զմայր իմ զի համբուրեցից զնա. և յորժամ բերին խածեալ եհատ զքիթ մօրն։ Եւ ասէ թագաւորն. ո՞ չար, ընդէր հատեր զքիթ մօր քո։ Եւ նա ասէ, զի ոչ խրատեաց զիս ՚ի տղայութենէ ՚ի կամս Ա͞յ. որ չէի յայս վիշտս անկեալ. յիրաւի արարի զայն. և թագաւորն հրամայեաց զնա արձակել՝ և զմայրն կախել։ Յուցանէ։ Վ.է ա͞մ ծնողք, որք ոչ խրատեն զոր-դիս

դիս նուրբանց 'ի կամս Ս. Յ. Նա ձեզ որդւոցն 'ի գլուխ ծնողացն է յաւուր դատաստանին:

Աղուէսն և խեցգետինն եղեն եղ- ԼԹ
բարք, և արարին ցան. հնձեցին, և կասեալ կուտեցին: Ասէ աղուէսն ելցուք 'ի բլուրս այս. և ով շուտ իջանէ նա առնու զցորեանն: Յորժամ ելին, ասէ խեցգետինն. որա ինձ սէր: Իսկ յորժամ կամիցիս վազել զարկ զագիդ առաջի իմ. որ ես իմանամ, և գամ զկնի քո: Իսկ զարկ աղուէսն զագին և վազեաց. և խաջափառն փակաւ աղուէսուն: և յոր ժամ էհաս աղուէսն 'ի շեղջն. և դարձաւ յետս թէ յուր է խեցգետինն: Իսկ խեցգետինն 'ի վայր անկաւ ի վերայ շեղջին, և ասաց. անուն Ս. Յ. այս ինձ երեք մոդ և կէս. զարմացաւ աղուէսն և ասէ. ով դու չար՝ երբ եկիր դու այսր: Ցուցանէ: Ա.է բան և գործ առ-

 նեն

նէն նենգաւոր մարդիկք, որ 'ի կո
րուստ լինին խուրճ անձանց. և տկարք
յաղթեն նմ̃։ Պարձեալ շատ մե
ղաւոր՝ այս տկար մարմնովս ջանայ.
իմաստութբ̃ և արտասուօք քաւէ
զմեղս. և տէր լինի երկնից հացին։

խա Առիւծն կալաւ իւր սպասաւոր
զաղուէսն, և ետ նշան. թէ
յորժամ արիւն տեսանես յաչս իմ.
յիմացիր որ իմ որսոյ ժամն այն է.
առիւծն և աղուէսն ուրախ լի
նէին։ Եւ հպարտացեալ աղուէսն
ելաւ յառիւծէն, և գնաց առ
գայլն։ Եւ արար իւր սպասաւոր. և
ասէ ցգայլն յորժամ լինի յաչս իմ
արիւն, և թէ ոչ լինի. երբ հար
ցանեմ, դու ասա այսպէս։ Եւ ասաց
գայլն թանձրագոյն արիւն կայ
յաչսդ. և նա ուրախացաւ, և նըս
տաւ յանցս եղանց։ Եւ ասէ գայլն
դու բախեա խլըն իմ. և 'ի գնալն
եղանց նա վազեաց յառաջ նմ̃ ոտ̃
տե

տեսանալ էր յառաւուծէն. և եղունգն
հարին զգլուխ աղուեսուն և սա
տակեցաւ։ Եւ ասէ գայլն՝ յանկարծ,
այժմ ստուգապէս թանձրացաւ
արիւն յաչս քո։ Ցուցանէ։ Թէ
ոչ վայելէ մարդոյ ձգտել աւելի
քան զկարն իւր. ոչ՝ ի հոգեւորն և
ոչ՝ ի մարմնաւորն։

Ասի յառաւակաց թէ ապուշէն ա- Խա
ռար թագաւորութէն վատսուն տա
րի. յորժամ ծերացաւ հանեն զնա
և բերին զայլ մանկագոյն. և եդին
իւրեանց թագաւոր։ Եւ նա էր
թայր լալով՝ ի ծովեզերն. և ահա
պատահեցաւ նմա ծառ մի թզենի
լի պտղով. և ելեալ՝ ի ծառն բնա
կեցաւ. և ուտէր՝ ի պտղոյն. և
գոհանայր զԱծ։ Եկեալ առ նա
մեծ կրիայ մի. սովորեցաւ և գայր
ոտս ծառոյն. և ապուշէն ձգէր
՝ի ծառոյն զթուզ. և նա ուտէր.
և գոհանայր զնմանէ։ Եւ յետ բա
զում

զուամ ժամանակաց առէ կրիայն ընդ ապուշէն, արէկ, որ տանիմ ըզքեզ 'ի կղզին առ ազգն իմ, որ պատուեն զքեզ. և քո աղէկին աղէկ առնեմ. զի գոհացեալ եմ զքէն, առ ազգն իմ։ Եւ ապուշէն հաւատաց նմա վասն երախտեացն զոր արարեալ էր ընդ նմա։ Էջ 'ի ծառէն, և նստաւ ի վերայ թիկանց կրիային. և սկսաւ գնալ 'ի ծովն 'ի ներս։ Եւ երբև հեռացան 'ի ցամաքէն. առէ կրիայն։ Գիտացիր սիրելի եղբայր իմ կապիկ. զի կին իմ հիւանդ է. և տատքն բժիշկքն. թէ զկապկի սիրտն և զերիկամունսն եփեցէք, ու զջուրն տուէք որ ըմպէ. որ ողջանայ. ըզքեզ այնոր համար կուտանիմ։ Կապիկն երբև լուաւ կանչեց իւր ամէն զօրութեամբն՝ և առէ. հազար վայ զիս, և շատ աւաղ է՝ որ չկայ 'ի հետս։ Դարձիր եղբայր, դարձիր. որ արծնատէր չլինիմ։ Սր առնում զսիրտն

զսիրտն իմ և զերիկամունսն իմ. զի
մեր սովորութիւն է որ 'ի ծառն կա
խեմք՝ յորժամ 'ի ճանապարհ եր
թամք. և շատոց առողջութիւն է
եղեալ Ր.էէ: Իսկ կրիայն հաւատաց
ապուզնայն. դարձաւ և գնաց
'ի ծառն տակն. և ապուզնայն վա
զեց և 'ի ծառն ելաւ: Իսկ ասէ
կրիայն՝ փութա՛ և եկ ճարտար՝ որ
ժամանեմք հեւանդին: Ասէ կա
պիկն. թէ ես այլ հաւատամ քեզ՝
և իջնում 'ի ծառէս. քան զէշն
անմիտ լինիմ. որ զերծաւ 'ի բերա
նոյ առիւծոյն. և անկաւ դար
ձեալ 'ի ձեռն կամաւ՝ և սատակե
ցաւ: Իսկ ասէ կրիայն, դատխայ Ր.Ա
զի սուտ ասացեր. և կապիկն ասէ.
դու դատխայ Ր.Ա, որ ինձ ղոտութին
ուսուցեր: Իսկ ասէ, վերջք է որ սուտ
ասրեցայես ոչ կարաւն, և չխոն. որք
խաբեցին, և ապրեցան: Ցուցանէ:
Թէ բարեմռուացն Ր.ծամռուաց է.
և թէ բարի առնես մարդոյ. և նա

ջանայ

Ջանայ քեզ չար առնել. դու հե-
ռացիր 'ի նմանէ :

խբ Է գազան մի յանմարդաբնակ տե-
ղիս. և են եղջիւրք իւր ոտ̄-
աղոց. և մտանէ 'ի մորենին և սկսա-
նի խաղալ եղջերօք ընդ ծայրս ծա-
ռոց. և ձուղք բարակք պատա-
ռին և կապին յեղջիւրս նր̄, և ոչ
կարէ արձակել՝ սկսանի գոչել. լսեն
որսորդքն, և գան սպանանեն զնա :
Ցուցանէ : Թէ կապիմք 'ի սէր և 'ի
փառս աշխարհի. և հեշտանամք
'ի մեղս, և 'ի պիղծ ցանկութիւ.
դիւրաւ գտանէ զմեզ սատանայ՝ և
սպանանէ :

խգ Է գազան մի 'ի ծովն. որ հուր ու-
տէ. գան որսորդք նր̄ և վա-
ռեն կրակ յեզր ծովուն. և իւ-
րեանքն թաքչին. նա ելանէ 'ի ծո-
վէն և փափագանօք լափէ զկայծա-
կունսն. և անկեալ թմբրի 'ի զօրու-
թէ

թէ հրոյն. և որսորդքն յարուցեալ հարուն զնա ունայն. և այս է, որ ասեն թէ մորթնք ՚ի կրակն ձգեն, և չայրի։ Ցուցանէ։ Աւէ մարդ բնակեալ է ՚ի ծով մեղաց և հեշտութե. և անշեղջ սրտիւ ուտէ զմեղս ջերմացեալս հրով ցանկութե դիւաց։ Եւ թմբրեալ կայ ՚ի մեղս մեծամեծս. նա որսորդն սատանայ անյաղթ գայ. և սպանանէ զհոգիս մեր։

Է գաղան մի, որ ձունք դնէ ՚ի պէտս բժշկութե։ Եւ յորժամ տեսանէ զորսորդն զի նեղէ զնա. նա խուր տառամօքն հատանէ զձուն խուր և ձգէ յորսորդն. և ինքն փախչի։ Ցուցանէ։ Աւէ զոր ինչ սատանայ սիրէ, և որով գայ զհետ քո. դու զայն կտրէ և հան ՚ի քէն. որ յիւր սերմանցն չգտանի ՚ի քեզ. և դու փախիր ՚ի նմանէ բարեգործութե։ խղ

Է գա

խե Էր գազան մի 'ի ծովու. յորժամ քաղցենայ բանայ զբերան իւր. և հոտ անուշ գայ 'ի բերանոյ նորա. և գան ձկունքն և մտանեն 'ի բերան նորա. և նա փակէ զբերան իւր. և այն է կերակուր նր։ Ցուցանէ։ Թէ այսպէս բացեալ է սատանայ զբերան իւր իբրև զառիւծ և զվիշապ. և հոտ անոյշ մեղաց գայ 'ի բերանոյ նր. և քաղցրանայ. և պարարտանայ 'ի քիմս, և 'ի հոտոտելիս հոգւոց մերոց։ Եւ մեք կամաւ երթամք զհետ հոտոյ մեղաց. 'ի գործել զմեղս մտանեմք 'ի բերանն՝ և 'ի փորն նր. և նա փակէ զբերանն իւր ի վր մեր. և մեր յամեալ 'ի մեղս. և անյոյս եղեալ յելանելոյն, մնամք անզեղջ։

խզ Էր մրակեց մի 'ի սահմանս գեղջ միոյ. և ագահամբ չարին անկաւ 'ի չնութն յոլով ժամանակս։ Եւ տանուտէր մի երբեր շուն մի

գաւթին և սաստիկ ուժեղ․ որ զբոլոր
գիշերն շուրջ անցանէր 'ի բոլորն,
պահէր զդեղն 'ի գազանաց: Եւ
ահա գայր միակեցն 'ի գիշերի շնալ
'ի դեղն պտունկութե: Եւ պատա
հեցաւ նմա շունն այն յեզր գեղջն․
դափեցաւ իվերայ միակեցին և է
խած զնա․ վարեաց զնա մինչև 'ի
խուցն իւր․ և բազում վիշտս և նե
ղութիս հասոյց նմա: Եւ նա եմուտ
'ի խուցն իւր փակելով զդուռն․
զղջացաւ, և սաստ լալով և հառա
չանօք․ թէ վայ ինձ: Ի՛ծ, այս բա
զում ժամանակ է որ ոչ երկեայ, և
ոչ զարհուրեցայ 'ի․քէն․ և սպառ
նալեաց․քոց և 'ի տանջանաց դժո
խոյն: Եւ այսօր 'ի գաւթին շանէ
միոյ հանց զարհուրեալ երկեայ,
և փախուցեալ ոչ կարացի շնալ:
Ո՛րդ՝ ողորմեա․Քո՞, և խլեա զիս
'ի ձեռաց սատանայի: Եւ 'ի ժամն
եթող զնա սատանայ․ 'ի պտունկու
թէն զղջացաւ, և ապաշաւեաց:

Ցուցանէ։ Աստ մարդիկ ապրեցան 'ի մեղաց և 'ի դժոխոցն յահէ սպառնալեաց թագաւորաց՝ և իշխանաց՝ և առաջնորդաց՝ և դատաւորաց՝ և յամօթոյ մարդկան՝ և 'ի նախատանաց. զի այս 'ի ձեռս է. և կան 'ի յուխտ և յԱ՜յն համարելոյ և 'ի հանդերձեալն։

խէ Այր միակեցմի, որ արար շնութիւն 'ի խուցն իւր. նա ձգէր զկնկուղն իւր և համկրիճէր. և սկսանէր սաղմոսել և ծունր դնել. լայր հառաչանօք և ջերմ արտասուօք։ Հարկանէր զերեսն և զկուրծսն. և ձողէր զմորուսն, և թքանէր 'ի նա։ Աւ ձանձրացաւ սատանայ յաղթելցն իւր. գայ առ նա 'ի դեշեր մի, և ասէ ցնա. դարշելի պիղծ, քանի ան հանգստես զիս՝ և նեղես. գաս, առնես զկամս իմ, շնաս և ուրախ առնես զիս. և դարձեալ զղջանաս լինէն, և առ Ա՜ծ դառնաս, լաս, և

հառաչես, և տրտմեցուցանես զիս։
Իսկ ասէ միակեցն. ո՛վ դու նզո
վեալ շուն. որ մեղօք քո դու զիս
'ի յայս խուցս դարաւորձ դաս։
Դու ուռամբ հարկանես զգլուխ
իմ. և յիմարեալ գործեմ զմեղս.
իսկ յորժամ զարթնում և խելք
իմ 'ի յիս գայ. և ես ուռամբք
դքեզ հարկանեմ. զի Ա՟ծ իմ ողոր
մած է, և ոչ թողու զիս 'ի ձեռս
քո։ Յայնժամ շնորհօքն Ա՟յ հա
լածեցաւ 'ի նմանէ դևն պոռնկու
թեան։

Էր միակեաց մի, որ արար շնութի խր
երեք տարի, և հայր վանացն հո
գետես էր՝ և ոչ կարէր իմանալ։ Իսկ
յաւուր միում իմացաւ հայրն զչար
գործ նորա. կոչեաց զնա և ասէ.
ասա ինձ ուր էիր յայսմ գիշերի. և
ընդէր բարկացուցեր զԱ՟ծ։ Իսկ
անկաւ առ ոտս հօրն և ասէ. մեղայ
Տ՟ր։ Այս երեք տարի է որ շնայի

և ասէ հայրն զինչ գործ առնէիր դու՝ որ Ա՟Ծ յինէն ծածկէր զքո չարն։ Եւ նա ասէ, թէ իմ սովորութին էր, որ ամէն գիշեր երթայի շր նալ. Ես ութ կանոն սաղմոսն, և զապաշխարութե՟ն շարականին լալով ասէի, և հառաչանօք՝ ի գալն. և յայսմ գիշերի ծուլացայ զիս սատանայ՝ և անյուսացայ. թէ չէ օգուտ։ Ես բնաւ զԱ՟Ծ ոչ յիշեցի՝ և ոչ սաղմոսեցի։ Ասէ հայրն, օրհնեալ է Ա՟Ծ, և ողորմութին և քաղրութին նորա. որոց կամի զկորուստ մարդոյ։ Որով հետև Ա՟Ծ ոչ յիշեաց զայն շնութին քո։ Նոյնպէս և ես թողում քեզ յայսմ գիշերիս ողորմութե՟ն Ա՟Յ։ Եւ նա դարձաւ առ Ա՟Ծ՝ և եղև այր կատարեալ ապաշխարութե՟բ և բարեգործութե՟բ։

ԽԹ Աատուն հագաւ փիլոն, և եղև կրօնաւոր. և ասաց մեծանցն թէ այլ չհեղում արիւն զի մտայ՝ ի կարգ ապաշ

ապաշխարութե̃։ Ասեն մկունքն,
թէ քեզ ոչ հաւատամք կեղծաւոր.
թե զմնոտոնի կարգն իմ̃ր քո տեսա
նեմք։ Յետ այսորիկ գնաց 'ի ջրա
ղացն ընկաւ թէ ես գերբն եմ, գայ
ին մկունքն և ասէին. ով դու չար,
ոչ հաւատամք, թէ դու գերբնես.
Յետ այսորիկ կատուն եղև սուտ
մեռեալ և յանցս մկանցն պառկե
ցաւ. գան մկունքն և ասեն. ով դու
նենգաւոր. թէ և պարկ լինի մոր
թիդ քո ոչ հաւատամք. ոչ թո
ղուս զսովորական չարութի̃ն քո։
Յուցանէ։ Որ մարդ չար չթողու
զիւր չար սովորութի̃ն։

Կարձեալ զկատուն լուսակալ ծ
դրին թագաւորին իմ̃ր ոսկի
բարձին. և արարին զգլխն. և
տային նց̃ 'ի կերակրոյ թագաւո
րին. և ասացին, թէ թողէք զսովո
րական բանս ձեր. և նորա ասացին
թէ ոսկւով ծածկէք զմեզ կամ մար

գարտով. ոչ կարեմք թողուլ զսովո րական բանս մեր։ Ո ի կատուն են բե րանն յորժամ տեսանէ զմուկն դո ղայ՝ և ոչ կարէ թողուլ զընթըմ թալն։ Ցուցանէ։ Ասէ զոր փոր ձես որ չէ բարքն անարատ. այլ նենգաւոր և չար. թէպէտ կեղ ծաւորի, և բարի առնէ մի հաւա տարնմա. զի ոչ կարէ թողուլ զսո վորական բարսն իւր։ Ո ի խիստ բա րի մարդ պիտի, որ խոնարհեցուցա նէ զկամս իւր և զսիրտն. զի ասէ Ա՛ծաբանն. թէ սովորութիւն բե րան լինի, և ամրանայ։

ծա Որսորդ մի կայր յարեւմուտս. և ետես զկրիայն յարեւելս. և յա րեաւ գնաց առնուլ զնա. և սկսաւ յամել՝ ի ճանապարհին յայլ գործ։ և աշակերտքն իւր փութացուցանէին, զի մի փախիցէ որսն։ Նա ասէ մի վախէք զի անմիտ է և ոսկրապատ՝ անզօր՝ ոչ կարէ փախչել. և յոր ժամ

ժամ երթամք մեր է նա։ Յուցա
նէ։ Ուէ օրսորդն սատանայ է. և
կրիայն մեղաւորքն են. և ասէ սա
տանայ ընդ դևն իւր։ Մ՛ի փու
թայք, և ջանայք. թէ երթամք 'ի
տուն կախարդաց՝ և զրկողաց՝ արբե
ցողաց՝ շնացողաց՝ և սպանողաց՝ և
յայլ մեղաւորաց. զի նոքա զհետ
մեր են կամաւ. և առնեն զկամս
մեր, վ՜ն նոցա մի նախատիք։ Գնա
ցէք 'ի մէ̄ մարդկքն, և ընդ նոսա
կռուեցարուք. զի որ առնու ըզ
բերդն և զքաղաքն. այն երկիրն նր̄ է։

Երէք ուղտք, և երէք աղուեսք ծը
եղեն եղբարք. և 'ի Ճանապար
հին գտին երէք հաց մէ̄։ Եւ ուղտքն
առին զհացն. և յարուցեալ բարձ
րացուցին զգլուխս իւրեանց՝ աղա
ղակելով ուտէին զհացն։ Եւ աղուէ
սքն լալով անկեալ առ ոտս նց̄. և
ուղտքն կոխեալ սատակեցին զա
ղուեսսն։ Յուցանէ։ Ուէ մեծա

տունք և իշխանք ծծեն զզօրութի ժողովրդեան. և շատք այնք են որք աղքատանան յաւելադատելոյն. թագաւորաց՝ և իշխանաց՝ և առաջնորդաց. Հանց որ նեղին 'ի չքաւորութեն, և մեռանին:

ծգ Ելին մի գնայր ընդ դրախտն իւր վն մրգաց. և ասէ ցորդին իւր, թէ ով որդեակ իմ ակնկալ իվեր. և դարձէ զմանր ձագերն, մինչև դամ ես: Յարեաւ որդին և շարեց 'ի մի չոման զամէն ձագերն. և կապեաց զծայր չոմանին յոտս հաւուն. և ինքն խաղովեղաւ: Եւ ահա գայ 'ի վերուստ ուրուրն. վերացոյց զմէնն ձագերուն. և գնաց ինչեւ մայրն և այլ ձագերն: Ցուցանէ: Թէ Ք՟ս համբարձաւ յերկինս. և վստահացաւ զժողովուրդն 'ի թագաւորն, և յիշխանսն, և յառաջնորդսն. և նոքա զբաղեցան 'ի հող և 'ի մեծութի

աշխար

աշխարհի. և չտանին խնամք հօտին
Ք͞րի: Նոյն սատանայ լցոյց մեղօք
առհասարակ, և իջոյց 'ի դժոխս:
Մեղաւ թագաւորն, և իշխանն,
և առաջնորդն, և ժողովուրդ. զի
ամենեքեան խոտորեցան, և անպի
տանացան. քանզի ժողովուրդն
կապեալ է 'ի թագաւորն և յառաջ
նորդն:

Էր հարսն մի հեզ և համբերող. ծ͞գ
և կամեցան փորձել զնա սկե
սուրն և սկեսրայր ն͞ր: Ասէ մինն
արն փակեա զդուռն. ասէ մեկ
այլն՝ թէ բաց զդուռն. զի ծուխ է
և նեղ է զմեզ. և դարձեալ ասէ
թէ փակեա և բաց. և նա սկսաւ
փակել և բանալ. յերկարեց և ոչ
բարկացաւ: Ցուցանէ: Թէ առա
քեալքն, և մարգարէքն, և հայ
րապետքն, համբերութ͞բ և հեզու
թ͞բ քարոզեցին աշխարհի:

ԾԵ Ոմն աղքատ երթայր 'ի գիւղմի· հիւանդացաւ 'ի ճանապարհին· և աղաչէր զԱ՟Ծ պատրաստել նմա գրաստ, որ 'ի շէն տանիցի զնա: Եւ ահա գայ ոմն ջորաւորոյ հարկանէ զնա բրով և ասէ: Ա՛րի յոտն և շալկէ զքուռակս· զի ոչ կարէ գալ 'ի հետ մօր իւրոյ: Նա յարեաւ և լայր՝ զի ոչ կարէր կանգնիլ: Եւ այրն ջորաւորոյ ոչ դադարէր 'ի հարկանելոյ զնա: Եւ նա ասէ, վա՜յ ինձ Ա՟Ծ իմ, զի փոխանակ թեթևացուցանելոյ՝ ծանրացուցեր իվերայ իմ վիշտս: Ցուցանէ: Թէ շատք աղաչեն զԱ՟Ծ և ակն բարւոյ ունին յԱ՟Ծ և 'ի մարդկանէ· և գայ տանջանք և վիշտք ի վ՟ր նոցա:

ԾԶ Այր մի մեծատուն գնաց խնամախօս որդւոյ իւրոյ ըստ սովորութեն մարդկան: Հայր կուսին զոր խնդրէր, և նստաւ 'ի մօտն· և ասէ առնն՝ ո՛վ հայր օրհնեալ է գա

լուստ

լուսատ քո։ Ապա թէ գաս որ 'ի հողմ երթամք բարւոք առնես. և անտի դառնամք յետ. և ապա ելանեմք 'ի վիրապն։ Ասէ այրն. վայ որդեակ, ես եկի որ զքեզ տանիմ. իսկ դու զիս հանես 'ի տանէ իմմէ։ Ցուցանէ։ Թէ՝ Բա՞ն եկն 'ի խնդիր մարդկան. նա երթայ ճամ որք ընդդէր իւր կամքն է. ոչ լսեն կոչմանն՝ Բա՛նի։ Ա՛յս է առակս. և մարդապետն յոր ժամ երթայ 'ի քարոզել և չգայ ոք 'ի քարոզն։

Աղուէսն եգիտ ուղտ մի մերձ 'ի մահ. և նստաւ առ նա։ Ասէ ուղտն. ինչ պէտս նստար աստ ով դու աղուէսուկ։ Ասէ աղուէսն զի թէ մեռանիս ես կերակրիմ 'ի մսէ քումմէ։ Ասէ ուղտն ով գերի աղուէսուկ. չկարես ժուժել զի պարանոցս իմ երկայն է. և հոգիս յուշ ելանէ։ Ասէ աղուէսն. թէ ես ասատիկ համբերող եմ աղգաւ՝ թէ ծէ

քառասուն օրն ապաննջէս ես սատ
նատխմ: Յուցանէ: Թէ պարտ է
համբերել վարդապետին. Հեզու
թբ օգտեցուցանել զժողովուրդն.
և քաղցրութբ կոչել զմեղաւորսն.
Զի չկայ մեծ բարութիւն քան զհամ
բերութին: Առաքեալքն. և մար
գարէքն՝ և հայրապետքն՝ համբե
րութբ և երկայնմտութբ զաշխարհս
լուսաւորեցին՝ և Ա̃Ծ եռուն:

ծբ Բահանայմի գողացաւ զկով այրի
կնոջ միոյ՝ և եած յախոռն.
և կինն իմացեալ, ասէ առ քահա
նայն: ՄՂՏր ժամէ ինձ մահու որ
խոստովանիմ յախոռ.քո. և երեցն
անցոյց զկովն 'ի ներսին տունն. և
անտի յեկեղեցին: Իսկ կինն ասէ.
ովՏր, զմահու խոստովանութին
պարտ է որ յեկեղեցին ասեն: Իսկ
երեցն եհան զկովն 'ի բեմն. և զվա
րագուրն ի դէմ քաշեց. ի բըրև մտան
յեկեղեցին և նստան: Յայնժամ
կինն

կինն զվարագոյրն ՚ի վեր կալաւ,
և ասէ: Ով գարշելի, դժեղ կոճղե
տէ լի. արդ պատարագօղ ո՞վ արար,
ասա ինձ: Ցուցանէ: Թէ այսպէս
համբերութեամբ և խմաստութբ
պարտ է աւագնորդին քննել՝ և
ստուգել զնմ քաջահանայս. և խմն
նալ զվարս նց: Որ չէ արժան պա
տարագի ծածկաբար յանդիմա
նել. և չտալ թոյլ խաչել զորդին
Այ՝ անարժան պատարագօք՝ և հա
ղորդութբ:

Այր մի մարդասպան փախեաւ. և ծթ
գնացեալ անցանէր ը̃ գետն որ
կոչինեղոս. և տեսեալ յեզր գետոյն
զառիւծ մի. և փախուցեալ ելաւ
՚ի ծառ մի մեծ: Եւ ահա կայր ՚ի
ծառն ահագին վիշապ մի. և նա
յահէն ՚ի վայրանկաւ ՚ի ծառէն:
Եւ ահա եւ ՚ի գետէն կոկորդիլոսն
և եկուլ զնա: Ցուցանէ: Թէ չկա
րէ փախչել մեղաւորն ՚ի ձեռացն
Այ:

Ա՜յ. որ ոչ զղջանայ և ելանէ ՚ի մեղացն․ նա կամ յայս կեանքս կամ յայնկեանքն առնու զհատուցումն գործոց իւրոց։ Ո՜վ ասէ յոբ․ թէ որ չար է մի յուսացի անպատիժ լինել․ և առաւել մարդասպանքն և զրկողքն։

Կ Սրնոջքն խայտային և զեղինան խրատէին․ եթէ ոչ դադարիք յաշխատելոյ։ Ահա եկն թագաւոր գաւառին, և ժողովեալ զերինջսն և սկսան կոտորել․ զի ճաշ կազմէին թագաւորին, և զօրացն։ Ահա որդեակք մեր միասաւոր պարապորդ հանգչէիք և դուրանայիք։ Ջնջեցանէ։ Այժմ ոմ ոբքն ընդդասս ձախակողմանցն․ թէ ահա որդեակք․ այդ կայր ձեզ պահեալ․ որ ՚ի հուրն այրէիք։ Ո՜ ի այն կեանքն բռնէիք զմարմինս ձեր հանգստեամբ և մեղօք․ և զարդարն նախատէիք․ դուք այժմ նախատիք։ Ա

Վարազն սրբէր զատամունս իւր կա
մեծ աշխատութե̃, և եսանէր։ Եւ աղուեսն ասէ՝ Զէ՞ր աշխատիս զի առ ժամանակս չկայ կռուոյ բան։ Ասէ վարազն կռուէիր դու գարշելի. զի ես հմուտ եմ պատերազմի։ Եւ արդ կարէ պարապել զէնս իւր։ Ցուցանէ։ Թէ 'ի յայս կեանս պարտ է զգուշանալ և ապաշխարել զմեղս. զի յաւուր դատաստանին չկայ ճար ներելոյ կամ ողորմելոյ. ոպ̃ ցուցանեն մեծատունն և յիմար կուսանքն։

Արծուին յորժամ ծերանայ կբ
բարձրանայ մինչև 'ի տապ արեգականն, և ջերմանայ և գայ 'ի վերուստ մեծ լուութե̃։ Եւ իջեալ 'ի սառն աղբիւր մկրտի. և ելեալ թաւալի, և թափի 'ի նմանէ հնացեալ փետուրն նր̃. և նա մանկանայ և նորոգի ամենևին։ Ցուցանէ։ Թէ ով ոք ծերանայ և հնանայ.

անօրէնութեան և չար գործովք.
պարտի բարձրանալ հոգւով առ
Քրիստոս. և ջերմանալ հրով սիրոյ նորա.
և մկրտել զանձն 'ի ջերմ արտա
սուս. և լնուլ հառաչանօք զշա
րաւ մեղաց. մեծ յուսով և ողոր
մութեան Տեառն. և թափել յինքե
նէ զհնացեալ փտութիւն մեղաց. և
ազատիլ 'ի դժոխոցն. և հասանել
բարեացն Տեառն: Որ վկայէ մարգա
րէն Դաւիթ. կատարէ 'ի բարի
զցանկութիւնս քո. և նորոգէ որպէս
զարծուոյ զմանկութիւնս քո:

կգ Արծուին երթայր ընդ երկինս.
և հարին զնա նետիւ. և զարմա
ցաւ թէ ո զայս արար: Հայեցաւ
և ետես 'ի նետն զթեւն իւր. և
ասէ, վայ ինձ զի ահա յինէն եղև
պատճառ սպանմանն իմոյ: Ցուցա
նէ: Սէ 'ի մէնջ է նետն որով
սպանանէ սատանայ զոգիս մեր. զի
նա յորդորէ 'ի չարիս, և մեք կա

մաւ և յօժարութեամբ երթամք զհետ կամաց նր։

Հերմոս մի էր բաղձօրեայ. և կդ
խրատեցին զնա, թէ երթ՚ի դուռն քաղաքին. և զառաջին մարդն որ տեսանես, ասա առ նա. թէ քոյդ ինձ, և իմն քեզ. և գնաց։ Եւ ահա գայր գողի մի. որ շարաւ էր անձն նր՚ի խոցոյն. և նա դողաց յահէն։ Եւ ասէ ցնա, ով եղբայր հայեաց յԱծ. քոյդ քեզ՝ և իմն ինձ։ Ցուցանէ։ Թէ սատանայ սկսանի անյուսել զձեզ՚ի մեղս. և հեռացուցանել յԱյ՝ որ և ինքն եղև. և դու յայնժամն ասա զառակս առ նա. թէ քո անհաւատութիւնդ քեզ. իսկ ես անպէտ և մեղաւոր եմ։ Բայց զԱծ ոչ կարեմ ուրանալ. զի անդադար կոչէ զիս քաղցրութեամբ. թողում զմեղս իմ, և երթամ առ նա յուսով։

կե Գայլն և աղուէսն եղեն եղբարք, և գնացին որսալ զձուկն: Ասէ աղուէսն ցգայլն՝ արկ զագիդ քո 'ի գետն զի ընդունեսցուք ձկունս. և էր ժամանակն ձմեռնային: Իբրև էարկ գայլն զագին 'ի ջուրն. պաղեցաւ ջուրն, և կապեաց զագին: Ասէ աղուէսն. աՀա քեւլի ա̃մ զօրութե̃դ ցունց տուր զի ձկունք բազումք են. քաշէ զագիդ քո, զի ձուկն բազում է ընդունեալ: Իբրև ցունց ետ Հաստաւ ագին 'ի ջրոյն. և նա կսկծեալ վայէր զանձն, և լայր: Ասէ, վայ ինձ, զի Թափեցայ յագուս. և ձուկն ոչ ըմբռնեցի: Ցուցանէ: Այսպէս կապէ սատանայ մեղօք մինչև 'ի մահ. և Թափին յայս կենացս, և յայն:

կզ Ասի յառակաց Թէ աղուէսն գըտեալ Թուղթ մի գրեալ. և տարաւ առ գայլն, և ասաց: Այսչափ ժամանակս աշխատեալ եմ.

և զմարդիկ բարեխօս եմ ձգեալ. և
'ի պարոնէն գիր և հուքմ եմ հա
նեալ. որ յամէն գեղ՝ և յամէն գեհ՝
ուր հանդիպիս ոչխար մի քեզ տան։
և յամէն տուն հաւ մի քեզ բաժին
հանեն։ Այլ ոչ շուն. և ոչ մարդ
քեզ զահմաթ չտան։ Եւ այնպէս
խաբեալ գայլուն գնաց զհետ ա-
ղուէսուն։ Եւ յորժամ գնացին,
ինքն աղուէսն եկաց ի վ̄ր բլրի միոյ.
յեզր գեղջն. և յուղարկեաց զգայլն
'ի գեղն. թէ գնա, առ զքո ողոփայն.
Եւ ես զթուղթս պահեմ, ով որ
չտայ նա ես ցուցանեմ, որ տան։ Եւ
գայլն հաւատացեալ. մինչդեռ
երթայր յեզր գեղջն. յանժամ
մարդիկ.ք և շներն ի մէջ առեալ
կամէին սատակել։ իսկ գայլն ձայ
նեաց առ աղուէսն. թէ բեր զպա
րոնի հուքմն որ տեսնուն այս մար
դիկս և աւատան. որ պարոնի հրա
մանաւն եմ եկեալ. իսկ աղուէսն
պատասխանի տուեալ ասէ՝ ով գայլ

'ի գեղջդ կարդայօղ չկայ՝ լսօղ չկայ՝ ինչ կայ որ թուղթ բերեմ։ և այնմ̃ խաբեբայ սատակեցին զգայլն։

կե Աղուէսն խաբէ զգայլն. և տայ նմա թուխթ տանիլ 'ի տանուտէր գեղջն. և բերէ նմա կերակուր։ Երբև գնաց գայլն 'ի գիւղն. թափեցան շունքն իվ̃ր ն̃ր խածատել և վիրաւորել. և փութ փութ արարին։ Նա իբրև եկն ողորմելի կենօք. ասէ ց̃ա աղուէսն. ընդէ՞ր ոչ ցուցեր զթուղթն. ցուցի, բայց հազար շուն կայ՝ որ զգիր չգիտէ։ Ցուցանէ։ Նւէ մի մ̃ջեր, և մի ընկնիր ի մէջ բազում տգիտաց և աներկիւղաց. այլ իմաստութ̃բ փախիր 'ի դիւաց և 'ի նոցին կամարարաց։

կը Աղուէսն եգիտ զպանիր յորոգայթն։ Երթայ առ գայլն և ասէ. ով եղբայր, եկ և առ զպանիրն, և կեր. զի ես 'ի պաք եմ. և

գնաց

գնաց գայլն առնուլ զպանիրն. և
անկաւ որոգայթն 'ի վիզ գայլոյն.
և պանիրն 'ի դուրս թռեաւ: Եւ
աղուեսն, սկսաւ ուտել. ասէ գայլն,
թէ եղբայր գէմ այսօր ուրախ
է. մի ուտէր որ չի բարկանայ
քեզ Ա՜ծ: Ասէ աղուեսն. որո
գայթդ 'ի պարանոց քո անկաւ՝ և
այդ է բարկութն Ա՜յ: Եւ սկսաւ
գայլն ցնցտել յայսկոյս և յայն կոյս:
Եւ ասէ աղուեսն ցգայլն. ես այլ
շատ ցանկացի երբ ըմբռնեցայ: Եւ
ասէ, գայլն վայ ինձ զի նեղիմ չարա
չար: Ասէ աղուեսն, ով եղբայր,
դեռ չես վայ՝ մինչև գայ տէր պանի
րին: Ցուցանէ: Թէ զգաստ լեր,
որ չխաբուիս 'ի սատանայէ. զի կա
պէ զքեզ սատանայ 'ի մեղս, և 'ի
հեշտութիս: Յայնժամ ապա տա
վայ անձին քոյ՝ յորժամ գայ Տ՜ր
'ի դատել զերկիր:

կթ Ասեն յառակաց՝ թէ թագաւոր մի կայր․ որ ունէր իւրն սիրելի զօձ մի․ որ յամէն օր կարմիր դեկան մի բերէր թագաւորին։ Եւ եղև որդի մի թագաւորին նոր ծնեալ․ իսկ թագաւորն զմանուկն սնուցանէր իւրեայ բարձացն․ և առեալ զօձն արկանէր զպարանոցաւ մանկանն։ Եւ այնպ՟ սովորեալ օձն և մանուկն խաղային ՚ի միասին․ և այսպ՟ ժամանակս ինչ՝ սիրով խաղային առ իրեարս։ Իսկ յորժամ մեծացաւ մանուկն կապեալ սուր ընդ մէջս իւր․ յաւուր միում ՚ի խաղալն իւրում հանեալ մանկանն զսուրն էհար զտուտն օձին․ և ընկեց յերկիր։ Յայնժամ զայրացեալ օձին էհար զնա՝ և ինքն փախեաւ․ մեռաւ որդի թագաւորին։ Իսկ յետ աւուրցն և մխիթարութե՟, առաքեաց թագաւորն որ գտանեն զօձն․ և աղաչէին զնա գալ ՚ի տեղի բնակութե՟ իւրոյ։ Եւ ասէ օձն, ով բարի թագաւոր․ ան

դէպէ

դէպ է ինձ գալ առ քեզ: Ո՛ քանի
որ հայիս դու 'ի գերեզմանս որդւոյ
քոյ. և քանի որ հայիմ ես 'ի տունս
իմ, ոչ սրբի մախանքն 'ի սրտից մե
րոց: ապայ այս բարի է, որ հեռա
ցայ 'ի քէն: Ցուցանէ: Երբ նա
խանձ և մախանք շարժի ի մ̃տ քո,
դու փախիր անտի, և ապա սրբի մա
խանքն այն: Թէ չար ինչ առնես
մարդոյ. փախիր, և հեռացիր յա
չաց նր̃. և ապա սրբի սիրտ նր̃. զի
դառն ախտ է մախանքն. և որ կարի
երկիւղած է Այ̃. նա կարէ սրբել
զսրտին զոխն և զմախանսն:

Այր մի անմիտ և յիմար. ունէր — Հ
դեկան մի: Նա առ զդեկանն, և
գնաց 'ի քաղաքն ուր գնէ զէշ. շրջէ
ցաւ 'ի քաղաքն և ոչ եգիտ էշ միոյ
դահեկանի: Նա մտեալ 'ի շուկայն
տեսեալ մեծագոյն ձմերուկ մի. և
ասէ հիացմամբ. զինչ է այս, և խմա
ցան թէ յիմար է այրն. ասեն թէ

այս հնդիկ իշու ձու է. որ հանէ
հնդկցին է շ մեծագին. և նա խնդա-
լով եա զդաշհեկանն և էառ զձմե-
րուկն։ Իսկ պնտեաց ծախօղն թէ մի
ԻՄ պատրաստ տար՝ որ չբեկի և
եղեալ փախչի. և 'ի գնալն դիպա-
ւորքն 'ի քարն։ Իսկ զերծաւ ձմե-
րուկն 'ի ձեռանէ նր. գլորեցաւ
'ի թփերն 'ի ներս. և վազեաց նա
պատառակ մի 'ի դուրս՝ և փախչէր.
'ի հետ վազէր՝ և ձայն էր նապաստա
կին՝ և ասէր։ Այ էշ հնդկաց՝ վայ
ինձ մի փախչիր՝ քուր քուր ողորմիր,
և դարձիր առ տէրս։ Ցուցանէ։
Թէ այսպէս յիմարեցան քահա-
նայք և ժողովուրդն. և թափե-
ցան 'ի մտաց. որ զհետամտայք սուտ
և խաբօղ կենաց աշխարհիս. որ
նման հողմոյ փախչի 'ի մէնջ՝ և նման
երազոյ պակասի։ Իսկ ջանամք ըմբռ-
նել զհեշտութի և զմեղս աշխար-
հիս։ Իսկ լինիմք ողորմելիք։

Օձն նմանիկնոս եղև հողագործ
մարդոյ միոյ: Եւ եկեալ 'ի գետ
ինչ առեալ 'ի ծոցն զօձն անցանէր
ընդ գետն. և օձն այլ ոչ կամեցաւ
ելանել 'ի ծոցոյ նորա: Եւ գնացին առ
բազումս, և արարին դատաստան
իմէջ նոցա: Եւ եկին առ աղուէսն՝
ասեն, արա մեզ դատաստան. խնա
ցաւ աղուէսն զպատճառն, ասաց.
միականն ոչ կարեմ դատաստան առ
նել. եղ 'ի ծոցոյն, և երես ընդ երես
զրուցեցէք ինձ զբանն ձեր: Իբրև
ելեալ էին: Ասէ աղուէսն հողագոր
ծին՝ թէ հար զնա խթանաւդ՝ որ
կայ 'ի ձեռս քո. եհար և սատա
կեաց զօձն. և սկսաւ գալարիլ,
Եկեալ աղուէսն ողորդեաց զնա
թաթովն և ասէ, թէ նմանիկնոս ես:
հանցեղ ողորդ կեցիր: Ցուցանէ:
Թէ պատրաստ կացէք 'ի նենգաւ
որ մարդոյ. և մի հաշիւ միաւորու
թիւ առնես ընդ նոսա: Դարձեալ
զայս ցուցանէ, թէ բարուք է. որ

զչար և զնենգաւոր մարդն ըղըր դէ դատաւորին։

Հբ Կին մի այրի ունէր կով մի. և իւր խորթն ունէր էշ մի. և զկերակուր կովոյն գողանայր խորթն և իշոյն տայր։ Իսկ կինն աղաչէր զԱ՟Ծ, զի մեռցի էշն և կովն մեռաւ։ Լայր կինն, և ասէր. վայ ինձ, զի հակառակ եղև աղօթից իմոց. մինչ Ա՟Ծ ոչ կարաց ընտրել զէշն և զկովն՚ի միմեանց։ Ցուցանէ։ Մի աղօթել ընկերի քում չար հասանել. զի և քեզ պատահի չար։ Դարձեալ ցուցանէ թէ աղօթեա առ Ա՟Ծ. զի ընդ հակառակս կատարէ Ա՟Ծ, երբ ոչ լինի աղօթքն՚ի կամին Ա՟Յ. ք՟զի նա գիտէ զօգուտն անձանց մերոց։

Հգ Բուծն ետես՝ զի ահա գայլն փախստական ա՟մ կենդանիքն ահիւ մեծաւ։ Հարց թէ յումմէ դայլք հանց փախստական. և նոքա ասեն

ասէն թէ 'ի մարդոյ. զի նա հա
լածէ զմեզ: Այս ահա եկն էհաս
մարդ մի: և ասէ առիւծն սպառ
նալեօք, թէ դու ես մարդն. որ
նեղես զամենայն կենդանիսն. և
նա ասէ, այո՛ ես եմ մարդն: Այս
ասէ առիւծն ընդ մարդն. թէ
դու ես մարդն, եկ որ կռուինք: զի
ես քեզ մնայի: Ասէ մարդն չունիմ՝
աստ զինչ կռուոյ. ապա թէ դաս
որ կապեմ զքեզ որ չփախչիս՝ զի զա
ռիւծն պարծենկոտ եմ լսել: գնամ
և առնում զինչ կռուոյ, և դամ
առ քեզ: Այս հաւանեցաւ առիւծն
որ կապ է զնա. և կապեաց մարդն
զառիւծն 'ի ծառ մի. և սկսաւ
կողնի մահակով հարկանել զնա:
Այս ասէ առիւծն, թէ մարդ ես.
թողես մարդ. այլ սերտ և անխնայ
հար զթիկունս իմ: զի այս խելացս
այսպէս վայելէ: Ցուցանէ: Թէ
զօրաւոր մարդիկ խաբեն 'ի տկա
րաց, և տանջին. և ինքեանք նախա
տեն

տեն զանձինս իւրեանց ։ Նոյնպէս և յաւուրն դատաստանի դատք անզեղջ մեղաւորացն. արդարացուցանեն զարդար դատաստանն Այ· յորժամ 'ի հուրն առաքէ զնոսա ։ Եւ ասեն, թէ այս վայելէ մեզ. զի ընդէր ոչ լսեցաք նմա. և ոչ արարաք զհրամանս և զկամս նր ։

ՀԴ Առիւծն հիւանդացաւ, երէքն գայլն 'ի տես. աղուէսն յամեց· նա արջն չարախօսեաց զնմանէ ։ Եւ յորժամ եկն աղուէսն, ասացին ըզ չարախօսութիւն արջոյն բարեկամք նորա ։ Եւ ասէ առիւծն, ոչ բարի գաս գործելի· ընդէր յամեցար ։ Ասէ աղուէսն, մի բարկանար թագաւոր բարի· զի ահա երդնում 'ի գլուխ քո· զի աշխատութիւն շրջելոյ յամ բժշկապետաց. և ուսայ հիւանդութեն քում դեղ ։ Եւ ասէ առիւծն բարի եկիր, իմաստուն կենդանի. զինչ է դեղն. և նա ասէ,

զի

պիտանի, և դիւրին։ Հրամայեցին բժշկապետքն՝ թէ հանէք զմորթ արջուն տաքտաք, և արկէք ի վերայ առիւծոյն. և նա փութով քաշէ զցաւն ՚ի նմանէ։ Իսկ հրամայեաց առիւծն, և կալեալ զարջն՝ սկսան քերծել զմորթ նր. և նա վայէր, և փուքս մեծամեծս արձակէր։ Իսկ աղուէսն՝ ասէ. այդ յերեսդ քո՝ և ՚ի նր, որ առ թագաւորն զմարդ չարախօսէ։ և հանին զմորթն՝ և սատակեցաւ արջն։ Ցուցանէ։ Թէ չէ պարտ որ մարդ ՚ի թագաւո րաց տուն և ՚ի դատաւորաց մտա նէ, նա զայլոց չարախօսէ. կամ մատնէ։ Այլ մարդ զիւր հոգն հոգայ. և զիւր մեղքն տեսնու առաջև իւր։

Մաս յառակաց. թէ ուղտ մի, ու գայլ մի, և աղուէս մի գնացին ՚ի մէկ ճանապարհ. գտին բլիթ մի հաց. որ անկեալէր ՚ի ճանապար ՀԵ

հու

հորդացն. և ասեն ընդ միմեանս զինչ
արասցուք զդոյս զի չէ բաւական
մեզ ամենեցուն. ասէ աղուէսն սա
մեկին կերակուր է. և որ աւագն է
'ի մէնջ՝ և աւուրքն հին. նա կերի-
ցէ զսա. և հաւանեցան երեքեանն
բանին: Հարցին ցդայլն, ասա ըզ
թիւ ամացքոց. և նա ասէ, ես այն
դայլն եմ, որ յաւուրս ջրհեղեղին
Նոյ 'ի տապանն էառ զիս: Եւ ասէ
աղուէսն, օրհնեալ է Ա̃ծ, խմ թո
ուլին ընկերես. ես այն աղուէսնեմ որ
ստեղծ զիս Ա̃ծ, և տարաւ առ ադամ,
որ անուանեաց զիս աղուէս: Եւ
տարաւ ուղտն զերանն, և էառ
զգլխոն. և վերացոյց յօդս: Սկսաւ
ծամել. և ասէ, եթէ դուք զայդ կու
ասէք՝ այս սրունքս զոր ես ունիմ չէ
յերեկէն եղած տղայի: Եւ յառաջ
անուն եդին ըղտուն բազոս: և դայ
լուն մարկոս: և աղուէսուն թէոդո-
րոս: և կամեցաւ դայլն ձգօլել զի
առցէ զհացն յղտէն. նա զգլուխն
էառ

էառ՚ ի ծնգնամէջն՝ և սկսաւ գայլն
կղկնծկտալ. իսկ աղուէսն շուրջ ան
ցանէր, և ասէր բանիւ բազմաւ։
Բարձր է բագոս, կծկտայ մար
կոս. շուրջ անցանէ Թէոդորոս։
Ցուցանէ։ Թէ չէ պարտ աղքա
տին ընդ մեծ տանն ձկտիլ՝ և ՚ի
կուիւ մտանել. զի ոչ կարէ ՚ի գլուխ
ելանել։ Որպ̃ և ասէն առակաւանքն։
Խեցգետինն հետ օձին ձկտեցաւ՝
և կորեցաւ. և թէ գրաստ որ գանձ
էր բարձեալ՝ ՚ի տղմի ոչ անկանի.
բայց օրն վերջին լինի արդար իրաւ
ունքն։

Կապիկն, որ է ապուզայն. սովորու ՀԳ
թի ունի. որ զինչ տեսանէ ՚ի
մարդն զայն առնէ. ետես զի
ձկնորսն ձգեաց զուռկանն ի վ̃ր
ձկանց. և ինքն եւս ձգեաց՝ ըմբռնե
ցաւ ՚ի նմա։ Նա ասէ լալով՝ յիրաւի
ըմբռնեցայ ՚ի հանց տեղի որ չէի
հմուտ։ Ցուցանէ։ Թէ ով մարդ
մի

մի ձեռնարկանէր՝ և մի ցանկար գործոյ որ չես հմուտ։ Նա չէ քեզ դէպ թէ մարմնաւոր եթէ հոգևոր աստիճան․ զի կորուստ լինի քեզ՝ և ոչ շահ։

ծէ Մ րագինն մեծ բանութե֊ գայ յամուսնութեն հրամանաւն Ա.Յ որ ասէ․ քանզի սիրէ, որ նը մնայ․ և տատրակն ոչ նստի յաստն կանայ՝ եթէ մեռանի ընկեր նր։ Յուցանէ օրինակս։ Ա.է ով մարդիկ սիրեցէք զորբութիւն և զողջախոհութիւն։ Բայց վասն որդէծնութեն մտէք յամուսնութիւն, և մի վն աղտեղութե։

հը Մ գուան ժողովեալ զձագս իւր՝ և խրատէր զնոսա՝ և ասէր․ ով որդեակք, մի լըրեք․ պատրաստք եղերուք 'ի մարդկանէ՝ յորժամ խոնարհելն առնուլ ինչ։ Մ.ան ձագեր նց․ ով մայր մեր՝ զինչ արաս

ցուք. թէ առաջագոյն լինի մարդն
առեալ զքարն 'ի ձեռն իւր. և ապա
մայրն այժմ զխեմ որ ապրելոցէք։
Յուցանէ։ Թւէ պարտէ պատրաս
տել 'ի հին որոգայթիցն սատա
նայի. 'ի նր̄ պատրանացն, և 'ի նենգ
գութեց նր̄։

Արագիլն՝ և ձայնեկն՝ և ոպոպն ըզ՛ ՀԹ
ծերացեալ հայրն իւրեանց
դարմանեն՝ սնուցանեն՝ և ծառայ
են. մինչև մանկանայ՝ կամ մեռա
նի։ Յուցանէ օրինակս այս։ Թւէ
պարտէ մեծարել և դարմանել ըզ՛
ծնօղս. և հնազանդիլ։ ոչ՛ և Ա̄ծ
հրամայեաց։ Պատուեա զհայր քո
և զմայր. որ զծնօղս անարգէ զԱ̄ծ
անարգէ. և զինչ որ 'ի հետ ծնո
ղաց առնեն հետ Ա̄յ են արարեալ։

Աղուէսն քաղցեաւ և ետես 'ի Ձ
հոր մի բուդ-քար. կարծեց թէ
պանիր է. անկաւ 'ի ներքս, և սկսաւ


ուտել։

ուտել. և ասէ, վայ ինձ, զի ոչ համ
ունի և ոչ հոտ։ Ցուցանէ։ Թէ
ով մարդ մի անկանիր 'ի բուտ մե-
ղաց։ զի անշահ իրք է մեղքն, և
անօգուտ. զի յետոյ շատ ապա-
շաւես։

ձա Իզոճեան 'ի գետն անկաւ՝ և չի-
նէր գետատար. խոստացաւ
Ի.Տ մարզան մի խունկ. զի հանցէ
զնա 'ի գետէն. և զերծեալ 'ի գե-
տէն՝ և սկսաւ 'ի ժխմել. և մոռացաւ
զուխտն զոր եդ Ի.Տ։ Խաղայր, և
խայտայր յեզր գետոյն, և ասէր.
թէ Ի.Ծ ինչ կարես ունել 'ի ծուխ
խնկին որ յօդս ցնդի։ Եւ ահա շար-
ժեցաւ դարավին գետոյն. և սկսաւ
գնալ իվ ընդ. և նա լալով գոչեաց,
և ասէ. ով Ի.Ծ ոչ իմացայ զի ես 'ի
խնդիր եղայ մարզանին որ զքո խուն-
կըն բերեմ, զոր ուխտեցի քեզ։ Ցու-
ցանէ։ Թէ ոչ է պարտ մոռանալ
զուխտն՝ զոր ուխտեցաք ընդ Ի.Տ'ե
նե

նեղութեն իւրում. նա և զՀանդերձեալ նեղութեին մի մոռանար:

Աղուէս մի .քաղցեալ, եգիտ զսատն և զպատ. ցանկացաւ 'ի ձմեռնային աւուրն՝ սկսաւ ուտել զնա: Նա ասէ վայ ինձ, զի աշխատեն գլգլունս և աղաղակս 'ի գլուխս և յատամունս իմ. և 'ի փորս ընաւ ինչ ոչ իջանէ: Յուցանէ: Եթէ փառք և մեծութիւն աշխարհիս զերդ երազ է. և միայն զաղաղակն ունին, և զբաղումն. և յետոյ ոչ երևի ուրեք. զի սուտ է և անցաւոր և խաբօղ: ԾԲ

Աղուէսն եգիտ որձ մի. և կարծեաց թէ այս է պատմուճանն ադամայ՝ զոր կորոյս. զի գրեալ է լուսաւորէր. և զգեցաւ զնա ձմեռնային ժամն. նա պատռեցաւ, և տանջէր զնա՝ և մեծէր. և հանեալ կանգնեաց զնա. և սկսաւ ջուր արկանել 'ի ԾԳ

նմա. զի կարծեաց թէ ջրոյ աման է սա. և ամենևին ոչ լցուցանէր: Որ և բարկացեալ արկ զնա 'ի խորս ծովուն, և ասէ. երթ 'ի կորուստ, զի կարի անպիտան իր ես: Ոչ եղէր զգեստ ամառան. և ոչ ձմերայնոյ. և ոչ աման ջրոյ. ապա կարծեմ թէ փորես դու որովայնամոլ և արբեցող մարդոյ՝ որ անկուշտ լինի: Ցուցանէ: Սա է այսպէս անօգուտ է փառք աշխարհիս. զի ոչ է աստ պիտանացու՝ և ոչ անդ: աստ մահն խաբէ. և անդ նոր արարածք լինելոց է:

ձդ Այր մի էառ զաւանակն իւր. և գնաց արածել 'ի մարգ մի ցանկալի յանմարդաբնակ տեղի. և ահա գայ էշ մի որձ. և հոտոտեցաւ 'ի յետոյ 'ի յամօթ նորա: Եւ նա կից էհար զօրութեամբն. և էհար զխամծեկ նորա, և ջախջախեաց. նայ փախեաւ որձ էշն՝ և գնաց անտի. և ասէ քուռակն

ուակն լալով։ Վայ ինձ մայրիմ, զի
տառապանք են աստ միայն. և բա
զում երկիւղ կայ 'ի գաղանաց։
Վայ ինձ, ընդէր հարեր, և վիրաւո
րեցեր զփառաւորդոյն էշն, որ եկն
առ մեզ։ Վայ մայրն, ով որդեակ իմ.
մի երկնչիր զի չէ յամելոց. քանզի
յայնմեղին հոտոտայց, և զայն հոտն
էառ. որ թէ մինչ 'ի ներքին հըն
դիկքն երթայ՝ և կամ 'ի խորասան.
փութայ դառնալ առ մեզ։ Ցուցա
նէ։ Թէ որ չնայ՝ և զրկէ. կամ գո
ղանայ. կամ զայլ մեղս գործէ. ոչ
կարէ դիւրաւ զերծանիլ 'ի մեղաց։
Զի ցանկութի և հոտ մեղացն կա
պէ զնա, և քարշէ ուղ շուն տառամբ.
զի օձ է մեղքն՝ 'ի ծակն շուտ մտա
նէ. և ոչ կարէ ոք յետս քարշել զնա.
զի խորին ընդ դեմ է։

Էշն անկաւ 'ի գետն, և 'ի խեղդելն թըքեց. ՃԵ
և գայր թրեքն
իվր ջրոյն. յառաջեաց քան զէշն։

Եւ ասէ էշն. այ չար 'ի յորովայնէս դեւ ելեր. ասա ինձ թէ զլողդ ուր ուսար. որքան զիս յառաջ քայլես ։ Ցուցանէ ։ Թէ կարի անպատշաճ է. յորժամ տղայք խրատ տան ծերոց. և տգետք գիտնականաց ։

ձզ Զէշն մեծարեցին, և կոչեցին 'ի Հարսանիս որդւոյ թագաւորին. և նա ասէ ոչ փողահար եմ, և ոչ խաղացող. ապա գիտեմ որ կամ փայտ պիտենայ կրել կամ ջուր՝ զի իմ բանն այնէ ։ Ցուցանէ ։ Յոր ժամ կոչեն զքեզ 'ի բան, կամ 'ի գործ. որ քեզ անդէպ է՝ և աննման. և 'ի վեր քան զկարողութի քո. գիտասցիր որ քեզ ծաղր լինին արարեալ ։

ձէ Աշուն աւետիս ետուն, թէ ցնծայ և ուրախ լեր. և տուր մեզ օժիտս, զի թոռն եղաւ քեզ ։ Եւ նա ասէ՝ թէ վայ ինձ, բարեկամ իմ. զի

թէ

Թէ հարիւր Թոռն յայտնի լինէ յե-
րանաց իմոց. զծանրութիւն բեռանց
իմոց ոչ թեթեւացուցանէ 'ի թի-
կանց իմոց։ Ցուցանէ։ Թէ ա̃մ
որ ընդ անձին պարտի համարս տալ.
և զբեռն մեղաց իւրոց ինքն բառ-
նալ։ Պարզեալ ցուցանէ, մի վստա-
հանար յորդիս քո՝ և մի յորդիս որ-
դւոց քոց. զի ոչ քաւեն զմեղս քո։
այլ դու ջանա, քանի որ կարես. և
ապաշխարեա արտասուօք։

Ճանապարհորդ մի հանգեաւ ձը
յաղբեր մի և գնաց. և անդ մո-
ռացաւ հարիւր դեկան. և նոյն ժա-
մայն գայ ոմն անցանել զճանապար-
հաւն. էառ զգանձն, և գնաց 'ի
լեառն։ Սա նա յիշեաց զգանձն, և
փութով դարձաւ. և ահա այլ ոմն
գայր զճանապարհաւն. կալաւ զնա,
և եկն 'ի տեղին. և ասէ՝ տուր ըզ
գանձն զոր աստ թողի. զի այլ ոք
ոչ է եկեալ ընդ այս։ Սա նա երդ-

 նոյր

նոյր դառն և ասէր՝ թէ ես չեմ տե
սեալ։ Եւ նա տարաւ զնա ՚ի դա
տաւորն արքունի՝ չարչարեալ սպա
նէին զնա ՚ի նոյն խորհուրդ։

ՃԹ Այր վաճառական մի, ՚ի քաղաք
մի հանդեաւ, և յարեաւ շրջէր
՚ի քաղաքն. եկն ՚ի վաճառանոցն.
և էհաս նմա պէտք մարմնոյ արտա
քին։ Եւ էր ջրտուն մի մերձ ՚ի վա
ճառան. և նա եմուտ ՚ի նմա վճա
րեաց զիւր պէտսն. և գողն գայր
ծածկաբար զհետ նր վս գանձին,
զոր ունէր կապեալ ՚ի մէջն։ Փու
թով ՚ի հետ մտաւ՝ և էհատ զգլուխ
վաճառականին. էառ զգանձն,
և գնաց. զի շատ էր աղմուկն և ոչ
իմացաւ ոք։ Ի նոյն ժամայն մատղոր
ծըն եմուտ ՚ի ջրտունն ՚ի վճարել
զպէտս մարմնոյն. և զայն տեսեալ
վայ գոչեաց, ընդ անմեղութե խե
լոյ. և լռեալ մարդիկքն կուտեցին
իվր նր. տեսին զնա, զի խոկայր. և
թաւա

Թաւալէր յարկանն, զի նոր էր զե-
նեալ: Տեսանէին զդանակն արիւ-
նաթաթախ. և զձեռս մսագործին:
սպանաւ և նա. զի ամենեցուն միտք
վկայէր թէ նա էսպան: Այս էր
կուս առակս մի խորհրդ և մի միտք
ունին՝ և շատք խաբեին. և այլ ընդ-
այլոյ համարին զնա: Բայց այս է կա-
տարեալ միտքն. զի շատ արդար-
մարդիկք դատին և մեռանին անի-
րաւ և ընդվայր. և դատաւորն
գիտէ 'ի միտս իւր՝ և այլք թէ ու-
ղիղ դատեցաք՝ զոր Ած օրէն. և չէ
զարմացումն: Ու ոչ է հրեշտակ
դատաւորն. և ոչ մարգարէ, որ
զխորհն և զծածուկն գիտէնայ.
Այլ շատ պարտի քննել դատաւո-
րին զբանն և զխնամն. և համբե-
րել բազումաւուրս. զի սակաւ սա-
կաւ յայտնի ճշմարտութիւն: Նա և
միակնի դատաստան չէ պարտ ա-
նել. զի շատ վնաս լինի անտի. Նա
և կաշառօք չէ պարտ թիւրել զի-

 րաւ

րաւունս. զի անթողելի մեղք է առաջի Տ.Ն:

Ղ Լուսինն խաւարի՛ և թափեալ ապականի լոյսն իւր. և գայ ՚ի դէպ արեգականն. և առնու ՚ի նմանէ կրկին զլոյսն իւր: Ցուցանէ: Բանս և օրինակս. թէ ով մարդ մեղաւոր. խաւարեցաւ լոյս սբ̃ աւազանին որ կայր ՚ի հոգիդ քո. և ապականեցաւ ՚ի քէն շնորհքն. ՚ի ձրի մի՛ երկմտիր թերահաւատութե̃. այլ յուսայ ՚ի Բ.ն̃ հաստատուն հաւատով. և դիմէ առ նա զղջմամբ և արտասուօք. և նա ծագէ ՚ի հոգիդ քո ՚ի լուսոյ իւրոյ. և սրբէ զանօրէնութիւնս քո ողորմութե̃ն իւրով:

Ղա Զմեռն ցրտանայ տերև ծառոց. և բոյսք անզարդին. իսկ գարնանային ժամանակն կրկին զարդարին՛ և պայծառանան: Ցուցանէ: Բարի և լուսաւոր օրինակս. ով

ով մարդ. եթէ ձմեռն մեղաց եկն
ծիլք քո՝ և պաղեցոյց զքեզ. չար
հողմն հիւսիսական մեղացն սաստա
նայր, և դոյն տերևացն թափեցաւ
՚ի քէն գեղեցկութին քո. և մի ան
յուսիր ով ողորմելի. այլ երթ սրտի
մտօք առ հոգևոր գարունն Յի,
որ կոչէ զքեզ քաղցրութբ. և նա
լուանայ շնորհօքն իւրովք զայն
ցանս քո. և նորոգէ զքեզ առաջին
պայծառութին քո:

Ոզն, և բզէզն, և կան այլ կենդա ՂԸ
նիք՝ որք աղբակերք են և հոտ
դարշութե կեանք թուի նց։ Այ
նձ. զի ցուցանէ օրինակս. թէ
ամ մեղաւոր անզեղջ զաղբ և պշա
րաւ մեղացն ուտէ՝ և պարարտա
նայ. և այն քաղցր է ՚ի քիմս նոցա:

Յ անմարդաբնակ լեռն մի կայր ՂԹ
մրջիւն մի մեծագոյն քան զոչ
խար մի. և գայ առիւծն խառնա

կի

կի ընդ նմա․ և ծնանի ն՟շ զաւակ․ որ է կէս անձինն առիւծ․ և կէսն մրջիմնառիւծ․ և յորժամ ծնանի․ դիմէ առ մայրն զի կերիցէ հունդ․ և ոչ կարէ ուտել՝ զի հայրն մսակեր է․ և դիմէ առ հայրն զի կերիցէ միս՝ և ոչ կարէ ուտել՝ զի մայրն հնդակեր է․ այսպէս երթայ և գայ առ հայրն և մայրն․ և ՚ի սովոյն սատակի։ Ո՛վ ողորմելի անձն իմ, որդեակ իմ․ քանզի այսպէս ցուցանէ առակս․ զդասս անզեղջ մեղաւորացն․ զի ծննդեամբ ոք աւազանին են Ա՟յ արարչութեան․ և ծնանի սատանայ մեղօք և անօրէնութ՟բ։ Դիմեն առ Ա՟ծ՝ զի հաւատան՝ որ կայ Ա՟ծ․ և գիտեն զի դատաստան կայ․ և ոչ կարեն ուտել զկերակուրն Ա՟յ զսրբութիւն և զապաշխարութիւն զգործս բարեաց․ զի մեղօք կապեալք են ՚ի սատանայէ․ և ոչ կարեն ուրանալ զԱ՟ծ․ զի բնաւորեալ գիտէ․ որ Ա՟ծ կայ՝ և

յարութ՟ն, այսպէս են կապեալք Ա՟ծ հաւատով. և են կապեալ 'ի սատանայ չար գործօք. ոչ կարեն ունուլ բաժին 'ի սատանայէ. և ոչ աստուածոյ: Այսպ՟ երթան առ Ա՟ծ հաւատով. և առ սատանայ մեղօք, և հեշտասիրութ՟բ. և կան երկմիտ և ան հաստատ. և գայ մահն յարկարծակի և հանէ զնոսա յաշխարհէս բաժնին դժոխոց:

Այր մի հողագործ չքնեաց ակա նաթս բազումս. և էարկ 'ի վաս տակն իւր վ՟ն թռչնոց: Ո ի գայլն կռունկք և սագք քաղէին զբակ լայն՝ և զսխեռուն նր: առաւօտուն գնաց տեսանել զակնատսն: Ետես զի անկեալք էին բազումք 'ի սագից և 'ի կռընկաց յորոգայթսն. և սկսաւ մահակօք սպանանել զնս: Արա գիլ մի գտաւ յակնատսն. ասէ լա լով արագիլն առ հողագործն. վ՟ն Ա՟յ մի սպանաներ զիս. զի ոչ եմ ՂԴ

ես

Ես կռունկն և ոչ սագ ։ ոչ զխնուն
ուտեմ և ոչ զբանկլայ · այլ բարեկամ
եմ քեզ · և քաղեմ զճիմ ժխժմունս
յանդաստանայ քոյ · Ասէ հողա
գործն · որովհետև գտայ զքեզ
ընդ թշնամիս իմ · ընդ նոսա մեռցիս ·
և սպան զնա ։ Յուցանէ ։ Թէ որ բա
րեկամ լինի և օգնական · և միաւո
րեալ ընդ չարագործսն · ընդ նոսա
տանջելոց է ՚ի հուրն անշէջ · որպ
և գրեալ է թէ զդողն և զդողակիցն ·
զբոզն և զկաւատն , և զկախարդն
միապէս տանջէ Ած ՚ի դժոխսն ։

ղե Այր մի էհաս զեղու հորդուն
դրացւոյ իւրոյ գաղտաբար · և
յորժամ եղև եզն գնաց առ թագաւ
որն , և ասէ · թէ իմ է եզն ՚ի տղայ
ութէ · և եկեալ սնուցիչ եզինն
մտան իրաւունք ։ Նա ասէ՝ հոր
թուն լեզուն հատածէր՝ զոր կո
րուսի · բացին զբերան եզինն , տե
սին զնշանն · և էառ զեզն · և ՚ի միւս
օրն

օրն լծեաց և սկսաւ վարել. և խըր-
տան եզինքն. և նա անկաւ առաջի
խոփոյն և ցցուեցաւ 'ի փորն իւր, ան-
ցաւ թափ ընդ թափ. և եզն էառ
վնաս. և եկն 'ի դուռն Տն իւրոյ.
ընդ առաջ եկին բազումք և ասէին.
գայ սիրամն և բերէ զհարիւրն:
Ցուցանէ: Աւե շատ արդար իրաւ-
ունք առնէ Ած. յառաջքան զդա-
տաստանն: որ իմանան մարդիկք
թէ կայ հատուցումն ամ գործոց:

ՂԴ

Արմն աղքատ խորովէր միս սա-
կաւ յանապատին իւրում. և
արծուեի մի յանկարծակի եկն իջե-
բուստ՝ էառ զմիսն և վերացաւ:
Իսկ աղքատն խեղճաբարոյ էր՝ անկաւ
իջերայ մորեհոյն ձայնեաց ասելով.
թէ մինուկ ես և ունիս կարողու-
թիւն դու նիստ և կեր: Նոյ ասեն մար-
դիկք՝ թէ տարաւ արծուեն զմիսն
'ի բոյնն՝ և եդ առաջի ձագուց իւ-
րոց, և ինքն գնաց. և կայր կայծ մի

մա

փակած ՚ի միտն. այրեաց զբոյնն և
զձագեր արծուոյն։ Յուցանէ։
Ատ արդար իրաւունք առնէ
Ած. զի որ զրկէ զմարդն յանմե-
ղուց. նա զմեղքն հետ զրկանացն
՚ի յինքն առնու՝ ո՞պ ասէ առակողն.
Այն է որ այրէ զնա ՚ի հուրն ան-
շէջ. ըստ այնմ թէ առնէ Տր երա-
ւունս ա̃մ զրկելոց։

ղե

Ժողովեցան թռչունքն և ընտրե-
ցին զսիրամարգն վասն գեղեց-
կութե իւրոյ. և արարին իւրեանց
թագաւոր։ Կայ աղաւնին, և ասէ.
ո՛վ բարի թագաւոր՝ եթէ նեղեն
մեզ արծուիքն՝ և դու զինչ առնես
մեզ օգնութի։ Յուցանէ, թէ
թագաւորին, ոչ միայն գեղեցկու-
թի պիտոյ է. այլ քաջութի և բազ-
մահնար իմաստութի յա̃մ կողմանց։

ղը

Այր մեծատուն մի. և ունէր ժա-
ռանգ տան իւրոյ զքեռ որդին

եւր. հիւանդացաւ, և կոչեաց զժա
ռանգն զի խրատեսցէ զնա. և նա ե-
կեալ նստաւ՝ էած զգլուխն 'ի ծոց
իւր։ Նա ասէ մեծատունն. ով որ
դեակ, ջանա 'ի բարի. և մի հեշտա
նար 'ի սուտ կեանքս յայս՝ զի անց
ցաւորէ. անմոռաց յիշեա զօրն ա-
հագին. և զժամ մահուն։ դատաս
տանն մի' մոռանար. խոնարհ և անո
խակալ լեր. և զմեղս քո մի պահեր
առ քեզ։ Զանձրացաւ յասելն. ասէ
ցնա, Թէ որդեակ լսեցեր զոր ասա
ցի քեզ. և կամ 'ի միտ առեր. և ասէ
ցքեռին՝ Թէ զինչ հրամայեցեր։
Այա դու լսէ՝ ով պատմեմ քեզ
գործ մի զարմանալի. զի ահա 'ի
փորսիմ կան երակք տասնևերկու,
և ամենն 'ի պորտս գայ և երթայ.
և իջեալ միաբանին 'ի ծածուկ մար
մինս։ Նա ասէ քեռին. Թէ վայ քեզ
ժառանգ անպիտան՝ և հայրենակո
րոյս. զի ես քեզ զօրէնս Մ̃ քա
րոզեմ. իսկ դու զերակ պորտոյդ

'ի Թիւ արկանես. յայսմհետէ ել
ցես դու 'ի ժառանգութենէ իմմէ։
Յուցանէ։ Մինչ այսպէս անմտա
ցաք մեք մարդիկք. եւ խեւացաք թողաք
զխրատն Ա̃Յ. եւ զպատուիրանսն
դժոխոց. եւ թաղեցաք զմիտս մեր.
որ է գլուխ մեղաց՝ 'ի ծոցս մեղաւո
րաց՝ աղքատութբ թաղեմք զե
րակս 'ի պորտոյս մերոյ զշնութի.
զարբեցութի. եւ զայլ մեղաց տե
սակս։ Ուր զայն խորհիմք անդա
դար՝ թէ ոչ՛ զրկեմք. կամ ոչ՛ ար
բենամք՝ եւ այլ մեղք գործեմք.
այս են երակք պորտոյս. այս հանէ
զմեզ յԱ̃Յ ժառանգութենէն՝ եւ ողոր
մելի առնէ։

ղթ Այս մի հաւատաւոր կայր 'ի քա
ղաք մի. հպարտանայր 'ի միտս
իւր 'ի դիւլին զօրութէ. ելեալ 'ի
հրապարակս քաղաքին ձայնէր եւ
ասէր։ Լսեցէք ազգք եւ ազինք ամ.
զի Ա̃Ծ միայնէ յերկինս անապատ եւ

մ̃ք, և ես յերկրի․ և այլք դ խոստ
ըեցայ․ք յԱ․Ծ․ Այս անկաւ 'ի շնու
թիւն, իբրև յղացաւ աղջիկն, եւ
'ի բարձրագոյն տեղ մի․ գոչեաց
ասելով։ Թէ լսեցէք ազգ մարդ-
կան․ զի Ած միայն մնաց անմեղ և
անարատ․ զի ես 'ի պատճ վաղեցի,
նայ պատառեցաւ ստորոտս մինչև
'ի ստինս։ Յուցանէ։ Ասէ որ հը
պարտանայ․ նայ դեն այսպիսի գոր
ծէ․ Թէ տեսանես որ մարդ հպա̃ր
տանայ իւլերայ ընկերին, և խօսի
հպարտութ̃ի․ և զանձն իւր մ̃բ հա
մարի․ յայն դու ասա զաւակս զայս։

Ահա երկու մոդիկնօսք երթային Ճ
'ի վանքն․ մինն իմացաւ որ չա
րախնութ̃ի հայէր 'ի նա․ վ̃ս սա
կաւ գանձուն զոր ունէր․ և հասին
նք 'ի վայրագնուկ տեղի մի և նա երկն
չէր։ Երբև 'ի քուն եղեն յարեաւ
գաղտ յընկերէն․ եդ զվայտ 'ի տե
ղին իւր՝ ուր պառկեալ էր․ և դդումն
'ի

՚ի տեղւոջ գլխոյն. և ծածկեաց կար
պետով. և ինքն զատ նստաւ. ի մէջ
գիշերի յարեաւ ընկերն՝ և եառ
ձեռն վէմն. և եհար ի վ̃ր դդմանն. գի
տէր թէ գլուխն էր. և դդումն կո
տորեաց ճայթմամբ : Եւ ձայնեաց
ընկերն՝ և ասէ. թէ աՀա մնդիկ
նոս զհաւատ քո՝ ՚ի դդմումն փորձե
ցի. և ինքն փախեաւ ՚ի նմանէ :
Ցուցանէ : թէ յա̃մ ժամ Ա̃ծ օգ
նական է : բայց պատրաստ կենալն
պէտք է. զի Ա̃ծ զիմաստութի̃ ետ ՚ի
ներքս մարդկան : Եւ դարձեալ ցու
ցանէ զմարդ զոր փորձեալ ես ՚ի սա
կաւիրս. ՚ի բանն և ՚ի գործ ճնաստա
կար և նենգաւոր. դու զանձն քո
մի վստահանայր ՚ի նա :

Ճա

Եմուտ այր մի առ Թագաւորն՝ և
ետ հարիւր դահեկան. և գնեաց
զա̃մ խելս՝ որք էին ՚ի նր̃ գաւառ
ին. զի նմա տացեն զհարկն. և ելբրե
եւ ՚ի Թագաւորէն. ետես զայր
մի

մի ճաղատ՝ մի ականի՝ և քթատ՝
խուլ՝ և քարձ՝ ձեռնատ՝ ձոճանկ՝ և
մի ոտն կտրած ։ Պարձաւ առ թա
գաւորն՝ և ասէ ․ ով բարի թագաւ
որ․ զամենայն գաւառիս խեղս աստ
գտի ։ Հրամայեաց թագաւորն բե
րել զնա ․ երբև ետես զնա զարմա
ցաւ ․ ասէ փառք Ա․Յ ։ Ցուցանէ ։
Թւէ որ ունի նեղութիւս՝ ի հոգին ,
որ է մեղքն ․ նա գնեալ է զնա սատա
նայ՝ և իւրն հարկատու արարեալ
խաբէութբ̃ ։ Իսկ որ բազում մեղս
ունի յանձն իւր ․ զոխակալութի ․
զհայհոյութի ․ զշնութի ․ զրկանք ,
և զարբեցութի ․ և զայլ մեղս ․ այս
ինքն , բազում խեղութի՝ ի հոգին ․
և ոչ դիմէ առ Ա̃ծ , և ոչ զղջա
նայ ․ նա հաստատուն ծառայ է սա
տանայի ․ և սաստիկ սիրելի քան
զմեղաւորս ։

Ուխտն , գայլն , և աղուէսն **Ճբ**
եղէն եղբարք ․ ելեալ ՝ի յորս

գտին երիս ոչխարս ։ Իսկ 'ի ժամ
ճաշուն ասէ առեւծն ընդ գայլն.
թէ բաժանեա ոչխարդ ի՛մ մեր.
կամէր փորձել զգայլն։ Իսկ ասէ
գայլն. խոյդ քեզ՝ եւ մաքիս ինձ՝
եւ գառնս աղուէսուն. եւ առեւծն
էզարկ թաթովն զկառափն գայ
լուն. որ երկու աչքն կոկովեցաւ.
նայ նստաւ ի՛մ ին։ Իսկ ասէ աղուէ
սուն թէ բաժանեա զոչխարսդ ի՛մ
մեր. ասէ աղուէսն. ով բարի թա
գաւոր եւ յաղթօղ. զայս ինչ է
բաժնելու. խոյդ քեզ ճաշ. եւ մա
քիդ հրամէնք. եւ գառնդ ընթ
րիս։ Իսկ առեւծն. ով դերի ա
ղուէսուկ. ով ուսոյց քեզ զարդար
դատաստանդ՝ զոր արարեր. ասէ
աղուէսն՝ թէ գայլուն աչուէն ու
սոյց ինձ, որ արտաքս կոկովեցաւ։
Ցուցանէ։ Թէ բարում՝ չարա
գործք խրատին, եւ թողուն ըզ
չարն. յորժամ թագաւորք եւ իշ
խանք կախեն եւ խրատեն զգողն.
եւ

և զպատմողսն ։ Նոյնպէս շատ մե-
ղաւորք զղջման և երթան ապաշ-
խարութեն ․ յորժամ լսեն մեծա-
տունք պապակին 'ի Հուրն ․ և յի-
մար կուսանքն լացին անշահ ․ և 'ի
Հուրն անշէջ առաքեցան ։

Գայլն եգիտ զէշ մի գեր ․ կամե- Ճգ
ցաւ ուտել զնա ։ Եւ էշն ընդ-
գայլն՝ աղաչեմ զքեզ վն Այ ․ հան
զայս խոցս 'ի յիմ ոտեսս՝ և ապա
կեր զիս ․ զի Ծեա 'ի ձեռս․քո զիս ։
Քանզի բևեռ չար հասաւ 'ի յոտս
իմ՝ և տանջէ զիս՝ անցեալ գայլն յե-
տև էշուն՝ զի հանցէ զբևեռն ․ և
յէշն ամ զօրութեն կից եհար՝ և է-
զարկ զբերան գայլուն ․ և կոտրեաց
զկզակն ։ և ինքն փախեաւ ։ Գայլն
նստեալ լայր՝ և արտասուէր ․ թէ
արժանի եմ ես այս չարիս՝ որ եկն
իմ անձինս վր ․ զի ես մանգործ էի ․
զիս բայտար ով արար ։ Ցուցանէ ․
Խէ շատք լան, և ապաշաւեն որք

 Ձեռն

ձեռն արկեն 'ի գործ. և յարուեստ ինչ՝ զոր չէին ուսեալ. և չէ իւրեանցն յարմար:

ձդ Աղուէսն էառ կաքաւ մի՝ և կամէր ուտել զնա. ասէ կաքաւն, օրհնեալ է Տ՟ր՝ որ կոչեաց զիս իւր արքայութիւն. և զերծոյց զիս 'ի յայս չար ժամանակէս: Ապա դու աղուէս գոհացիր զՏ՟ր՝ և ապա կեր զիս. քեզ վարձք է. և աղուէսն կկզեցաւ՝ բացեալ զբերանն հայեցաւ յերկինս՝ և ասէ: Գոհանամ զքեն Տ՟ր, որ պատրաստեցեր մեզ զսեղան բարութե. կաքաւն զերծաւ 'ի բերանոյն, և թռեաւ. և ասէ կաքաւն՝ առաջ ուտել պիտի և ապա գոհանալ զՏ՟ր: Ցուցանէ: Ոմն է զխոստացեալ իրքն մի համարիր քեզ. զի շատք ասեն՝ և ոչ առնեն. մարդոյ շնորհակալ մի լինիր. մինչև չառնուս զիրան. և թէ ջուր տան դու 'ի ժամն 'ի գործ դ առ:

Աղուէ

Աղուէսն զչիտն 'ի բերան էառ՝ և ԽԵ
կամէր ուտել զնա. ասէ չիտն
ընդ աղուէսուն շատ աւաղ թէ ու-
տես զիս. զի ժամ է ինձ որ ածէի
մարգարիտ մի քան 'ի ջայլամու ձու՝
որ է աչագին: Եթէ թողուս զիս
ես ածեմ զմարգարիտն, և լինի քեզ.
և ապա կեր զիս. երդնում, որ գամ
'ի կամս քո: Իբրև եթող զնա թը-
ռեաւ, և նստաւ 'ի բարձրագոյն
ծիւղ մի. Ասէ աղուէսն. արա զոր
ասացեր, և եկ 'ի կամս իմ: Ասէ
չիտն ընդ աղուէսն. ապա քեզ
նման անմիտ լինիմ թէ այլ գամ 'ի
կամս քո: Իսկ դու ընդէր հաւատա-
ցեր. թէ ես կարի սակաւ մարմնով
այնչափ մեծ մարգարիտ կարէի բերել
քեզ: Ապա լուր տամ քեզ խրատ՝ որ
շատ օգուտ լինի քեզ. անդէպ բա-
նից մի հաւատար: ընդ խախուտ որ-
մով մի ննջեր. 'ի շնացող ծերէ. և
'ի հպարտ աղքատէ. և 'ի ստախօս
թագաւորէ, և յառաջնորդէ ի-

բայ փախիր։ Ասէ աղօթեմ. ահա
որ դատելոց է զքեզ Ա՛ծ՝ զի ստեղծեր
ինձ։ Ասէ չիտեմ. սուտ կայ որ վարձք
է ասել. ՚ի մեղաց և ՚ի մահուանէ
և յորոգայթէ ապրել. կամ զմարդ-
փրկել. շատ վարձք տայ նմա Ա՛ծ։
Ասէ աղօթեմ՝ թէ ընդէր է գրեալ
մարգարէն դաւիթ. թէ կորու-
սանէ Տ՛ր զայնոսիկ՝ որք խօսին
սուտ։ Ասէ չիտեմ. թէ ժամանակն
գիտէ՝ և պատճառն. քանզի յոր
ժամ սուտ խօսիս՝ ՚ի մեղաց և վշտաց
փրկիս. և փրկես զմարդն. նա Ա՛ծ
ուրախանայ. և թէ սուտ խօսիս,
և զմարդ գայթագղեցուցանես նա
մեծ չար է։ Ապա դաւիթ խաղաց
՚ի յափսթեր և շորեթափեցաւ. և
կարծիս ետ թէ մաղաս կաթեցայ՝
կամ դիւահար, և փրկեցաւ ՚ի մա
հուանէ։

Ճղ Երէց մի սարկ, իմաստուն և բա
րի և այր մի հայ կռուէին ընդ
երեւալս

իրեարս վն հաշուոյ ինչ։ Ասէ այրն,
թէ այն քարն 'ի քո երեսդ․ և 'ի
քո երեսունևերկու ատամունսդ․
և երէցն զարմացաւ՝ գնաց շուտ մի
'ի տունն՝ ասէ ընդ իրիցկնոյն իւր․
թէ ասա՝ վն Այ առ զմոմն և տես
թէ քանի են ատամունքս իմ։ Նու
կինն թուէրայ՝ և ասէ․ երեսունև
երկու են ստուգապէս։ Նունա գայ
առ այն մարդն՝ և ասէ․ ուստի գի
տացեր զթիւ ատամանց իմոց․ կամ
ով ասաց քեզ։ և նա ասէ, տէր, յիմ
ատամանցս գիտեմ զքոյդ՝ ասացի։
Առակս այս յորժամ կամենաս մար
դոյ կարեկից լինել․ թէ յիմս մար
մնոյս գիտեմ և զձերդ։ Որդեակ
իմ զի հասարակաց է պատերազմ,
սատանայի նախանձն միապէս կո
րուսանէ զմեզ՝ և տանի 'ի դժոխս֊
և առնէ որդի գեհենին։

Առիւծն հիւանդացաւ՝ և ուղար ԽԷ
կեաց բժշկաց խնդիր․ թերևս

արաս

տրտացին դեղ ցաւոյն։ Եւ եկեալ բժշկապետացն. և ասեն ընդ առիւծն. Թէ քո ցաւոյդ այլ դեղ չկայ քանոր զիշուն ականջան կըտրեն, և զսիրտն հանեն, և տան որ ուտես, և աղեկնաս։ Նաև առիւծն ընդ աղուէսն. եթէ կարես էշ մի գտանել՝ և բերել։ Եւ ասէ աղուէսն. խիստ շուտով կատարեմ ըզ հրամանս քո։ Քանզի ունիմ ինձ եղբայր՝ էշ մի. և է խիստ սաստիկ գէր. և է յայս անուն հովիտս, և արածի։ Եւ գնաց աղուէսն առ էշն, և ասէ. ո՛ բարի և հեզ էշ. այժմ գիտացիր, զի մեծ փառաց կամիմ հասուցանել զքեզ։ Քանզի առիւծն որ է թագաւոր գազանաց հիւանդացեալ է՝ և մօտ ՚ի մահ է. և ուզէ որ տեսանէ ըզ քեզ. և զթագաւորութիւն ՚ի քեզ տայ։ Եւ հաւատաց էշն խաբողական բանիցն. և եկն առ առիւծն. և ՚ի համբուրել զառիւծն. ա

ռիւծն

ռիւծն զբերան եբաց՝ և կամէր
խեղդել զէշն. և իշուն փրթեալ
փախեաւ։ Իսկ հասեալ աղուէսն
իշուն՝ և ասէ. ո՞ անմիտ՝ ընդէր փա
խեար. և ասէ՝ եթէ ՚ի համբուրելն
կսկծեցոյց զիս։ և ասէ աղուէսն.
եթէ այն ՚ի սաստիկ սիրոյն էր։
Դարձիր, և մի փախչիր և եկն էշն
առ առիւծն՝ և աղուէսն կալեալ
զփողս իշուն. հանեալ զսիրտ իշուն
և զականջսն կտրեալ կերաւ։ Իսկ ասէ
թէ դեղ է՝ նայ լաւ է ինձ, քան ա-
ռիւծուն։ Իսկ գնաց աղուէսն առ
բժշկապետսն, և առ առիւծն՝ և
ասէ. եթէ եկէք զարմացէք, և հիաց
ման իրք տեսէք, զի այն էշն ոչ ականջ
ունէր և ոչ սիրտ։ Իսկ եկեալ տեսին,
և ասէ աղուէսն ցբժիշկսն. եթէ է̄
էր զարմանայք եթէ սիրտ և ականջ
չունի. թէ դա սիրտ և ականջ էր ու
նեցեալ. զի երբ յառաջն առ առիւծն
եկն և զմռնչոյն լսէլէր. նայ կրկնա
կի չէր դարձեալ։ Իսկ արդարացու
ցին

ցին զբանն աղուէսուն։ Վայ մեզ՝ զի ականջ ունիմք՝ և ոչ լսեմք զպատուհասս դժոխոցն. և սիրտ ունիմք, և ոչ իմանամք զխաբէութիւն սատանայի։ Ո՛վ մարդ՝ որ զմեղսն թողու. և այլուրէ ի յայն մեղքն դառնայ. նա մատնի ՚ի ձեռն սատանայի՝ որպէս մեռաւ էշն ՚ի ձեռն առիւծուն. առիւծն և աղուէսն են սատանայ. և էշն անդարձ մեղաւորն, որ ոչ դառնայ ՚ի մեղաց։

ՃԸ Եկեալ բժշկապետ մի ՚ի քաղաք մի. ձայնէր, և ասէր ընդ մարդիկք թէ խիստ բժիշկ եմ. և ամ̃ ցաւոց դեղ ունիմ. և զհիւանդն ողջ առնեմ։ Եւ այր մի կամէր ծաղր առնել զհաքիմն. և առեալ իշու ագի մի. և պահեաց զնա ընդ հանդերձովն. և ասէ ընդ հաքիմն. ով իմաստուն բժիշկ. գայլն խածեալ է զիմ իշուկն. կարես զիմ իշուն դեղ առնել՝ որ ողջանայ։ Եւ ասէ հաքիմն

քիմն խիստ քաջ. գնա բեր դեկան
մի՝ որ տամ սև միհամի և սպիտակ որ
ողջանայ. և այրն զիշու ադլին եցոյց՝
և ասէ. այսօր կարես դեղ առնել.
և նա ասէ՝ ո՞վ այր այդօր Ո՞չ կարէ
դեղ առնել՝ որ առողջ իցէ. ես զի
արդ կարեմ իշուն ադլին. որէ նշան
իշուն. զէշ առնել: Այ մեզ՝ զի
նշան է մնացեալ 'ի մեզ քրիստո
նէութեն ոչ այն իշուն ադլին. ա
նուամբ միայն եմք քրիստոնեայք՝
և ոչ գործովք: Ո՛սէ հաւատք ա
ռանց գործոց մեռեալ են. և հաւ
ատ առանց գործոց դատարկ է:
մարմին առանց հոգւոյ մեռեալ է
նոյնպէս և հաւատ առանց գործոց:

Այր ոմն գնաց 'ի հողվարքն. և ՃԹ
երեք գանգ եառ մարդոյ. եդ
'ի սկուտեղն և գնայր ընդ փողոցն 'ի
ներքս. և ձայնէր, և ասէր. ով գնէ
գանգ: Ո՛ւ ծառը առնէին զնա.
և ասէին թէ խև է. և տեսեալ զնա
վա

վաճառական մի, և ասէ. բեր ըզ
գանգդ տեսանեմ։ Իսկ առեալ վա
ճառականն. և հանեալ զմախաթն
և հասոյց 'ի յականջն՝ և ոչ եմուտ
և ընկեց զնա։ և ածեալ ընդ ա
կանջ երկրորդին. և միւս ականջն
թափանցիկ անցաւ։ և յերրորդին
ածեալ՝ և ամենևին ոչ ելանէր յա
կանջէն մախաթն։ Իսկ զերրորդ
գանգն խիստ սիրեաց վաճառա
կանն. և զերկուսն արհամարհեաց.
և ետ բազում ոսկիս՝ և գնեաց զմէկ
գանգն զայն, որ մախաթն կալաւ,
և ոչ ելանէր. և բազում բժշկու
թիւն առնէր գանգն 'ի հիւանդս և
յախտաժէտս։ Իսկ մեկնեաց վա
ճառականն՝ և ասէ. եթէ այս որ
մախաթս չմտաւ. նայ այս նոքա են
որք ամենևին Քի բանքն յուրեանց
ականջն և լսել չէ մտեալ՝ և ոչ բա
րիս գործեալ։ Այն որ Քս ասաց.
որ անկաւ ապառաժին, և 'ի չգոյէ
հիւթոյ չորացաւ. և այն որ ընդ

մի ականջն մտաւ մախաթն. և ընդ-
մէկ այլ դեհն՝ 'ի դուրս ելաւ. Նայ
այս այն մարդիկքն են՝ որ ա՟ծային
բանն ընդ մէկ ականջն մտեալ է՝ և
ընդ մէկայլն ելեալ. որ անկաւ և
հեղձաւ՝ և եղև անպտուղ: Եւ այն
որ մտաւ՝ և ոչ ել. այն մարդիկքն
են, որք ա՟ծային բանքն յիւրեանց
լսելիքն են մտեալ՝ և այլ ոչ ելեալ.
այն որ անկաւ յերկիր բարի, և ետ
պտուղ և գործեաց զարդարու-
թիւն. երեսուն, վաթսուն, և հա-
րիւր: Ո ի թէպէտ և մեռեալք
են նոքա. ապա կենդանիք են. և
փոխեալ 'ի մահուանէ 'ի կեանս՝ և
'ի խաւարէ 'ի լոյս:

Առիւծն մի 'ի քար այր մի մտաւ. ՃԺ
և ասաց ա՟մ կենդանիք՝ 'ի յինքն
'ի տես գան. և զարջն դունապան
եդ 'ի դուռն քարայրին. գազանք և
էրէք որք մտանէին առ առիւծն որ
սուտ հիւանդացեալ էր նա զամենն

9 թ ուտէր.

ուտէր. և այլ ոչ ելանէին. եկն
խոզն. քան զի բնութե̃ 'ի վայր հայե
ցող է. կանգնեցաւ 'ի դրանն. և
ոչ մտանէր: Եւ ասէ դռնապանն,
մուտ 'ի ներս. և ասէ ոչ մտանեմ, քանզի
որ մտեալէ՝ այլ չէ ելեալ. ահա ե-
րևի հետն: Եւ էհար դռնապանն
զխոզն. և խոզն բարկացեալ զբաշն
լարեաց՝ և էզարկ զարջն. և ընդ եր
կուս կէս արար՝ և մեռաւ. և ամօ
թալից արար: Ցուցանէ: Փ. է. քար
այրն դժոխքն է. և առիւծն սա
տանայէ. և արջն իւր զօրքն է: Եւ
մեղաւոր՝ որ անդարձ է մեռեալ.
և'ի դժոխքն է անկեալ այլ ո՛չ կարէ
ազատիլ: Եւ խոզն որ դարձաւ և ոչ
մտաւ. Նա այն մեղաւորն է՝ որ
զմեղսն եթող՝ և դարձաւ՝ և ոչ
մտաւ 'ի դժոխքն. ոպ̃ խոզն այն
ոչ մտաւ 'ի քար այրն Ապաշխա
րեաց մեղաւորն և ելաց. և այլ ոչ
գործեաց մեղս. և ամօթ արար
զսատանայ. ոպ̃ արար խոզն զարջն:

Այր

Այր ոմն հազար խոզ էած 'ի մի տեղի՝ և զպարիսպ էած շուրջ. և ի շուրջ կորեկ և գարի բերէին, և բոտէին զխոզսն։ Նա իշխա՛նքն 'ի բանէն երբ գային. և քուռկնին երթային մօտ 'ի խոզերն՝ թէ ուտեն 'ի կորեկէն. կամ 'ի գարուոյն. և պահապանքն ոչ թողուին. այլ 'ի կառաւին հարկանէին։ Եւ յորժամ իշխա՛նքն գային՝ նա քուռկնին գանկատէին մօրերուն, և ասէին. թէ խոզերուն անխնայ կուտան, թէ կերէք. և մեք սովամահկու լինիմք։ Եւ ասեն իշխա՛նքն ը քուռկնին. թէ համբերեցէք. այն խոզերն որ կուտեն՝ նա պիտի որ վճարեն զմէն՝ զինչ կերեալեն։ Եւ անցին աւուրք ինչ. և ահա եկն թագաւորն՝ նըստաւ ի վերայ պարսպին. և հրամայեաց՝ որ զամէն խոզերն կապեն՝ և ընդմէջ կտրեն։ Եւ սկսան կապել և կտրել ընդմէջ։ Եւ սկսան խոզքն բողոքհարկանել՝ և ճիչ բառնալ.

ՃԺա

նալ. և ճչէին առաւել քան զայլ
կենդանիս. և ասեն քուրմնին ընդ-
իշոմանին. Թէ այն ինչ ձայն է.
և ասեն՝ թէ կու վճարուին՛ի խոզե
րոյն զոր կերեալ էն. և տեսեալ քուր-
մնոյն զտանջանս խոզերոյն՝ դողային:
Եւ կանչեցին, և անկին յոտս իշոցն և
ասեն, թէ վ̄ Ա̄. Յուսեանք. թէ գարե
հատիկ ճղակմիջերս է կպեալ. կամ,
կորեկ հատ՛ի կռնակիս. և ասեն մայ
րերն ընդ քուրմնին. Թէ մի վա
խէք՝ ով կերեալ է նայ այն վճարէ.
դուք մի հոգայք: Զ Յուցանէ: Որ
խոզքն մարմնասէր մարդիկքն են,
և փափկասէրք. և անզեղջ և ան
դարձ մեղաւորքն, և իշխանքն: և
քուրմնին աղքատքն: Եւ այն որ
ծեծէին, և ոչ տային թոյլ ուտե
լոյ. որ և մեղաւորն հարկանէ զաղ
քատն՝ և ոչ առնէ զողորմութի. և
ընդ անձն ասէ՝ թէ կեր, և խմէ՝ որ
չհիւանդանաս: Եւ թագաւորն
Ածէ՝ որ և յաւուր դատաստանին
ասէ

ասէ վասն մեղաւորայն․ Թէ կորե ցէք ընդ մեջ՝ և հանէք 'ի խաւարն արտաքին․ ուր լալ աչացն է, և կըր ճել ատամանցն ։

Ճժը

Նախնական հաւ մի 'ի Թագաւո րաց տունն ։ և յորժամ մարդն հիւանդանայ․ նա բերեն զհաւն մօտ 'ի հիւանդն ։ Մինչ ունիցի հիւ անդն դարձ որ առողջանայ․ նա հաւն քաղցրութբ հայի 'ի հիւ անդն, և գիրկ արկանէ, և զհովհա րու Թևոցն ։ Ապա Թէ մահու լինի հաւն խոլոր հայի, և դարձուցա նէ զերեսն 'ի հիւանդէն, և փախ չի․ և այն հաւուցն կարեն գիտել մարդիկք զմեռանելն և զապրելն ։ Յուցանէ ։ Հաւն Քս օրինակ է՝ և հիւանդն մեղաւորին․ արարիչն Ած հայի 'ի մեղաւորն․ ոչ հայի հաւն 'ի հիւանդն, եԹէ կամք ունի որ դառնայ և զղջանայ․ նայ Ած քաղցութբ 'ի մեղաւորն հայի․



և

և գիրկ արկանէ, և համբուրէ.
զի ոչ կամի զմահ մեղաւորին՝ այլ
դդառնալն 'ի չար ճանապարհէն։
Ապա թէ չունենայ կամք մեղաւ-
որն դառնալ 'ի մեղաց. նա Ա̃ծ դար-
ձուցանէ զերեսն 'ի մեղաւորէն։
Որպէս ասէ մարգարէն. դարձու-
ցից զերեսս իմ 'ի նոցանէ՝ և ցու-
ցից նոցա։

ՃԺԱ Այր ոմն մեծատուն ունէր բա-
զում կաղապար ոսկի և արծաթ.
և տարեալ թաղեաց զնոսքն 'ի գե-
տին։ Եւ ծառայքն տեսին զտեղին
ուր թաղեաց. և 'ի գիշերի գաղտ
հանին, առին և փախեան. և իմա-
ցեալ այրն որ չկայր ոսկին և ար-
ծաթն։ Եւ սկսաւ լալ՝ փետել զմո-
րուսն՝ և վայ տայր անձինն. և նեղա-
սրտեցաւ՝ և կամէր չուան առնուլ
և կախիլ։ Եւ տեսեալ այր մի ի-
մաստուն, ասէ. ընդէր խեղդիս։
Եւ ասէ ծառայքն իմ զոսկին և զար-
ծաթն

ծաթն իմ գողացան, և փախեան։
Եւ ասէ իմաստունն. որչափ էր ոս
կին։ և սակի քար կայր. և ցուցանէր
թէ այս չափ էր՝ և այնչափ էր։ Եւ
առեալ իմաստունն զքարն և զսալն
թաղեաց՝ ի տեղւոջն ուր ոսկին էր.
և ասէ իմաստունն, ահա ոսկին քո
աստ. քանզի անպէտ էր քեզ իբրև
զքարս զայս։ Եւ բանիւս այսուիկ
իմաստունն մխիթարեաց զայրն. և
թափեաց, որ ոչ խեղդեցաւ։ Յու
ցանէ։ ամ մարդ որ զոսկին և զար
ծաթն սիրէ. նայ զերդ զայն այրն է
որ ոչ հոգւոյն եղև՝ և ոչ մարմնոյն։
Եւ փոխանակ շահոյն կամէր խեղ
դիլ. և անձնիմահ լինիլ. զարծաթ
սիրութիւն ասէ արմատ է ամ չարեաց։

Է ծառ մի՝ ի հնդկաց աշխարհն. և ՃԺԳ
ունի պտուղ գեղեցիկ և քաղցր.
և է տերևալից. և ունի շուք գեղե
ցիկ։ Եւ է՝ ի սահմանսն իժ օձ
բազում. եթէ օձն՝ ի մարդկանէ

որք 'ի ծառէն տակն գտանէ, չխայթէ. ապա թէ 'ի զատ գտանէ 'ի ծառէն խայթէ։ Ցուցանէ։ Ծառն ԱԾ, և պտուղն և շուքն պատուիրանն ԱՅ. և օձն սատանայ. եթէ ոք գտանէ 'ի դուրս 'ի պատուիրանէն ԱՅ. նա խայթէ զնա օձն այն։

ՃԺԵ Եւ աՀա ժողովեցան 'ի մի տեղ՝ տասն վաճառականք. և գնացին ընդ ճանապարՀ մի. և մտին յերկիր մի օտար՝ և յերկիրն այնէր սով. և իժ, և օձ. և նեղութի. և վաճառականքն տարակուսեցան։ Եւ անկաւ յետոյ նոցա Հրեղէն պարիսպ. և ոչ կարէին յետս դառնալ. և առեալ նեղ ճանապարՀ մի երթային՝ թերևս գտանիցեն զքաղաք՝ զի վաճառեսցեն. և գնացին աւր մի մեծաւ աշխատանօք՝ և ոչ գտին զշէն. և լալով և ողբալով կոծէին զանձինս իւրեանց։ Եւ աՀա երևեաւ նոցա թև մի արծուոյ. և նք

քա

ջանացին, և զթև մի այլ շինեցին։
Իսկ հինգն 'ի նոցանէ կորեան. և
հինգ թուեան, և վերացան. և տե
սին գաւառ մի լուսեղէն. Իսկ թա
գաւոր քաղաքին առաքեաց առ նո
զօրականս՝ և ասէ. բարի եկիք՝ ահա
քաղաքս առաջի ձեր. յոր տեղ կա
միք դուք՝ 'ի հոն հանգիք։ Իսկ համ
բուրեաց թագաւորին զվաճառա
կանսն. և գոչեաց՝ և ասէ. վաշ է
ձեզ՝ որ ընդ նեղ ճանապարհն ե
կիք։ Իսկ մտեալ 'ի քաղաքն գտին
զվաճառականսն՝ զորս 'ի բազում
ժամանակս ցանկային զի տեսանի
ցեն։ Իսկ գտին զգանձս՝ և զդիպակս՝
և զկումաշն՝ զոր կամէին գնել. և
ուրախացան մեծաւ ուրախութ̃ե։
§ Ցուցանէ։ Օ ի տասն վաճառա
կանք ադամ է և իւր ծնունդքն. և
այն որ օտար երկիր՝ և յիժանոց. և
'ի սով որև արտաքսեցաք յանմահա
կան դրախտէն. և անկաք յայսաշ
խարհս՝ ուր կայ իժ և օձ. որև ան

տանիս՝ և 'ի նեղութեան կամք հոգւով և մարմնով: Իսկ այն որ թէ արժանի բուսաւ, այն հաւատն է. որ Ք̃ս յերկնից յերկիր իջաւ՝ և հաւատս ետ մարդկան: Իսկ այն որ ջանացին. և թէ մի ևս ինքեանք չինեցին. այնք են. որք ջանացին, և բարի գործեցին. մէկ թէ հաւատքն. մէկ բարեգործութին: Իսկ այն հինգն որք կորեան. այն նոքա են, որ մեղս գործեցին, և կորեան 'ի ձեռն սատանայի. որք են դասք ձախակողմանցն. որք կոչին յիմարք կուսանք: Իսկ այնք որք թուեան, նոքա են՝ որք լացին, և ողբացին. զանձինս իւրեանց չարչարեցին վ̃ն արքայութեն, որք են դասք աջակողմանցն. որք կոչին իմաստունք կուսանք: Իսկ այն լուսեղէն գաւառն երկնից արքայութին է. քաղաքն անդրանկաց վերինն Եմ̃: Թագաւորն Ք̃ս է՝ և զօրականք հրեշտակքն. որ և Ք̃ս բազում հրեշտակս առաքէ՝ յորժամ մեռա

նի

նի արդարին. և գովէն զարդարսն,
որք զերկրաւոր կեանս արհամար
հեցին: Եւ համբուրէ ԱԾ զար
դարսն և ասէ՝ վաշ է ձեզ. որ ընդ
նեղ ճանապարհն եկիք. ով լինքն
ասաց. նեղ է ճանապարհն, և ան
ձուկ է դուռն, որ տանի՛ ՚ի կեանսն
յաւիտենից. և սակաւք են, որք
գտանեն զնա: Նեղ ճանապարհ
զչարչարանսն ասէ: և որ նեղութեց
համբերէ. և այն որ գտանէ բե
հեզս՝ ծիրանիս՝ և զդիպակս՝ և
զակունս. որ է բարեգործութիւն,
պահքն, սէրն, համբերութիւն,
և այլ բազում: Եւ այն, զի գտին
զվաճառականսն. զորս ՚ի բազում
ժամանակս ցանկային տեսանել.
որ և արդարքն որչափ էին յայս
կեանքս, նա ցանկային զի տեսա
նիցեն զմարգարէսն, և զառա
քեալսն, և զհայրապետսն. և զմար
տիրոսն. որև գտին զարդարսն՝ զորս
ցանկային տեսանել: Տասն կուսան

ուսկանք. զտասն կուսանսն ասէ։
Նոյն այն որ հինգն կորեան այն զյի
մար կուսանսն ասէ։ Նոյն այնոր
հինգն ապրեցան, և Թուեան. զի
մաստուն կուսանսն ասէ՝ որք Թը
ռեան արքայութե՛։

ճժգ

Այր քաղաքի մի. և կայր բազում ծանապարհ, որ երԹայր 'ի քաղաքն յայն։ Բազում մարդիկ գնացին. և մին մարդն արդիլեցաւ՝ և զաօլերաց փոկերն կապէր. և այլ ոչ հասաւ. և դուռն քաղաքին փակեցաւ՝ և ոչ կարաց մտանել։ Ցուցանէ։ Այս փոքր առաքինութիւն է՝ և Թէ մեծ տանի զմարդն յարքայուԹիւն. ոմ զծանապարհն այն, որ զմեծ և զփոքրն տանէր 'ի քաղաքն։ Նոյն որ ընդ աշխարհիս զբաղմանն զբազն խեղճ մեղաց շաղախի. նա ոչ կարէ հասանել արդարոցն. և մտանել 'ի քաղաքն անդրանկաց. ոմ այրն այն, որ ընդ սօլերովն եղև

և

և ոչ էհաս ընկերացն. և ոչ մտաւ 'ի քաղաքն. Ջըն փակեցաւ դուռն։ Այնպէս փակի դուռն ողորմութե անողորմիցն, և անդարձ մեղաւորացն յաւուրն դատաստանի. որպէս փակեցաւ յիմար կուսանացն։

ՃԺԵ

Ակներն ասացին ընդ իրեարս. թէ այդ երբ է որ մեք ոչ սլեհ ունիմք և ոչ եղջիւր. և կատուն զմեզ դիրաւ կալնու։ Եւ մկունքն սրեցին փայտ, և կապեցին 'ի գլխնին. որ թէ կատուն գայ նա մեք կռուելիմք. որ ոչ առնու զմեզ. և ահա եկն կատուն, և մկունքն փախեան, և ընդ ծակն 'ի ներս մտին. և այնք որք զփայտն եղջիւր էին կապել. ոչ կարացին մտանել ընդ ծակն. այլ կատուն կալաւ և եկեր։ Յուցանէ։ Մուկն որ եղջիւր կապեաց, այն մարդիկքն են որք պըղնեն և ծարուրվլին. և սալխտակացուցանեն զերեսս. և պապականեն

դէ

գեղեցիկ. և այն զոր Տ՟ր է ստեղ-ծել ոչ հաւանին. այլ ինքեանքն այլ գեղեցկանան. և որոգայթին 'ի ձեռն սատանայի. ոպ՟ որոգայթե-ցաւ մուկն 'ի ձեռն կատուին:

ՃԺԸ Օձն յորժամ ելանէ 'ի ծակէն, և երթայ ընդ որ և կամի. նայ հինգ ծուռ առնու՝ հինգ տեղծուինքն՝ և ապա կարէ գնալ: Իսկ յոր-ժամ գայ 'ի ծակի դուռն ըղորդի և ապա կարէ մտանել 'ի ծակն՝ յիւր հանգստարանն: Ցուցանէ: Որ մարդն՝ հինգ զգայարանս ունի. աչքն. ականջն. բերանն. ձեռքն. ոտքն. նայ մարդ յորժամ գնայ 'ի մեղս զհինգ զգայարանսն ծռէ, Աչքն չար հայի. ականջքն չար լսէ. բերանովն չար խօսի. ձեռօքն անօրէնութի գործէ. ոտօքն 'ի չար ճանապարհ գնայ: Իսկ յոր-ժամ մարդն գայ եկեղեցւոյ դուռն աղօթել. նա պարտ է զհինգ ըզ-

գայա

գայարանսն ըղորդել. և 'ի չարէն
կտրել. և ապա յեկեղեցին մտա-
նել և աղօթել. որէ մայր մեր. և
հանգստարան. և ապա Տ՜Ր ընդ-
ունելի լինի աղօթքն։ Աստ օձն այն,
թէ չղորդէ զհինգ ծուռն. նա
ոչ կարէ մտանել 'ի ծակն և 'ի հան
գստարանն. նոյնպէս մարդն թէ
ոչ կորէ զհինգ զգայարանսն 'ի
չար սովորութ՜էն, նա ոչ մտանէ
յարքայութ՜ին Տ՜Ր։ Չէ պարտ
մարդոյն այնմիկ որ յեկեղեցի Տ՜Ր
մտանէ։

ՃԺԹ

Օձն երթայ 'ի դուռ դաշտ. և
'ի կանաչ և 'ի ծաղկանց մէջ.
և կանգնի իւր Ի՜ տոտանն, և խմանայ
թէ հո՜մն յոր դիհաց գայ. և դէմ
հովոյն կանգնի. և հո՜մն զծաղկանց
հոտն Ի՜Է ինքն զարկնէ. և պարարտա
նայ 'ի հոտոյն։ Եւ ծաղիկ մի կայ
յորժամ այն ծաղկին հոտն ընդ-
ինքն դիպի. նայ լուսատու մարգա-

րիտ

չևտ մի 'ի գլուխն յօրինի. և գիշերն
ընդ որ երթայ օձն այն լոյս է նորն.
և լուսաւորէ մարգարիտն զօձն.
և ցերեկն մութն։ Ցուցանէ։ Ա.է
դաշտ կանաչ եկեղեցի Քսի է. և
ծաղիկն պատուիրանն Քսէ, առա
քելական և մարգարէականն։ Ու
այն մեծ ծաղիկն՝ որ գեղեցիկ է, և
զլուսաւոր մարգարիտ շնորհէ.
այն աւետարանն Քնի է. և հոմն
Հոգին սբ։ Եթէ որ իմաստութիւն
երթայ յեկեղեցի Քսի. և հաւատով
մտնի դնէ Քս բանիւն. նայ Հո
գին սբ անուշահոտութիւն արբու
ցանէ զնոզս. Եւ եթէ զաւետա
րանական բանն, հաւատով և սրտի
մտօք առնու 'ի միտ. նա լուսաւոր
մարգարիտ լինի անգին. և զհո
գւոյն խաւարն, որ է մեղքն, հա
լածէ. և զաշխարհիս կեանքն
որ է սուտ լոյս՝ մութն երևեցու
ցանէ։

Գող մի ձմերուկ մի գողացաւ 'ի պարտիզէն, և կամէր կտրել։ Խօսեցաւ ձմերուկն և ասէ. մի կտրեր զիս. զի 'ի միջի իմ խարտացն էշ կայ՝ կաց մինչոր ածեմ և ապա կտրէ։ Նա հաւատաց այրն՝ և տարեալ 'ի տունն եդ 'ի պատուհանն. և եկաց անդ մինչև պառլեցաւ՝ և պթխեցաւ՝ և եղաւ նեխութին արտաքս. և ազատեցաւ 'ի գերութէ։ ՃԻ

Ցուցանէ։ Յորժամ մարդն ընկնի պարտէ ասել զինքն թագաւորի որդի եմ, կամ մեծատան. որ չսպանանեն, այլ պահեն. մինչէ գան գանձ տան և գնեն։ Նա ծառայն կամ մահով խալսի. կամ փախչի, և ազատի։

Էր ծառ մի բարձր յոյժ. և տերևքն իւր մեղր կաթեցուցանէին. և այր մի ելեալ 'ի նմա լիզէր զտերևն իւր։ Նա մկունք երկու հատանէին զծառն. և կայր առաջին ծառոյն ՃԻԱ

գուբ մի սոսկալի, և ահագին վէշապ մի 'ի նմա։ Եւ այրն այն ոչ երկնչէր՝ և ոչ դադարէր 'ի լիզելոյ զմեղրն։ Ցուցանէ առակս։ Կ․է ծառն ժամանակս է․ և մեղր 'ի նմա մեղքն է, և հեշտութիւն․ զոր գործեմք լիզելով։ Եւ երկու մկունքն տիւն է և գիշերն․ որք հատանեն զժամանակս մարդոյն։ Եւ գուբն գերեզմանն է․ և վիշապն մահն է։ Այ մեզ՝ զի հեշտացեալեմք յայսցանէ, որք կան առաջի մեր։

ճիբ Էր այր մի՝ որ ունէր կին մի բարկացող՝ և անզգամ, և լեզուանի․ որ հանապազ անհանդարտէր՝ և տանջէր՝ զայրն իւր։ Եւ յաւուր միում 'ի միտ եած զբանն սողոմոնի թէ լաւ է յանապատի բնակել քան ընդ կնոջ անզգամի լեզուանւոյ և բարկացողի։ Եւ ասէ 'ի կինն․ այ կին տուր ինձ պարան զի երթայց 'ի լեառն՝ և բերից

տանս

տանս փայտ վառելոյ ։ զայս ասաց՝
և երթայր 'ի լեառն զի անդ բնա
կի ։ Իսկ կինն աղաչատեաց և գարշ
մնաց․ և այրն լալով գնաց 'ի լեառն։
Իսկ իբրև գնաց 'ի շուրջ, եգիտ անդ
'ի լեառն դատարկ ջրհոր մի ։ Իսկ
ասէ 'ի միտս իւր․ երթայց, բերից
զկինն իմ աստ՝ 'ի ջրհորս իջուցից՝
և թողից աստ։ Իսկ գնաց առ կինն,
և ասաց․ այ կին, ես քեզ բան մի ա_
սեմ, և դու զայն մարդոյ մի ասեր․
և ասէ կինն ինչ ։ Իսկ նա ասէ, գնա
ցի 'ի լեառն՝ և գտի անդ դատարկ
ջրհոր մի․ և իջի անդ, և տեսի կա
նայցի զարդ ոսկեղէն և արծաթե
ղէն։ Մարջան՝ մատանի՝ խալխալայ՝
վզնոց՝ ձրամնկլիտ և այլ զարդս կա
նացի ։ Իսկ ասէ կինն ուրախութեամբ,
երթամք՝ հանեմք զայն և բերեմք 'ի
տունս՝ որ մարդ չիմանայ՝ և ոչ տե
սանէ ։ Իսկ երեալ գնացին այրն և
կինն 'ի բերան հորոյն ։ և ասէ, դու
բռնէ զպարանն․ զի դու ոչ գի

տես զինչ առնես ։ Նա կնոջն ասէ,
թէ ես իջանեմ։ Նա այրն կալաւ
զպարանն, և իջոյց զկինն 'ի հորն. և
բերեալ մի սայլ քար եդ ի վր հորոյ
բերանն, և գնաց ։ Եկաց աւուրս
բազում։ Նա ասէ՝ երթայց, և տե
սից զկինն իմ, թէ զինչ եղև. և յոր
ժամ եկն 'ի ջրհորն՝ ետես 'ի բե
րան հորոյն զդև մի՝ զի կայր անդ ։
Նա ասէ դևն, ով մարդ՝ Ո՜ համար
աստի տար զսայլն 'ի յետ՝ որ ես ելա
նեմ. և քեզ շատ բարութին առ
նեմ։ Ասաց այրն զինչ ։ ասէ դևն,
կին մի եկն աստ՝ անկաւ 'ի ջրհորս.
և անարգէր՝ և հայհոյէր զայր մի ։
Նա ես ասացի, թէ քանի քաշանք
տաս. մէկ պահ դադար տուր. և
նա եթող զայր իւր՝ և վիճեցաւ
ընդ ինձ։ Նա փախուցեալ զիս ազա
տէ. և ասէ այրն, զինչ խոստանաս
ինձ. և նա ասէ՝ երթամ, և մտա
նեմ 'ի դուստր թագաւորին, որ
քեզ տան. Յայնժամ այրն այն եր
դումն

դուռն եդ դխուլն. և ծերպեաց
զայն և ել դեն: Եւ ասաց դեն,
յորժամ գաս և առնուս զդուստր
թագաւորին. ես երթամ, մտանեմ
յայլ թագաւորի դուստր. և դու
անդ մի գար թէ չէ յայնմանէ ե-
լեալ 'ի քեզ մտանեմ: Եւ ել դեն,
և գնացեալ եմուտ 'ի դուստր թա
գաւորին. և աղաէր, և ասէր 'ի
բերանոյ աղջկանն. թէ զիս այս
ինչ մարդոյ տուք որ ելանեմ: Եւ
յորժամ տարան զայրն զայն, և ել
դեն. և գնացեալ եմուտ յայլ թա
գաւորի դուստր՝ և լլկէր զնա չա
րաչար: Եւ թագաւո՛րն լուաւ՝ թէ
փեսայ թագաւորին բժշկութին
առնէ, և զդևս հալածէ. յուղար
կեաց թագաւորին բազում կլայ
էթ և արմաղան. թէ յուղարկէ
զքո փեսայն՝ որ գայ իմ դուստրն
բժշկէ: Յայնժամ աղաչեաց թա
գաւորն զփեսայն իւր Դէ գնա.
և նա ելեալ գնաց: Եւ յորժամ

գնաց առ թագաւորին դուստրն։
Բաց դէն, ես քեզ ոչ ասացի
թէ աստ մի գար. և դու ընդէր
եկիր։ Յայնժամ փեսայ թագաւ-
որին ասէ. ես եկի զի քեզ իմաց
արարից. զի այն կինն եղեալ է
՚ի հորոյն. և զքեզ կարի խստակու-
զէ։ Ասէ թէ ուր է. և նա ասէ
թէ աստ եկեալ է ՚ի դուրս դար-
պասին։ Նա ասէ դէն, Ո՜, սիրուն
համար զնա ՚ի դուռն արգիլէ.
մէկ պահ՝ որ ես երթամ, ՚ի վեր
փախչիմ. և քեզ շատ բարութիւ-
նեմ։ Նա այնպիսի բանիւ բժշկեաց
զդուստր թագաւորին. և թա-
գաւորն ետ նմա բազում գանձս,
և առեալ գնաց։ Յուցանէ առակս.
Մարդ հետ լեզուանի կնոջ՝ անզ-
գամի, և բարկացողի ոչ եղանէ
՚ի հուն։ Օ ի սաղոմոն հրամայէ.
թէ լաւ է անապատի բնակիլ քան
ընդ կնոջ անզգամի, լեզուանւոյ
և բարկացողի։

Այր մի բարի. զատեալ ամ̃ չա Ձեզ.
րեաց. և երթային ճանապար
հորդք և վաճառականք բազումք
յաշխարհէ յաշխարհ. և այս բա
րի այրս ի մէջ նոցա. Իսկ գնացին 'ի տե
ղի մի՝ որ ասէին թէ, երեք աւուր
ճանապարհք այլ ջուր չկայ. Մէկ
ջրհոր կայ. և անտի ընդ այն այլ
երեք աւուր ճանապարհ այլ ջուր
ոչ կայ. Իսկ յայն ջրհորին բնակեալ
կային երկու դեք. Իսկ զինչ մարդ
որ անդ մտանէր այլ ոչ ելանէր. և
գնաց կարաւանն անդ. և ջուր զոր
ունէին հատեալ էր. Յայնժամ
ասաց կարաւանին. ով առնու զիւր
արեան գինն՝ և մտանէ 'ի ջրհորս,
և ջուր տայ ամենեցուն. Ոչ ով
մտանէր, և ջուր տայր ամենեցուն.
'ի յետոյն որ զինքն խլէր .բարշէին.
դեն կտրէր զպարանն՝ և զմարդն 'ի
ջրհորն կորուսանէր. Իսկ ասէ բարի
մարդն, թէ ինձ տուք զարեան
գինն, որ մտանեմ 'ի հորն, և ջուր



տամ

տամ ամենեցուն ։ Իսկ առեալ զա
րեան դլնն , եւ եմուտ 'ի ջրհորն՝ եւ
տայր ջուր ամենեցուն հաւասար ։
Իսկ յորժամ զինքն կապեցին , դեւն
էհատ զպարանն . եւ տարեալ ըզ
մարդն 'ի մաղա զայն որ կայր 'ի ջըր
հորն . եւ զի դեւն այնէր այլակերպ
եւ դժնիկ սեաւդեմ ։ Իսկ ասէ 'ի
մարդն այն , թէ հաւանիս ինձ , եւ
ասէ մարդն այն , փառք Քի որ ըզ
քեզ առեղծեր է , եւ յօրիներ զայդ
քո կերպարանդ . զայդ լոյս երեսդ .
զայդ ծովաչերդ . եւ սկսաւ գովել
զնմ տեղիք նր մի ըստ միոջ է ։ Իսկ
էր անդ ժահահոտ գուբ մի . եւ
ասէ դեւն ընդ այրն , թէ գուբդ
ինչ աղդ է ։ Իսկ էր գուբն այն յոյժ
աղտեղի . եւ այրն սկսաւ գովել
զնա մի ըստ միոջէ զնմ տեղիս գոր
ծոյն այնորիկ ։ Իսկ յայնժամ եղ դեւն
եւ գուբն մեծին յայլ ներքսի մաղա
զայն . եւ փոխեցան յայլ կերպարան
լուսափայլ . եւ եկին առ այրն , եւ
ասեն՝

տանն՝ հիմն ննջեմք. զի մինն 'ի
կորիծ կերպարանեալ էր, և միւսն
յաղջիկ։ Եւ ասաց այրն այն, ես գի
տեի դուք հանց գեղեցիկ էք նա՝
ես այնոր համր զձեզ յառաջ գովե
ցի։ Եւ յայնժամ առեալ զնա դևն
եմուտ 'ի ներքս մաղապայն. և եցոյց
նմա զմաղաղայն, յոր զմարգիկն
ապանեալ էր. և ասէ 'ի յայրն՝ սոքա
ամենեքեան ինձ ոչ հաւանեցան՝
վասն այնորիկ սպանի։ Եւ դու ինձ
հաւանեցար, առ քեզ որչափ և կա
րես զանձ և մարգարիտ. և ակունս,
ոսկի և արծաթ՝ և զնա խաղութիւն.
զի դևն ունէր մաղաղայն։ Եւ ասէ
այրն թէ չեմ կարեր տանիլ զի հորս
խոր է՝ և ընկերքն իմ գնացին։ Յայն
ժամ առեալ դևն զմաղեայ տոպ
րակ մի, և ելից զնա ոսկւով և ար
ծաթով՝ և ակամբք պատուականօք.
և առեալ զինքն և զտոպրակն զան
ձոյն՝ և եդ 'ի հորուն բերանն, և
ասաց գնալ։ Եւ գնացեալ է հասս կա

 րուա

րոտանին։ Եւ նոքա տեսին, և զարմացան, թէ որպէս ազատեցաւ 'ի գլխէն։ Ցուցանէ առակս։ Նարի, և խոնարհ մարդոյն Ա՟ծ օգնական է. և դեն ոչ կարէ չար առնել նմա։ Զի ասէ սաղօմոն թէ արդարն յորսողաց փրծանի. և փոխանակ նր մատնի ամբարիշտն, և ինքեանք անկցին։

ճխդ Իմաստուն աւագերէց մի կայր 'ի քաղաք մի. կամեցաւ զորդին իւր քահանայ առնել։ Եւ ժողովեցան բազում քահանայք և եպիսկոպոսք. և յորժամ յօրհնել սկսան զնորընծայն. յայնժամ 'ի տեսիլ տարան զնորընծայն։ Զի էր բարձր ամնդուխ մի, և ամնդխին գլուխն էր զարմանալի դարպաս մի. և էր անդ բազմեալ լուսափայլ թագաւոր մի. և համօրս առնէր քահանայից։ Եւ բերին ըծ էր քահանայն 'ի ամնդխին տակն. և բերին

զինչ

զինչ կերեւալէր 'ի ժողովրդենէն. և կապեցին 'ի մի տեղ. և բարձին ծեր քահանային, թէ առ և եղ 'ի վեր՝ և համար տուր թագաւորին. Եւ նա ոչ կարէր՝ զի բեռն ծանր էր և սանդուխն բարձր. և հրեշտակ.ք հրեղէն մախաթով մխէին զնա յետևանց. և նա ոչ կարէր: Յայնժամ մինն 'ի լուսաւոր արանցն ասէ՝ թողէք զծերդ, զի զոր ինչ առեալ է որդւոյն է կերցուցեր: Եւ յայնժամ բերին զնորընծայն, և բարձին զբեռն նր իվր նր. և նա ոչ կարէր հանել 'ի վեր. և զհամարն տալ: Եւ հրեշտակ.քն կարի խիստ մխէին զնա յետևանց. և խիստ ցաւեցոյց զնորընծային, և 'ի ցաւուն զարթեաւ, և փախեաւ.և ոչ եղև .քահանայ: Յայնժամ ասաց եպիսկոպոսն. թէ .քեզ զինչ պատահեցաւ՝ որ չ լինիս .քահանայ. Ասաց նորընծայն՝ թէ այն որ ինձ պատահեցաւ՝ թէ .քեզ էր պատահեալ.

հեալ․ յառաջ դուն պիտի փախ
չէիր յեպիսկոպոսութէն ։ Զուգա
նէ առակս ։ Եւ ով ուտէ այն
վճարէ․ և զինչ մարդ որ ուտէ և
ոչ վճարէ, ինքնին տալոց է հա
մարն առաջի Թագաւորին յոր
ժամ գայցէ ։

ՃԻԵ Այր խմաստուն Ճարտարապետ
ոմն․ և ուսուցանէր զամ զի
մաստութին իւր՝ զոր գիտէր աշա
կերտին ։ Եւ երիս բանս ոչ ուսու
ցանէր ։ վն այն զի կարի խմաստուն
էր աշակերտն իւր․ և յորժամ
ուսանէր այլ ոչ կենար՛ի մօտն․ զի
յոյժ սիրէր խմաստութեան զաշա
կերտն վասն խոնարհութեն ։ Եւ
ասէր նմա որդեակ, կաց առ իս
մինչև վերջին աւուրն իմ․ և զայն
երեք բան իրատն ուսուցանեմ
քեզ՝ և գնա խաղաղութեամբ, և
այլ ոչինչ պակասի քեզ ։ Եւ նա
եկաց առ նմա մինչև յօր մահու
աննն ։

անն ։ Նա յորժամ հիւանդացաւ,
և գիտաց զվախճանն իւր․ յայն
ժամ ասաց ցաշակերտսն իւր՝ եկ
ասեմ․ երեք խրատս ։ Նա ասէ ցնա
մէկ զքո աղէկ օրդ վատի մի տար․
երկու յետնուց 'ի վեր ճանապարհ
մի գնար․ երեք զինչ աչօքդ տեսա
նուս զայն մարդոյ մի ասէր։ Մե
ռաւ, և թաղեաց զնա․ և ել գնաց
'ի քաղաք մի։ Նա ետես անդ գեղե
ցիկ դուռն մի բարձր․ և յառաւ
օտն աւերեաց զդուռն, և ջուր
ցանեաց, և գնաց։ երկու օրն զայն
արար․ և երեք օրն աչ կեցան, և
ըմբռնեալ տարան զնա առ դրանե
տէրն։ Նա ասէ պարոնն ուստէ
ես, և նա զիրաւն ասաց․ և ետես
պարոնն զտղայն, զի կարի գեղե
ցիկ էր, և իմաստուն։ և ասէ ցնա,
որդեակ՝ մեր թագաւորին որդի
չունի․ և դու կամիս՝ և տալայց
զքեզ՝ զի եղիցես որդեգիր, և ժա
ռանգ աթոռոյն։ Նա ասէ, դու

դե

գիտես տէր իմ։ Իսկ առեալ զնսաւ
Թագաւորն տարաւ, և առ Թագու-
հին. և արարին ուրեանց յորդի.
և եղև որդի Թագաւորին։ Իսկ յաւ-
ուր միում էր Թագաւորն յորս է-
րէոց. և ունէր Թագաւորն զմա-
տանի մի, որ յաջողութեն տլիսմ
իվերայ ականն գրեալ էր. և զայն
մոռացեալ Թագաւորն 'ի ներքև
բարձին։ Ասաց յորդեգիրն իւր.
թէ 'ի ներքև բարձին մոռացայ
զմատանին. գնա և բեր զմատանին
յաջողութեն։ Իսկ նա էլ յերիվար,
և գնաց զմատանին առնուլ. և
ետե. զմէկ նայիպն յանկողին Թա-
գաւորին. և նա էառ զմատանին,
և գնաց. և ոչ ումեք յայտնեաց ըզ-
բանն։ Յայնժամ խորհուրդ արա-
րին նայիպն և Թագուհին. զի յոր
ժամ գայցէ Թագաւորն սպանա-
նել տան զորդի Թագաւորին։ Իսկ
'ի գալ Թագաւորին գնաց Թա-
գուհին ընդ առաջ. և 'ի զուր մատ-
նեաց

նեաց զանմեղ մանուկն. Թէ յոր
ժամ եկն 'ի գիշերի տանել զմա
տանին, և դատապարտեաց զնո.
ոմ կինն պետաբերէի զյօսէփ։ և
Թագաւորն յամաչելոյն ոչ սպան
զմանուկն։ Այլ ուղարկեաց զնա
այլում Թագաւորի որ ընդ իշխա
նութեամբ էր եղեալ իւրն։ և գրեաց
առնա գիր այսպէս։ Թէ յորժամ
գայ Թղթիս բերօղն առ ձեզ. ըզ
գլուխն կտրեցէք, և յիս ուղարկե
ցէք։ Եւ մատնեհրեցին զթուղթն
արքունական մատանեաւն. և ե
տուն յորդէ գիր Թագաւորին. և
առեալ գնաց։ Եւ դրեալ կայր իմէջ
Թղթին. եթէ առէ, որդի եմ Թա
գաւորին, կամ նայիպն, կամ հաւա
տարն իմ, մի լսէք նոցա՝ հատէք ըզ
գլուխն։ Եւ առեալ զթուղթն
գնաց. և յորժամ յետինքն մօտ ե
ղև 'ի գեւղ մի. յիշեաց զբանն իմաս
տասիրին թէ յետնուց 'ի Ճանա
պարհ մի գնար. յայնժամ զտապալ
պաղն

պաղն եզարկ՝ և ելայ նայիլն զոր
ետես յանկողին թագաւորին. եկն
առաջ և առեալ տարաւ 'ի տուն
իւր, և ասաց. Հանգիր, կեր, արբ
և ուրախ լեր. և տուր թուղթդ յիս
որ տանիս առ թագաւորն. և քեզ
խաբար բերեմ. և նա ետ զթուղթն:
և առեալ գնաց: Նա հատին զնորա
գլուխն, յորժամ կարդացին ըզ
թուխթն. և ետուն յայլ ումն մարդ՝
որ ունէր, և բերէր 'ի գիւղն. և
զայն էառ որդի թագաւորին տա
րեալ ետ 'ի հայրն: Նա տեսեալ զայն
զարմացաւ թագաւորն. և գիտաց
զբանն՝ որ յԱ՛.Մէր յաջողեալ: Նա
ասէ որդեակ զինչ գործեալ է.քո.
զի քեզ էր որոգայթս պատրաս
տեալ. 'Ի.քո որոգայթն նա անկաւ:
Նա ասաց՝ թէ դաւիթ ասէ. թաք
ուցին ինձ զորոգայթ. և անկան ին
քեանք 'ի նոյն: Ցուցանէ առակս:
Թէ մարդ մարդոյ չար առնէ. և
յորժամ որոգայթ է՝ ձգէ՝ և որսայ.

նա ինքըն սկսանի անկանի յորոգայթն. և չար մարդն սկսանի գայ չարի. ոմ ասէ Դաւիթ. փորեցին առաջի իմ խորխորատ՝ և անկան ինքեանք 'ի նոյն: Եւ ասէ, բարի արա, և չար չի մնար: Ոմն ասէ առակօքն. թէ արդարն յորոգայթ փրծանի. և փոխանակ նր մատնի ամբարիշտն: Եւ թէ որ մարդոյ ամօթն ծածկէ. նա Ք՟ս իւրն սկսանի ծածկէ՝ ոմ որդի Թադէոսին. բազում բարութե ուեր արար Ք՟ս: Եւ հրամայէ աւետարանն մի դատէք, և ոչ դատիցիք. մի պատժէք, և ոչ պատժիցիք. և այլն:

Ոսր պատանի մի աղօթարար՝ որ զամ աղօթս իւր առէնին կատարէր. և այլ բազում աղօթս առանձին կատարէր, և մատուցանէր Ք՟ս: Եւ սատանայ կամեցաւ զմանուկն զայն 'ի փորձանս ձգել. և յարոյց զկախարդ մի, որ սաւց 'ի ՃԻԶ

պատանին, թէ եկ՚ ի տուն իմ. և զոր
ինչ խնդրեսցեսն, տաց քեզ: Եւ
նա գնաց անմեղութ՟ զհետ կախար
դին: Եւ կախարդն տարեալ զնա՚ ի
տուն իւր՝ և փակեաց զդուռն իւր.
և եմոյծ զնա այլ ներքագոյն տուն.
և ասաց ցպատանին՝ դու կացիր
աստ՝ մինչև ես եկից՝ և նա եկաց անդ.
Եւ կախարդն ելեալ գնաց՝ և յու
շացաւ մինչև ցերեկոյ. իսկ պատա
նին աղօթելոյ ոչ դադարէր: Եւ յոր
ժամ եկն կախարդն, և գիշերի ուն
խաղաղեալ էր: և բերեր երկու ձի.
և ասաց՝ ՚ի մի՛կն դու հեծիր. և՚ ի
միւսն ես: Հեծան, և գնացին. և պա
տանին ոչ գիտէր թէ ուր տանէր
զինքն: Եւ գնացին ընհուն դաշտ
մի. և դաշտն լի էր եթէ օձայգուղք:
Եւ կայր ՚ի մէջ դաշտին սեաւ բլուր
մի, և ի վ՟ր սեաւ բլրին չարտախ մի՝
՚ի սեաւ չրտախին կայր սեաւ թախտ
մի. և ի վերայ սեաւ թախտին կայր
սեաւ թագաւոր մի բազմեալ: Եւ
գնաց

գնաց կախարդն առ սեաւ թագաւ-
որն. և ասաց՝ այն սեաւ թագաւորն
ցկախարդն. Ո՞վ է իմ չարադատ
մշակ՝ այսօր ինչ ես արարեալ՝ և կամ
ինչ ես վաստակեալ: Նա ասէ կա-
խարդն. թէ զայս պատանիս բերի՝
որ երկիրպագանէ քեզ: Եւ թա-
գաւորն ասաց ընդ պատանին. ո՛վ
պատանի. թէ երկրպագես ինձ,
զքեզ հազարապետ կարգեմ զօ-
րաց իմոց: Յայնժամ աղօթքն ՚ի
միտն անկաւ՝ զի մօտէր առաւօտն:
Յայնժամ ասաց պատանին, թէ
ես սովորեմ այսմ ժամու երկիր պա-
գանել Ք͞ի՝ որ խաչեցաւ վ͞ս մեր՝
և ազատեաց զհօգիս մեր ՚ի դժո-
խոց՝ և ՚ի ձեռաց սատանայի: Նա ան-
կեալ երկիրպագ ը͞ն արևելս՝ և օրհ-
նեաց զԱ͞ծ: Յայնժամ եղև ձայթ-
մունք, որոտմունք ահագինք. և պա-
տանին յուշաթափեալ անդ. և յոր-
ժամ յուշաբերեալ՝ ել ի վեր՝ և ոչ ին-
չ ետես բայց զինքն ի մէջ անհուն

դաշտին. և հրեշտակն եկեալ եցոյց զՃանապարհն՝ և գնաց՚ի շէնն. և պատմեաց զեղեալ գործսն: Յայնժամ լուեալ Թագաւորին. և տարաւ զպատանին առ ինքն՝ և ասէ: Ո՛վ բարի պատանի, ես յերուսաղէմ պիտի գնամ, եկ տանիմ զքեզ ընդ իս՝ որ երկիրպագանես Ք՟ի, և նր՟ գերեզմանին. և ամ՟ տնօրինական տեղեացն Ք՟ի Ա՟յ մերոյ: Եւ գնացեալ Թագաւորին՝ էառ զպատանին ՚ի հետ. և յորժամ երկիր պագեաց Ք՟ի և ամ՟ տնօրինականացն. և յորժամ գնացին երկիր պագանել ինքն և Թագաւորն. Ք՟ի պատկերն խօսեցաւ, և ասաց. ո՛վ պատանի ՚ի միւս անգամ գալըստեան իմոյ. քեզ բեւր հազարաց Տ՟ր առնեմ. փոխանակ այնորիկ որ առաջի զօրացն դիւաց ինձ երկրպագեցեր անահ. և զիս Ա՟ծ դաւանեցեր և հաւատացեր: Ցուցանէ առակս. Թէ Ա՟ծ զաղօթ ասէրն յամ՟ չարեաց փրկէ

փրկէ և յա֊մ փորձանաց դևաց. և յանկեանքն փոխարէն հատուցանէ։ Այդ հրամայէ աւետարանն Քի. Թէ ընդ միոյ երեսուն. և ընդ միոյ վաթսուն. և ընդ միոյ հարիւր. որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։

Աղուեսն և արծուին եղեն եղբարք. և միաբանութիւն արարին, և զերդումն և դաշինս եդին. որ զորսն 'ի մի տեղ բերեն և ուտեն. Ու յորժամ աղուեսն որսայր՝ գնայր արծուին և իմէկ տեղ ուտէին. Ու յորժամ որսայր արծուին առնոյր զորսն, և երթայր նստէր 'ի բարձր վէմս. և աղուեսն ոչ կարէր ելանել անդ։ Ու գխտաց աղուեսն զնենգութիւն արծուոյն. և տաէ՝ ով եղբայր, նենգաւոր և ադաւհ երևիս, և աւազակ։ Ցուցանէ առակս։ Ով է մարդ հետ ընկերոջ ծուռ լինի. նմանէ գողոյ և Ճիէ

աւազակաց. և յուդայն, և մեր դատապարտի:

ՃԻԲ Այր մի ցանեալ էր յընկզի ծառի տակն պարտէզ մի ձմերուկ. և 'ի ժամ պտղոյն եկն եռես ձմերուկն մեծամեծ. և հայեցաւ 'ի ծառն՝ եռես զընկուզն մանրագոյն: և ասաց. Տ՟ր Ա՟Ծ, զի՞մ զործինչ առեղծեր՝ 'ի կարգի է և նմանաւոր. բայց այս երկու պտուղս աննդէպ է և աննման: Նոյն այրն պառկեալ կայր 'ի ծառին տակն՝ և 'ի վեր հայէր. և հրամանաւն Ա՟Յ ոստեաւ ընկուզմ՝ 'ի ծառէն. և կարի խստա դիպաւ 'ի ճակատն, և պատառեցաւ և ելարիւն: Նոյն այրն ելեալ աղաղակէր առ Ա՟Ծ, և ասէր. Տ՟ր Ա՟Ծ, զի՞մ զործինչ առեղծեր 'ի կարգի է և նմանաւոր. և ովզըք.քոյ առեղծուածոյն բան ասէ. Նա ճակատն քան զխմս պխտոն լինի. և թէ ձմերուկ էր ընկուզն՝ զխս պխտոն սպանանէր:

Եւ այրն ասաց. Թէ ձմերուկն սպի
տա՛կ ընկուզի տեղն. և ընկուզն 'ի
ձմերուկին Թուփն: Ցուցանէ
առակս: Ս.է ա͞մ մարդ ասէ՝ զա͞մ
զոր արար Ա͞ծ բարի է՝ և ամենևին
նմանաւոր. և մարդն ոչ գիտէ որ
Ա͞յ ստեղծուածոյն բան ասէ՝ և
ոչ հաւանի. և ոչ ասէ, խոտանէ և
գէշ. վա՛յ ինձ վա՛յ:

Այր մի զիւր ժամանակն 'ի մեղս ՃԽԹ
էր. և ազգի ազգի չարեօք լը
ցեալ. և բնաւ ոչ հիւանդացաւ:
Եւ յաւուր միում գնաց ննջեաց ընդ
հոմանեաւ եկեղեցւոյ միոյ՝ և եկն
'ի զղջումն՝ և եղեւ սկսաւ եկեղե
ցի չինել: Եւ յորժամ կատարեաց
զեկեղեցին, հիւանդացաւ զցաւ
մահուն. և ասաց այրն Տէր Ա͞ծ, այս
քանի ժամանակեր իմէջ մեղաց էի,
և իմէջ չարեաց՝ և ոչ հիւանդա
ցայ. և յորժամ զեկեղեցի չինե
ցի հիւանդացայ՝ և մեռանիմ. մի

Թէ եկեղեցի չլինելն անընդունելի է։ Եւ՝ ի նոյնժամն երևեալ պահապան հրեշտակն ասաց։ Թէ մի հակառակ լինէր. Ա՟ծ քեզ ողորմեցաւ. և քո զեկեղեցի չլինելն քան զամ՟ գործ լաւ համարեցաւ։ Ցուցանէ առակս։ Ով զղջանայ, և՝ ի մեղաց դառնայ. Ա՟ծ զմեղսն նո՟ր ոչ յիշէ. և Ա՟ծ կամի. որ մարդն բարի գործէ՝ և ապա մեռանի. զի իւրն արժանի լինիցի. զի Ա՟ծ ողորմած է։

ՃԼ Եկեղեցին պարծեցաւ՝ ի մէջ իւր՝ և ասաց թէ եմ տաճար և տուն Ա՟յ։ Եւ յիս գան քահանայք և ժողովուրդք, և աղօթեն. և մատուցանեն զպատարագ՝ և հաշտի Ա՟ծ ընդ աշխարհի՝ և մեղաց թողութ՟ի լինի։ Յայնժամ գայ ջաղացն, և ասէ ցեկեղեցին. թէ զինչ ասես ճշմարիտ և արդար է. բայց դու զիմ երախտիքն մի մոռանար. որ

գիշեր

գիշեր և ցերեկ աշխատիմ, և դա
տիմ, որուտեն քահանայք և ժողո
վուրդք՝ և ապա գան առ քեզ աղօ
թեն, և երկիր պագանեն Ա̃Ծ:
Ցուցանէ առակս: Աւէ կան աշ
խարհի մարդիկք, որք հնապազ
դատին, և աշխատին ոպ̃ մեղու.
թագաւորք, և իշխանք, և քահա
նայք, և ժողովուրդք, և ապա
մարդիկք ուտեն զվաստակս, և
ապա երթան յեկեղեցին, և յիշեն
զԱ̃Ծ, և օրհնեն:

Եզն և ձին խօսեցան ընդ միմեանս. Ձ̃լա
և ասաց ձին ընդ եզն. Թէ դու
ով ես: և կամ զինչ պէտք ես: Ես
ձի եմ՝ որ թագաւորք՝ և իշխանք՝
և պարոնայք կազմեն զիս ոսկի զար
դով՝ և բազմին ի վ̃ր իմ: Եւ ասաց
եզն թէ ամէն աշխարհի պարծանք
ես եմ՝ որ վաստակիմ, և չարչարիմ.
և խոնջիմ. և ապա դու և թագաւ
որդ և ա̃մ ժողովուրդն ուտէք ըզ

վաստակն իմ. եթէ իմ վաստակն ոչ լինի. դու և քո թագաւորն մեկ հետ մեռանիք. և դու երախտամոռաց եղլինիս: Յուցանէ առակս: Թէ մարդ կայ՝ որ աշխատի քան զերն. և կայ մարդ որ համապաղ ձի հեծնու, աւերածէ աշխարհի. եթէ աշխատաւորն ոչ աշխատի ոմ̃ եղն. նա մեռանի ինքն և հեծնօղն:

ՃԼԸ Ինասուն մի բեռնակիր բարձեալ ունէր յինքն մեկ հակն մահադեղ. և մեկն սուսեր սպանման. և գնացեալ դէմ էառ 'ի նեղ տեղաց մի 'ի Ճանապարհին, և ոչ կարէր անցանել: Նոյորժամ նեղեաց զինքն՝ 'ի մեկ դիհէն սուսերն խոցեց՝ և մեկ դիհէն մահադեղն հեղաւ՝ և սպան զնա: Յուցանէ առակս: Թէ բեռնակիր մարդս. որ պիտի բարենքաւնայ համապաղ 'ի յողն իւր. և մարդն յիմարեալ է 'ի ձեռն սա

տա

տանայն· և փոխանակ բարւոյն
մեղք բարձեալ 'ի յողն իւր՝ որպէս
սուր և մահադեղ նմա:

ՃԼԳ

Խլուրդն բնութիւն ունի՝ որ հա
նապազ զբոյնն ոչ գտանէ՛ և ըզ
գետանի հողն խլ՟րտայ՝ և 'ի մէկ տեղ
ոչ դադարի: Նաւն թէ ինքն դէշ
հոտ ունի, և ինքն իւր հոտոյն տե
ղեաց 'ի տեղի փոխի· զի գիտէ թէ
հոտն 'ի տեղեացն է՝ աստ և անդ
հողն 'ի վերտայ· և դէշ հոտն յինքն
է: Ցուցանէ առակս: Ուէ կան
մարդիք յաշխարհի՝ որ միշտ և հա
նապազ տեղեաց 'ի տեղի փոխին՝ զի
անհանգիստ են· և գիշահոտ յան
հանգստութեն: Դարձեալ ցու
ցանէ· որ բնութիւն բարի է գործքն
չար մարդոյ· նմա անդէպ թուի
և սուտ զնա մահու չափ՝ և անհան
գիստ պահէ իւր ըչարին ոչ խայտ
առակին:

Այն

ՃԼԴ Կենդանի մի կայ 'ի ծովն խիստ
անոխակալ և անմիտ. և խոտ
արածի՝ և մէկ եղջիւր կայ 'ի ճա
կատն. և ծայրն 'ի վայր է. և խաչան
ման եղջերովն երթայ զծովն խառ
նէ՝ և ջուրն քաղցրանայ. և ըմպէ
նոքն, և զինչ՝ որ անդ կենդանիք
նմա հայեն, որ երթայ 'ի ծովն և
խառնէ զջուրն՝ զի նոքեանք ըմպես
ցեն։ Ցուցանէ առակս։ Եւ ամ
մարդ չարութիւն ոչ ունի յ[illegible] որ
ոյն կենդանին. և բարի մարդիք
վարդապետք են, և ճգնաւորք. և
ընտրեալք մարգարէք են, որք չունին
զչարութիւն. և նոքա կարօղեն. զդառն
քաղցրացուցանել՝ զչարն 'ի բարի
դարձուցանել։

ՃԼԵ Իշուն բնութիւն և սահման է. որ 'ի
դժոխարին տեղ ընկնի կամ շա
ղախրի. այլ այն տեղովն չի գնար՝
խմէջ կենդանեաց և անասնոցն. քան
զի շնչն յիմար ոչ կայ. և արասն 'ի
շուն

շուն յիմար ասէ. և մարդ մարդոյ ասէ քան զէշ յիմարեա։ Ցուցանէ առակս։ Ո մարդն որ փորձեալ ես մէկ հետ. նա՝ այն է զոր տեսեալ ես. և մարդն խլ̃ խուր բանին հարկաւոր պիտիկենայ. և զայն բանն որ փորձեալ է մէկ հետ նա այլ անձն ոչ առնու. և թէ առնու նա. քան զէշն յիմար է՝ և այլ ան գէտ է։

Այր մի՝ և ունէր կին միանղգամ. ձլգ
օր մի լռ̃առ յիմաստնոց՝ թէ աղէկութին արա՝ 'ի ծովն ձգէ՝ և վասն մի մնար. և այրն սովորութին և սահմանք արար խուրն. որ ամէն օր մէկ հաց տանէր և ձգէր 'ի ծովն. և մէկ ծովային գայր և առնոյր ըզ՝ հացն՝ և տանէր թագաւորին. զայս աւուր միում ասաց ծովայինաց թագաւորն. թէ զայն մարդն բերէք՝ որ զհացն 'ի ծովն արկանէ. որ ես զխուր աղէկն առնեմ. և այն ծովայինն զհացն տանէր թագաւոր

գաւորին․ Եւ յայն տեղին որ ըղ-
հայն ՚ի ծովն ձգեր։ Նոյնժամ
էարկ ՚ի ծովն՝ ձայնեաց թէ մի
գնար։ Եր թագաւորն ասաց թէ
յիս բերէք զայն մարդն՝ որ զխուրն
աղէկ առնեմ, և ես այն եմ որ ամէն
օր զհայն թագաւորին տանիմ, որ
ուտէ։ Նա խրատեաց զմարդն,
թէ ինչ որ տայ քեզ՝ մի առնուր․
և ասա, մէկհեղ բեր որ լեզու իմ
՚ի բերան քո հաստուցանեմ։ Նա ան
ցոյց զքօղ յերեսս մարդոյն․ և ա-
ռեալ գնաց առ թագաւորն։ Նա
թագաւորն ասաց՝ ով մարդ՝ ուզէ
զինչ կուզես՝ տամ քեզ․ և նա ա-
սաց՝ թէ բեր լեզուս ՚ի բերան քո
հաստուցանեմ։ Նա իբրև հասոյց
զլեզուն ՚ի բերանն յայնժամ ու-
տաւ ամ կենդանեաց լեզուս․ գա
զանաց, և թռչնոց։ Նոյնժամ ել
՚ի ծովէն, և գնաց պառկեցաւ ՚ի
վիմին տակն։ Նա եկեալ թռչուն մի
նստաւ ՚ի վ͞ր վիմին․ և ասէր, թէ
այս

այս մարդս ոչ գիտէ՝ զինչ կայ թա
ղած 'ի վիմին տակն։ Իսկ ասաց նմա
ծովային թագաւորն․ թէ բանդ-
մարդոյ մի ասեր․ թէ ասես չես ապ
րեր․ և զոր լուաւ 'ի թռչնոյն՝ ել և
էհան 'ի վիմի տակէն․ և տարաւ 'ի
տուն իւր։ Իսկ կինն խոշտանկեաց
զայրն իւր, թէ այս ուստի է․ և
նա երկնչէր 'ի մեռանելոյ՝ և ոչ
ասէր։ Իսկ յորժամ կարի տանջեաց
անզգամ կինն այն զայրն իւր թէ
ասա։ Յայնժամ մատաղ արար
մարդն, և հաղորդեցաւ․ զի եր-
ասէր մեռանէր։ Յայն գիշերն խօ
րօղն երեքանգամ ծափ էզարկ՝
խօսեցաւ։ Իսկ շունն հաջեաց, և
ասաց․ թէ ուրախութե՞ ծափտաս՝
և խօսես․ վաղն պիտի մեր տէրն
մեռանի․ և մեք անտէր մնամք։
Նա խօսողն ասաց՝ թէ ես ինչ առ-
նեմ թէ մեռանի՝ ես քառասուն
կին ունիմ, և իմ հուքին պահէ
զիմ։ Իսկ շունն ասաց թէ խիստ ան
զգամ

զգամ չար է՝ ասաց խօրօղն՝ թէ այդ-
բանդ հեշտ է. երբ լուսանայ, թող
երթայ 'ի չէառն և կորէ զքառա
սուն կաղնի ջալոտ։ Նաև ասէ ցկինն
իւր՝ թէ առեալ զպատանին. և կինն
յանձն էառ. և յորժամ զքառա
սուն կաղնի ջալոտ մանրեալ խլ ղքո՝
առաջ դնենաս զպատանւոյն. և յոր
ժամ կարի զօրութեբ էհար զկինն
մէկ անգամ. ասաց կինն թէ ինձ ոչ
պիտի պատանին այն։ Նաև այրն ա-
սաց՝ խաղաղեաց՝ որ ուսուցանեմ
քեզ. և կինն երդուեալ էառ յանձն
թէ այլ ոչ հարցանէ զպատանին
թէ ուսանի է։ Ցուցանէ զառակս։
Թէ շատ մարդ կայ՝ որ զխորհ
ուրդն կնոջն ասէ. նա կինն զայր 'ի
գլուխ հանէ լայ։ Նաև պարտէ մար
դոյն որ զնամ բարուեանէ կնոջն.
զի մի մարդին են. բայց զխորհ
ուրդն ոչ յայտնէ այսպիսւոյն։

Էր այր մի, և ունէր կարի սիրուն
սիրելի մի։ և գնաց այրն այն 'ի
գինարբուսն 'ի մաճլիս. և սիրե-
լին անդ ոչ էր։ Եւ իբրև խորին գի-
շեր եղև. յիշեաց զսիրելին իւր՝ և
գնաց առ սիրելին 'ի մէճլիսն. և
սիրելին մեծարեաց զնա. և նստոյց
առ ինքն. և անդ քառասուն մարդ
կայր՝ և ամէնն գաւաթ եառուն. և
սիրելին ոչ ետ՝ զի խմած գինով էր։
և խնայեաց 'ի նա։ Եւ յորժամ ան-
կաւ 'ի գինւոյն առեալ զնա 'ի շալ-
ակն տարաւ 'ի տուն իւր։ Եւ ասաց,
դու ովես որ տանիս զիս՝ և նա ասաց,
ոչ ճանաչես զիս եղբայր, և յայնժամ
գիտաց՝ որ սիրելին էր։ և ասաց թէ
ամենեքեան ինձ գաւաթ եառուն.
և դու ոչ։ Տայր իւր գլխոյն, և ծե-
ծեաց զնա մինչև 'ի տուն. և սիրե-
լին ոչ եթող զնա. մինչև պառկե-
ցոյց զնա՝ և անկողնով ծածկեաց։
Եւ երբ լուսացաւ. խմացաւ զե-
զեալն՝ և ամաչէր։ Եւ ասաց կնոջն

զենէք զզուարակն՝ և բերէք զմեր սիրելին՝ և պատուեմք ։ Ցուցանէ առակս ։ Մարդ մէկ հետ՝ կամ երկու՝ կամ երեք · զսիրելւոյ ձաւլին վերցնէ · նա յետոյն խայր պիտի լինի ։ Իսկ յորժամ գնաց սիրելին՝ թէ 'ի տունն մեծարէ զմիւս սիրելին, անկաւ յոտսն՝ և ասէ ։ ով եղբայր, մի մեղադրեր ինձ ։ Իսկ միւս սիրելին ասէ · ով եղբայր, համբերելով լինի՝ որ չարն 'ի բարի դառնայ · և լինի զուարակն պարարակ ։

ՃԸ Նունենին ասէր ընդ ձիթենին՝ թէ ես կարմիր նուռն ունիմ · և աղէկ եմ քան զքեզ ։ և ձիթենին ասէր ընդ նունենին · թէ ես պտղատու եմ՝ և ձէթ շնորհեմ լուսատու մարդկան · Ցուցանէ նունենին զթագաւորն · և ձիթենին զքահանայն · քանզի թէպէտ և գեղեցիկ է թագաւորն · այլ ոչ աժէ 'ի քահանայն, քահանայն աժէ 'ի թագաւորն ։

տըն ։ զի քահանայն հալածիչ է խաւարին՝ որ հալածէ զխաւարն 'ի հոգւոց մարդկան ։

Ձուկն յորժամ 'ի ջրոյն 'ի դուրս ելանէ՝ նա մեռանի ։ Ցուցանէ ։ Թէ մարդն որ 'ի պատուիրանացն Այ 'ի դուրս ելանէ, նա մեռանի հոգին ․ և յետ մահուն հոգին և մարմինն տանջի ։ Ճլթ

Ձուկն յորժամ 'ի կեռն գայ և առնու ․ նա մեռանի իձեռն կարթին ։ Ցուցանէ ։ Յորժամ մարդն 'ի մեղքն երթայ և գործէ, նա մեռանի իձեռն սատանայի ․ ոպ մեռանի ձուկն իձեռն կարթին ։ Ճխ

'Ի մատտաւէր ոմն աղքատ ունէր ծոյլ որդիս՝ և 'ի ժամ մահուն կոչեաց զորդիսն ․ և ասէ ։ Ով որդեակք ․ բազում գանձ կայ պահեալ 'ի հարցն իմոց յայգին մեր ․ իսկ Ճխա

զտեղին ոչ ցուցանեմ ձեզ. այլ որ աշխատի, և խորագոյն փորէ, նա գտանէ զգանձն: Եւ յետ մահուան հօրն, սկսան որդիքն ջանալ մեծաւ աշխատութեամբ. և խորագոյն վարէին. և ամէն մէկ իւրն ջանայր զի ինքն գտցէ զգանձն: Եւ սկսաւ այգին աճիլ, և զօրանալ. և ետ բազում պտուղ. և ելից զնո գանձիւ: Ցուցանէ առակս: Թէ մեծ բարի է աշխատանքն. և շատ օգուտ է յոյս կեանքս, և յայն: Իսկ յոյլքն, ոչ աստ բարի ապրին. և ոչ անդ վայելեն, որպէս ասէ գիրն. յուլից, և ծուլից փակեալ է դուռն արքայութեան:

ՃԽԲ

Ասի յառակաց՝ Թէ այր մի զգայլն բռնեալ էր. և զոտներն կապեալ և ի վերայ իշուն բարձեալ տանէր 'ի տուն. և մարդիկք 'ի դէմ դիպեալ ասեն, թէ այդ ինչ է որ իշոյդ ես բարձեալ: Ասէ այրն. Թէ կու

տա

տանիմ՝ ի տուն՝ որ կթենուն իմ տղայ
ոյն բերանն թանայ ։ Յայնժամ
ասեն աքքն . ով տխմար, դա ղամէն
աշխարհիս կթան է հաստուցեալ
զայդ կթան կու տանիս ։

Ասի յառակաց՝ թէ գայլ մի եղա Ճխգ
նէր իվր՛ լերինն. եւ տես՝ ի սորոտ
լերինն դեհ մի ոչխարաց, եւ ասաց
խաղաղութին ընդ ձեզ. Իսկ
ծերագոյն խոյ մի յոչխարացն
ասէ ցընկերսն ։ եղբարք թէպէտ
խաղաղութիս աւետարանեն՝ ա-
պա դուք ամէն մէկ ձեզ ձար արա
րէք ։

Ասի յառակաց՝ թէ այր մի՛ զէշ Ճխդ
իւր կորուսեալ էր . եւ խնա
ղէտալի՝ ի շուրջ գայր, եւ խնդր
էր ։ Իսկ տեսեալ գայլուն ասէ՝
այր դու զինչ խնդրես ։ Ասէ այրն
ով գայլ զիմ իշուկս կորուսեալ
եմ . եւ չեմ գտնուլ ։ Ասէ գայլն, ով

այր զքո էշն ես գտի։ Ասէ այրն՝ բեր զէշն՝ որ տամ զքո գտնելըն։ Ասէ գայլն, ով այրդու՝ զքո էշն ՚ի ջամուան էր անկեր. և ես երեք օր ՚ի հետն եմ դատել. և ապա կարացի ՚ի դուրս քարշել։ Ու ՚ի վարձին տեղն զէշն կերի. գիտէի որ աղքատ մարդ էիր. և ինձ վարձ չկարէիր տալ։

Ճխե Ասի յառակաց։ թէ այրի մին ունէր տասն այծս։ և ունէր որդեակ մի. և որդին այն յամէն օր տանէր արածէր զայծերն։ Ու մայրն յամէն օր շէրեփ մի ջուր լնոյր ՚ի կաթն. և ՚ի խափ տայր։ և ասէ որդին ցմայրն իւր. թէ էր առնես զայդ վնասդ, որ զջուրն ՚ի կաթն լնուս. և ՚ի խափ տաս։ Ասէ մայրն՝ որդի մեր կաթնա քիչ է՝ այնոր համար առնեմ թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն. որ մեզ ձմուանս թացան լինի։ Իսկ յաւուր միում

մինչ

մինչ դեռ արածէր մանուկն զայծ-
սն։ փոքր մի ամպ ծնաւ յերկինքն,
և եկն անձրև. և եղև հեղեղ՝ և տարեալ
զայծիկն ելից 'ի գետն. Իսկ մա-
նուկն եկն յարևու առ մայրն դա-
տարկութբ. և միայն փայտն 'ի
ձեռին։ Ասէ մայրն, որդի ուր են
այծքն. և զի՞արդ յարևու եկիր
այսօր։ Ասէ որդին, մայրիկ իմ.
այն չերեփ ջուրն, զոր 'ի կաթն
խառնէիր, և 'ի խաւալ տայիր. նա
ժողովեցաւ, և հեղեղ դարձաւ.
և եկեալ զմեր այծերն տարաւ 'ի
գետն ելից։ Ցուցանէ առակս թե
Ա՟յ դատաստանն արդար է. որ
թէպէտ զկատարեալ հատուցումն
զրկողացն 'ի հանդերձեալն պահե-
ռունէ, նա զճաշնին 'ի յայս կեանքս
կու հատուցանէ։ Որ տեսեալ
մարդկան հաւատան՝ թէ գոյ հա-
տուցումն 'ի հանդերձեալ դատաս-
տանին՝ և առցէ իւրաքանչիւր ոք
ըստ գործոց իւրոց։

Ճխզ Ասի յառակաց թէ 'ի Բաղդատ
քաղաքն՝ Հրեա մի Ճարտար ար
ուեստիւ. երեք ամ աշխատեալ.
և 'ի յամբրաւն կտէն սեղան մի
յիրեար ձգեալ զանազան յօրի
նուածովք՝ որ ոչ էր տեսեալ ակն
մարդոյ այնպիսի ինչ: Նու տարեալ
թագաւորին քաղաքին այնորիկ. կար
ծէր թէ քաղաք՝ կամ գիւղ՝ կամ
այլինչ պարգև տացէ նմա: Իսկ
նր տեսեալ զարմացաւ. և ուրա
խացեալ ետ նմա հազար սպիտակ՝
ևնր առեալ զսպիտակն. և ելեալ
արտաքոյ դրանն նստաւ տրտում:
Նու կամէր ելեա առ թագաւորն
• յուղարկել. և մինչդեռ տրտում
նստեալ էր 'ի դրանն. եկն այր
մի, և ունէր 'ի ձեռին խուրում սա
լայով մի փարդ. և տեսեալ զհրեան
տրտում: Ն: Հարց, թէ այր դու՝
ընդէր ես տրտում, և զինչ պատ
ճառն քո: Նայն ժամ ասաց. թէ
երեք տարի է՝ որ 'ի յամբրաւն
կտէն

կոտեն չարչարանօք զանդամն մի չի
նեցի, որ 'ի Հազար Հիւսէն մէկն
չկարէ շինել այնպէս: Աբերի Թա
գաւորին՝ Թէ ինձ գիւղ կամքաղաք
մի տայ. Նա զայս Հազար դրամն
ետ. կուզեմ որ յետուղարկեմ:
Եւ այրն որ զալքայոյն վարդ ունէր.
ասէ ցհիւանն՝ դու ըղորդ ես. այս
Թագաւորս զինէշաքարի Հարկիսն
չգիտէ: Ես այլ փէշքաշար եմ. և
այսչափ տարի է յայս դուռնս կու
գամ, նա ինձ ինչմի չէ տուեալ: Եւ
ասէ Հիւանն ցվարդաբերն՝ դու ինչ
արուեստ գիտես. և նա ասէ՝ Թէ
զայս սալայս ես կու զուգեմ: Իսկ
Հիւսանն Հանեալ զուրագն 'ի գօ
տւոյն՝ եգիծ միոյ դիՀաց մուրու
ացն սալազուգին, որբեաց մինչև
'ի վայր ոտից մաքրչով: Եւ Նորա
մնեալ առ Թագաւորն այնպէս
խախաբ դինօք՝ տարաւ զվարդն:
Ասէ Թագաւորն, ով այր դու, ըն
դէր այդպէս խայտառակ երեսօք

եկեալ էր առ իս։ Եւ նա ասէ, ով թա-
գաւոր՝ այր մի ՚ի գրանս տեսի տրտ-
ում նստեալ։ և հարցի՝ թէ վ՞նէր
ես տրտում։ Նա ասաց՝ թէ երեք
տարի է՝ որ աշխատանօք ՚ի յամէ-
րաւի կտէն սեղան մի շինեցի, և բե-
րի թագաւորին՝ թէ ինձ գիւղ կամ
քաղաք տայ. Նա զայս հազար ալե-
տակս ետ. այնոր համար եմ վիր-
աւոր. և կուզեմ որ յետ ուղարկեմ։
Ես ասացի՝ թէ ես այլ փեշաքար
եմ թագաւորին. և թագաւորն ոչ
ինչ փեշաքարի հարկեր չգիտէ։
Եւ էհարց՝ թէ զինչ փեշաշ գիտես։
ասացի թէ սալա և քթոց կու զու-
գեմ, նա զուրագն քաշեաց ՚ի գօտ-
ւոյն. զմէկ դեհի մորուսս այսպէս
՚ի վայր էհատ։ Եւ առ ժամայն
կոչ եաց զհիւսն, և ասէ։ Ո՞րդ-
արև դու արարեր ուրագով զայս
մարդոյ մորուսն. և նա ասէ այո և
ասէ թագաւորն՝ թէ երդուեր ՚ի
գլխուս իմ, որ զմիւս դեհի մուրու-
այն

այն այլ ածցես նոյնպէս ուրագովն որ ես տեսանեմ։ Լուեդեալ հիւսանն զուրագն իլր միւս դեհի եր եսացն էած, սրբեաց նոյնպէս։ Լսէ Թագաւորն, թէ նստեալ դրեցէք զգիւղն յորում ննջեն կայ ննջեանն մուլք՝ յազգաց յազգս։ այնպէս արարեալ է առ զգիրն, և դարձաւ 'ի տունն իւր։ Յուցանէ առակս։ Ասէ ոմ̃ տատեղք զարեգականն գեղեցկութի փառաւոր ցուցանեն այսպէս և փանաքն արուեստք զապտկանութի մեծամեծ արուեստացն յայտնի առնեն զարուեստս իւրեանց։

Ճիւ

Սին յառակաց՝ թէ այծ մի իվերայ բարձր պատին կայր նստած։ և գայլ մի եկն նստաւ յատակս պատին։ Հայեցեալ ընդ նա այծն ասէ՝ սիրաս կուղէ որ իջնում 'ի վայր. և եղջերովս զայն գայլն փորն պատառեմ, Յայնժամ ասէ գայլն,

երա

երանի էր իմ աչացս՝ որ տեսանէի թէ այծն գայր եղջերովն, զիմ փորն պատառէր։ Յուցանէ առակս։ Թէ անխմաստ մարդն տեսանէ զինքն, կարծէ յաղթող գոլ մեծամեծաց՝ յաղթեալ 'ի ձեռս նց անկանի, յայնժամ երևի տկարութի նորա։

Ջուր

Ասի յառակաց՝ թէ կին մարդոյն. երեք երեսի ջուր կայ. մէկ կուսութե քօղն՝ որ յառաջ քան զամուսնանալն 'ի մօրէն ունի, և 'ի ժամանակ ամուսնութենն քակի. զի յետ այնորիկ, ոչ ասի աղջիկ որ է կուսան, որ է հատեալ։ Երկու երեսի ջուր կնոջն, որ մինչ դեռ զաւակ չէ ծնեալ. և յորժամ ծնանի զառաջին զաւակն լուծանի կապ ծննդականութե. և արձակեալ յառաջ բերէ զմանուկն. որով յայտնի հրապարակաւ 'ի լոյս ամենեցուն, թէ այս անուն նորա

հարսն

հարսն զաւակ ծնաւ։ Եւ նա այնուհետեւ տասանց ամօթոյ առեալ զմանուկն 'ի գիրկ. եւ ելեալ նստի 'ի հրապարակս, եւ բացեալ զսիրան, եւ զստինսն ջամբէ մանկանն, եւ ո՛չ ամաչէ։ Երեք երեսի ջուր է կնոջն, քանի է առաջին մարդոյն իջեւն դսակին կապեալ. եւ յորժամ հան դիպի, զի ելցէ յառաջին յառնէն. եւ լինի առն այլում. յայնժամ երեք կերպ երեսի ջուրն՝ որ է ամօթն բարձաւ յայնպիսի կնոջէն։ Եւ յայնմ հետէ, զի այլ ոչ ունի երեսի ջուր ոչ ամաչէ յումեքէ. այլ զորինչ կամի, եւ կարէ՝ անարգելաբար գործէ. վա̃ որոյ 'ի շունն կայ արգելք, կամ ամօթ՝ եւ յայնպիսի կինն ոչ։ Ցուցանէ առակս Թէ բանականութե̃ արգելք 'ի մեզաց՝ ամօթն եւ երկիւղն է. ըստ այնմ, Թէ երկիւղիւ Ա̃ն խորշի ա̃մ ոք.

Ճխթ Պաւլ յառակաց. Թէ այր մի յամէն
տարի հարիւր մօթ հաց վաս
տակէր, և այնու զտուն իւր կա
ռավարէր։ Իսկ ի միում տարւոջ
ի հարիւրէն քսան պակաս հաց
եղև։ Նա անդադար հոգայր և կո
ծէր զինքն. Թէ այս չափ հացովս
ի նորին զեմրդ կարեմք ելանել։ Իսկ
Տէր յանդիմանել կամեցաւ զնա։ ա
ռաքեաց զհրեշտակ իւր. և ասաց
նմա։ Թէ արի, երկու մօթ հաց
բարձիր. և տար կնոջ մի այրւոյ
որ ունի դուստր մի միամօր։ Իսկ նա
բարձեալ դրաստուն տարաւ առ
այրի կինն՝ Թէ զհացս զայս Տէր առա
քեաց քեզ։ Իսկ սա է պառաւ կինն
ցդուստր իւր. արի, որդեակ՝ առ
զհացն զոր Տէր առաքեաց մեզ։ Իսկ
այլ ջինկն ասէ ցմայրն՝ Ճաշոյ հաց կե
րեալեմք. և երկու բլիթ այլ կայ ՚ի
սապատն որ երեկունն ունեմք. և
փառաւորեան Տէրն և պատրաստօղն
Տէր է։ և ասացին մայրն և դուստրն

ցայրն

ցայրն՝ որ զհացն էր բերեալ թէ ո՞ր
դի, տար զհացդ քո այլ ումեմն աղ
քատի՝ որ զաւուրս կերակուրն չու
նի այդ աւելորդ է մեզ. և այրն զար
մացաւ ընդ մեծահաւատութի
կանանցն այնոցիկ: Ինքն յամօթ
եղև՝ որ զութուուն մոլթ հացն ու
նէր. հոգայր, և ցաւէր, թէ՝ ի նորին
զիմորդ կարեմք եղանել: Ցուցա
նէ առակս: Մեք որք բազում ու
նիմ, և միշտ հոգամ. թէ զիմորդ
պիտի ապրիմք. յանդիմանեն յայն
ցայնէ, որք զաւուր կերակուրն
մոռանալով գտանեն. և միշտ
գոհանան զԱծ, և ոչ յուսահա
տին:

Մի յառակաց՝ թէ աղքատ էրէց ԺԾ
մի գնաց մօտ մաղագործն, թէ
ինձ սակաւ մի միս տուր՝ որ իմ տղայ
ոցն տանիմ, որ եփեն և ուտեն.
Իսկ մաղագործն ընդ կատակս հա
մարեալ, ետ նմա լիտր մի միս. և

ասաց

ասաց թէ իմ հօրն պատարագ արա։ Նոյն երիցուն ընդ արդարս համարեալ եհարց զնա. թէ քոյ հօր անունն ինչ է, և մնացորդն ասաց՝ թէ իմ հօր անունն Մկսար է՝ զոր ումանք սատուրի կոչեն։ և երթեալ երիցուն 'ի տուն իւր, և տարաւ զմին տղայոցն. և գնացեալ շինեաց զպատարագն. և յիշեաց զՄկսարն յանուանէ 'ի պատարագն։ Նոյն 'ի յաղթմանէն Ա՟Ծ մնացորդի կոչ՟ն արմատացաւ՝ և տիմ աւաստաղն խանութին պատուեալ բարձրացաւ։ Իսկ խանութապանն զարհուրեալ գնաց անկաւ յոտս քահանային. թէ զոլ յիշեցեր 'ի պատարագն։ և նա ասէ, զՄկսար անունն զոր դու ասացեր. թէ իմ հօր անունն Մկսար է։ Իսկ նորա զայս անսեալ աղաչեաց կրկին պատարագել և նկարելս զհայրն իւր յիշել։ Յուցանէ առակս։ Թէ մի խաբիք զի զօրութիւն Ա՟Ծ ո՛չ ար

համարձի, և ոչ տկարանայ այլ
յոյժ զօրաւոր և սքանչելագործ
է ԱԾ։

Ասէ յառակաց՝ թէ այք երկու
ընկերացեալք միմեանց. և աղ
քատակերպ 'ի շուրջ դային խնդ
երկրի. և զայն ստացեալ գործ
իւրեանց. և յաւուր միում եկին 'ի
քաղաք մի. և կամէին մտանել 'ի
նա։ Իւ եկեալ 'ի մին դուռն տես
ին, զի գլուխ մարդոյ կախեալ կայր
ընդ դուռն 'ի վայր. և ոչ կամեցան
մտանել։ Ասացին թէ գնամք ընդ
միւս դուռն մտանեմք, որ գլուխ չէ
կախած. և այնպէս զամ դրունս
քաղաքին 'ի շուրջեկեալ ոչ գտին
զդուռն՝ որ ոչ կայր մարդոյ գլուխ
կախած. և նաչարեալ մտին ընդ մին
դուռն 'ի ներս քաղաքին։ Իւ հար
ցեալ ընդ դռնապանն թէ ինչ
պատճառ է, որ ձեր քաղաքիս յամէն
դրունս մարդոյ գլուխ է կախած.

ճծա

և նոքա ասեն՝ թէ այդ գլխնիդ՝ ա-
մենն օտար և ղարիպ մարդկաց է։
Իսկ մինչ դեռ նոքա զպատճառն
հարցանէին. էհասհրաւիրակ՝ ի թա
գաւորէն որք զղարիպ մարդիկն
կոչէին. զայն երկու մարդն այլ տա
րան թէ թագաւորն կու կոչէ։ Իսկ
յորժամ գնացին, թագաւորն մեծ
արեաց զնս, և եդ առաջի նց սեղան
ամենալից. և պատուեաց զնս ան
ուշահամ գինւով։ Իսկ եղև կարի
միոյն՝ ի նոցանէ՝ և ել արտաքս վասն
կարեաց։ Յայնժամ ասէ թագա-
որն ցայն որ՝ ի տանն էր մօտ յինքն՝
թէ ախտաւ չէ որ.քոպխաւ հարկև որ
մարդն հետ այն պխաւ անբախտ մար
դոյն շրջի, և զքո լաւ անունդ մե
դորա վատ անուն առնել։ Յայն
ժամ ասէ այրն, ոչ այդպէս է ով
քարի թագաւոր, այլ այն ընկերն
իմ այնպիսի թագաւորի որդի է՝ որ
ձեզ վայելէ նորա հօր փառքն և
թագաւորութիւնն. և մն Ի՞Ճ սիրոյն
այն

այն ամենին թարկն տուեալ է. և աղքատի կերպ 'ի շուրջ կու գայ. և առժամայն եկն 'ի տուն այրն, որ 'ի դուրս էր: Ու ժամն կացին, եւ և միւսն 'ի դուրս 'ի պատճառս կարեաց: Ու դարձաւ թագաւորն ցայն որ 'ի մօտն էր, թէ կու թուի ինձ որ հարկևոր մարդոյ որդի ես՝ և թագաւորի զարմէ ես. ինչ պատեհ է՝ որ այդ ձմրի մարդդ հետ քեզ 'ի շուրջ գայ. և զքո հարկևոր տնունդ աւերէ: Իսկ նա ասէ ցթագաւորն. գիտեա, զի թէ թագաւորի որդի եմ, և թէ իշխանի. և կամ զինչևիցէ մարդոյ. իմ հօր տունն դորա հօր թափուն է չէն կացէր: և յԱծ 'ի վայր, մեղերախտաւոր դոցա ազգն է: Իսկ թագաւորն առժամայն ետ նոցա երկոցունցն մէկ ձի սարօքն հեծնելոյ. և մէկ քօթալ՝ և մէկ ծառայ. և շատ արծաթ, և ոսկի. և ոչ սպան զնոսա, այլ խաղաղութբ ուղևորեաց, որք

գնացին զՃանապարհն իւրեանց։
Իսկ իբրեւ հարցին ցթագաւորն,
թէ ընդէր զայլ զարիւպմն ապանա
նէ իւր՝ ասէ. վն զի այլ զարիւպ մարդ-
չգտայ՝ որ մեղեանց լաւ էին ասա-
ցեալ. վն այն սպանանէի զնս. և ըզ
որ մեղեանց լաւ առացին խրատեցի.
և հարկաւոր ուղղոյ դրէ։ Ցուցանէ
առակս։ Թէ որք զընկերս իւրեանց
առաջի օտարաց չարաբանեն.
Ինքեանք ընդ նմին պարտաւին, և
'ի պատուոյ. և 'ի գլխոյն եւս ելանեն։
Նա այնմ, Թէ որ արհամարհէ
զԻւրեօք՝ արհամարհի և ինքն 'ի
նմանէ. և որ զընկերն առաջի
օտարաց բարեբանէ. ինքն գտանէ
զշահն և զօգտութի, և ապա ըն-
կերն։

ՃԾԲ. Ասէ յառակսդ՝ Թէ այր մի խիստ
պարտականէր, և ոչինչ Ճարչու-
նէր ապատելոյ՝ և խիստ հոգայր,
և նեղեր 'ի պարտատերացն. և յաւ
ուր

ուր միաւմամբ միոմն 'ի պարտատե
րացն ցնա, եւ քեզ խրատ մի տամ,
որ յամենեցուն պարտուցն աղա
տխաւ. ապա զիմ պարտքն վճարէ. ասէ
ցնա պարտականն, Թէ Թող Ինձ
վկայ լինի. որ զքոյն վճարեմ՝ լուկ
ճարմի արա՝ որ զայլոց պարտսն
վճարեմ. ասէ խրատատուն, Թէ
ովլոր գայ 'ի քէն պարտք ուզէ,
դու տաս Թէ խամ, և այլ ոչինչ
մի ասեր։ Յայնժամ պխտի առնուն
զքեզ դատաւորի մօտն տանին.
դու առաջի դատաւորին այլ ոչ
ինչ մի ասեր՝ բայց միայն տաս Թէ
խամ։ Իսկ դատաւորն պխտի ասէ,
Թէ այդ մարդդ խեւէ և յիմար՝ յուժ
մէ կուզէք զպարտսն, Թողէք՝ որ
գնայ յուր բանն. և այնպէս պարտա
կանն աղատեցաւ 'ի պարտուցն։ Դու
եկեալ խրատատու պարտատէրն՝
ասէ ցպարտականն. այժմ որ աղա
տեցար իմ խրատովն. բեր զիմ պար
տսն տուր՝ նա նմանապէս և նմա

ասաց խամ։ Ոսկնի՞ առնել զնա գը-
նոց առ դատաւոր քաղաքին. և
սկսաւ դատաւորն հարցանել զնա՝
թէ այդ մարդ ասէ. թէ յիւում
կտոր լոճացած հաճախ պարտի
ինձ տալ։ Ոչ ինչ ասես, պարտիս թէ
ոչ՝ և նա սկսաւ քստ առաջնոյ պա-
տասխանւոյն և ասաց՝ թէ խամ։
Յայնժամ ասէ պարտատէրն ցնա՝
թէ լոճացած չկայ թող խամ լինի
լինդ քո բանիդ. և այնպիսի ճար-
տարութե՟ եաւ 'ի նմանէ զպար-
տսն։ Ցուցանէ։ Թէ անիրաւ-
ութի առնելն ոչ միայն 'ի հանդեր-
ձեալ դատաստանին պիտի խայ-
տառակի. և ուրացութին իւրոյ
հոգւոյն պարտք մնայ. և ամօթն
զոր մարդկան առաջի կրէ։

ճծգ Ասի յառակաց՝ թէ երկու այր մի-
մեանց յոյժ բարեկամք գնա-
ցեալ 'ի ճանապարհորդութի. և
մինն զէնեալ 'ի վաճառն. և միւսն
շահեալ

շահեալ փարթամ, դարձան և գայ
ին 'ի տունս իւրեանց՝ ևեկեալ մօ
տացան 'ի քաղաքն, ասէ աղքատ
ընկերն ցհարուստն թէ եղբայր.
շատ բարութիս. և սէր գիտեմ
'ի քէն, նա ամենեցուն գլուխն
այս է, զոր խնդրեմ 'ի քէն, և 'ի
վերբէ քան զամենն. պխտիր՝ որ ինձ
եղբայրութին առնես՝ հազար սպի
տակ փոխ տաս ինձ. որ այս տարի
զիմ տանն, և զիմ տղայոց պէտքն
լնում. և յայլ տարի յայս օրս զքո
դրամն վճարեմ. այնմ| հաշուեաց՝
թէ զիմ տղայսն 'ի գերութենէ
գնես քո հոգւոյդ համար: Իսկնր
լուեալ զայս պարզմտութե ետ հա
զար դրամն խղճալով աղքատութե
նր. և ելեալ 'ի տեղւոջէն գնացին
'ի տունս իւրեանց: Իւ իբրև լցաւ
տարէ գլուխն. երթեալ առօղ դրա
մին առ պարտականն, և ասէ. տարի
մի բոլոր եղև, հիմայ զիմ դրամն
տուր՝ որ իմ տանն, և իմ տղայոցն


'ի

'ի պէտս անցուցանեմ։ Խնդրեալ
տախտակի տուեալ ասէ․ ես քեզ
դրամ չպարտիմ, և յորժամ բռ-
նադատեաց՝ ասէ ցնա, եկ՝ որ եր
թամք 'ի դատաստան առ դատա-
ւորն։ Իսկ յորժամ եկին, ասէ դա
տաւորն ցերկուսն, զդրամն առեալ
ես թէ ոչ․ և ցումն թէ վկայ և գիր
ունիս։ Իսկ երբև գիտաց թէ
ոչ գիր կայ, և ոչ վկայ 'ի մէջն, ա-
սէ ցայրն որ զդրամն էր տուեալ․
Թէ յայն տեղն ուր ետուր զդրամն
'ի դայ՝ մարդ կայր 'ի մօտն,
գրաստ կայր, ձի կայր․ ասէ տու-
օղ դրամին, թէ ոչինչ չկայր 'ի
մօտ մեզ՝ 'ի վեր Ծ̃ծ էր, և 'ի վայր
մեք երկուքս։ Սա ողոքելով խնդ-
րեաց, և ես խղճացի նեղու․ այժմ
ուրանայ։ Ասէ դատաւորն, 'ի
յայն տեղն՝ ծառ կայր՝ թուփ կայր՝
քար կայր․ Ինչ տեղ էր այն տեղն։
Ասէ դրամի տէրն՝ ոչ ծառ կայր՝ և
ոչ թուփ՝ լոկ քարատակ մի է․

Նստաք

Նստաք անդ, համարեցի եւ ստու-
յինքն, եւ ելեալ եկաք իմիասին 'ի
քաղաքն՝ դա յիւր տունն, եւ ես
յիմ տունն: Բայց դատաւորն ցդրա-
մին տէրն՝ կարես զքարն զայն ըն-
րել՝ կամ կտորել 'ի յայն քարէն. եւ
նշան բերել: Իսկ նա 'ի դուրս վա-
զեալ 'ի դրամին կողմոյն՝ թէ գնամ
զայն քարն ընծօք բերեմ կամ կտո-
րեմ, եւ նշան բերեմ: Եւ յորժամ
գնաց նա, ասէ դատաւորն ցփուան՝
որ 'ի մօտն մնաց՝ թէ կարէ զնա շար-
ժել 'ի տեղեացն. կամ կարէ կտո-
րել, եւ նշան բերել. Ասէ՝ որ ուրա-
նայր զդրամն. թէ զհազար լուծք
լծէ՝ չկարէ զայն քարն շարժել
'ի տեղեացն. եւ թէ հազար քար
գործ բերէ՝ չկարէ կտորմի կտո-
րել՝ զի ապառաժ քար է: Յայն
ժամ դարձուցեալ զայրն 'ի յետս,
որ գնայր. եւ ասէ ցուրացող դրա-
մին, թէ գնա, եւ տուր զիւր դրամն
յինքն, զի դու եղեր վկայ՝ որ պար-

տիս․ և այնպէս յամօթեղեալ վճարեաց զպարտմն։ Ցուցանէ առակս, թէ դատաւորն այնպէս պարտէ լինել․ որ 'ի դատաստան առնելն, բանին ելք գտանէ․ որ զիրաւունսն Այ չթողու։ ըստ այնմ՝ որ ասէ սաղմոսն․ որ հանճարեղն իցէ, զառաջնորդութին։

ՃԾԴ Ասի յառակաց՝ թէ միակեց մի ստտանայի ուխտ էր․ որ տարի մի 'ի պահս կենայ․ թէ զնա 'ի մեծութին հասուցանէ․ սատանայ յանձնէառ կատարել զխնդրուածս նր։ յորժամ վճարեաց զպահսն շարժեաց զեպիսկոպոս քաղաքին․ որ էր զնա եկեղեցպան․ և 'ի միւս տարւոյն շարժեաց՝ որ օրհնց զնա աբեղայ․ և 'ի միւս տարւոյն եղև մեռանիլ եպիսկոպոսին՝ շարժեաց զթագրն, և զքաղաքացիսն․ առնել իւրեանց եպիսկոպոս։ Եւ յորժամ կամէր զգեստաւորիլ՝ զի ժամ

արաս

արասցէ. եկն սատանայ՝ եւ 'ի նա փո
քրիկ չորեքքաղի մի, եւ ասէ. իմա-
մէն լաւին փոխարէն. որ զքեզ յայտ-
մեծագոյն աստիճանդ հասուցի,
զայս արա. առ զայդ փոքրիկ չորեք
աղիդ 'ի ծոցդ դիր. եւ զգեստդ-
իվ͞ր հագիր: Եւ յորժամ 'ի բեմն
ելանես. նա մէկ մատամբդ իվերայ
մէկ լարին զարկ. եւ այնպ͞էս արա
րեալ՝ պատրեալ եպիսկոպոսին. յան
կարծակի հազարք հազարաց, եւ
բիւրք բիւրոց սատանաղի, եւ թմբկի,
եւ սուռնայի, եւ չանկի, եւ չորեքաղւոյ
ձայն հնչեաց՝ ի մէջ եկեղեցւոյն.
Օ արհուրեցան Թագաւորն եւ ժո
ղովուրդն՝ եւ ոչ զոք տեսանէին հար
կանօղ նուագարանացն: Հրամայ
եաց Թագաւորն բռնել զդուռն ե-
կեղեցւոյն՝ եւ զխուրաքանչիւրոք մեր
կացուցանել եւ փնդռել. եւ այն
պէս արարեալ ոչ զոք գտին պատ
ճառ: Եւ մնաց Թագաւորն եւ եպիս
կոպոսն միայն. Թագ͞ն եւս մերկա
ցաւ.

ցաւ․ և ո՛չ գտաւ առնա ինչ։ Եւ յոր ժամ մերկացուցին զեպիսկոպոսն․ գտին 'ի ծոցն զչորեքքաղին այն։ Եւ 'ի չարչարանս արկեալ խոստովան եղև զուրացութիւն, և զգաշինս զոր եդեալ էր ընդ սատանայի։ Յայն ժամ կապեցին զնա 'ի յագի ամեհի ձիոյ՝ և թողին 'ի դաշտի․ մանր բանմանաբար կոտորեալ եղև մարմին նորա․ և այնպէս աւանդեաց զդառնացեալ հոգին 'ի ձեռն սատանայի։ Ցուցանէ առակս․ Թէ ովք սատանայի բարուոյն, և ուխտին հաւատայ՝ բաժին նր վերջն այնպէս լինելոց է։

ՃԾԵ Ասի յառակաց՝ թէ կայ կենդանի մի՝ որ լուծանայ զորովայնն․ և երթայ ննջէ 'ի ծերպս վիմաց մինչև 'ի մուտ գարնանային ժամանակաց․ և թէ սակաւ կերակուր մնայ ներսի և սպանանէ զինքն։ Ցուցանէ առակս։ Թէ մարդ որ թէ սակաւ

մեղք մնայ առ քեզ առանց խոս
տովանութե, և ապաշխարութե.
և ընդ քեզ իջանէ 'ի գերեզմանն
նա յօրն վերջին 'ի հուրն առաքէ
զքեզ՝ և տանջէ։

Ասի յառակաց՝ թէ ժողովեցան ճծզ
թռչունքն. և ընտրեցին, և ե
դին զարտուտն. և օծին իւրեանց
թագաւոր՝ զի չէ գիշակեր. և է
արթուն և սաղմոսասաց։ Եւ սկսան
'ի գնալ. և գան 'ի գեղջ միոյ առհ
ման՝ և մանկունքն եդեալէին որոյ
գայթս վն ձագուց. և արտուտն
յանց կացեալ. և էառ զհատ ցորե
նոյն. և բախտն անկաւ 'ի պարա
նոցն, և անշնչացաւ։ Եւ եկեալ
զօրքն՝ հանին զբախտն, և ասեն.
ով բարի թագաւոր իմաստուն և
սաղմոսասաց, զի՞նչ է այս. որ
պատահեցաւ քեզ։ Եւ նա ասէ,
գիտացէք, զի ագահութին տարաւ
զխելք իմ, քանզի խորհեցայ ծած
կաբար

կարէր ուտել զցորեանն վն սով
ու զի մի տեսցէ ոք 'ի զօրացն։ Յու-
ցանէ առակս։ Թէ բազում ինչ կար
գաւորք և առաջնորդք կորնչին
վն ագահութե, և արծաթսիրութե.
և այնու գայթագղեցուցանեն ըզ
միտս աշխարհաց՝ և լինին ողորմելիք։

ՃԺԵ Ասէ յառակաց՝ Թէ այր մի գնաց
առ դատաւոր քաղաքին. և
խոստացաւ Թէ քեզ բղուղ մի իւղ
տամ. վաղին յորժամ ես, և ոսոխն
իմ առ քեզ գամք. զիս իրաւ արա 'ի
դատաստանին։ Եւ 'ի միւս աւուրն
յորժամ եկին 'ի դատաստան, դա
տաւորն զիւղոյն տուօղն իրաւ ար
ար. և գրեաց զգիր հաստատուն։ և
գնաց այրն, որ զիւղն խոստացաւ,
ելից զբղուղ մի յարդով մինչ և 'ի
ձիտն, և իւր յարդեն երկու և երեք
շերեփ իւղ եդ, և զբերան բղղին
տերեկեաց. և եբեր առ դատաւորն,
և գնաց։ Եւ յետ սակաւ աւուրց
ասէ

ասէ դատաւորն ցպաշտաւորն իւր. Թէ սիրտս իւղով բրինձ կուզէ՝ բեր զայն՝ մարդոյ բերած իւղն. և բրինձ եփէ: Իսկ նա վառեալ կըրակ. և եդ զԹաւայն ի վր կրակին. եբեր զիւղնյառաւ՝ եբաց և էզարկ զդդալն 'ի բղուղն. նա յորդն 'ի դուրս վազեաց: Իսկ նա աղաղակեաց Թէ զբղուղն իւղով բերին, նա յորդ է դարձեալ. Յայնժամ իմացաւ դատաւորն: և ասաց Թէ այն մարդն զիս խաբեաց. ես հեռ նր հանեմ: Եւ յաւուր միում այն մարդն դատաւորին դռնովն անցանէր. և տեսեալ դատաւորին զայրն զայն՝ ասէ. ով այր դու, զքո դատաստանին գիրն, զոր այն օրն ետու պակաս կայ 'ի ներս՝ բեր ընում խեղճ ես. որ յետոյ այլ քո դաւըն կերն չդայ զքեզ 'ի դատաստան քաշէ՝ և զքեզ սատէ: Ասէ այրն, ով դատաւոր՝ Թէ պակաս կայ՝ 'ի բղուղն է, Թէ չէյիմ գիրն պակաս չկայ.

և

և այնպէս յամօթ եղև կաշառօք դատաստանն նորա։ Ցուցանէ առակս՝ թէ ով որ կաշառօք դատաստան առնէ, կամ յայս կեանքս պիտի խայտառակի. կամ 'ի հանդերձեալն։

ճղը

Ասի յառակաց՝ թէ թագաւոր մի կամեցաւ աշտարակ շինել. և քանի ցերեկն շինէին՝ գիշերն 'ի փուլ գայր։ Ու ժողովեալ զգիտունս իւր եհարց զպատճառն. Նոքա ասեն թէ կամիս որ այդ չփլչի. դու ընտրէ տղայ մարդ մի՝ որ քան զինքն տղայ չլինի՝ և 'ի մէջ որմին դիր կենդանի. և խնդրէր այն՝ որ չէն գտնայ։ Ասէ թագաւորին՝ զայդ բանի ընտրութիւն այլ դուք արարէք՝ թէ յինչ հարսքաթ կայ 'ի տղայ մարդն, և բերէք՝ որ տամ դնել 'ի մէջ որմին։ Իսկ նոքա նստեալ 'ի մի աւուր ընտրել՝ թէ յինչ տեղ գտանեն տղայ. և ոմն տեսաց զձկնորսն

գոլ տղէտ. որ հետ մորդոյ չէ նոր առնուլն. և տալն, այլ 'ի ջուրն. և 'ի հետ ձկանց։ Իսկ ոմանք ասացին, զի՞նչ պահակն՝ որ հետ իշուն կենայ՝ եղիւր կեանքն 'ի մայրին և 'ի լերինն հետ գրաստուն շրջի։ Ոմանք զծուլավարն ասացին. իսկ ոմանք զհովիւն, որ 'ի լերինս զամառն և զձմեռն հետ ոչխարացն շրջի, 'ի գիւղ կամ 'ի քաղաք ոչ մտանէ։ և հաւանեալ կամեցան բերել զհովիւն։ Յայնժամ ասէ միումն 'ի նոցանէ. Թէ Թագաւորիս մերոյ է՛ հովիւ մի. որ 'ի լեառն է ծնեալ հետ ոչխարացն, և անդ է սնեալ՝ և զիւր ժամանակն ո՛չ 'ի գիւղ մտեալ՝ և ոչ 'ի քաղաք. և յուղարկեցին տասն ձիաւոր՝ զի բերցեն զայրն. և նք գնացեալ գտին զհովիւն, զի կթէր զոչխարսն. և ողջունեալ ասեն՝ կոչէ զքեզ Թագաւորն։ Ասէ հովիւն՝ ես զիմ ժամանակս ո՛չ 'ի քաղաք եմ գնացեալ՝

և ոչ 'ի գիւղ. զիս զմարդ կոչ է ։ Ե
նք ամէն պատճառանօք՝ ոչ գի
տեմք։ Իսկ նորա պատուեալ զզօրա
կանսն, և զգառն զենեալ, և պանիր
մածուցեալ ուրախացոյց զնոսա. և
երդմամբ հարցեալ զպատճառն
կոչելոյն ։ Իսկ նոցա ասացեալ թէ
այսպիսի պատճառաւ կոչէ զքեզ. զի
իմաստունք նորա ասացին. թէ մի
տգէտ 'ի մարդկանէ գնեն յորմն. որ
չէն մնայ։ Յայնժամ ծիծաղեցաւ
հովիւն, և ասէ. յիմարք և տգէտք
այնք իմաստունքն են. որք զայդ
ընտրութիւն արարեալ։ Եւ բե
րեալ զոչխարն ասէ. ես ցուցից
ձեզ զտգիտութիւնս իմ։ և ասէ, ոչ
խարս. այս երկուս գառինս ունի 'ի
փորն միննն էգ է, և միւսն որձ.
միոյն գլուխն սեաւ, և միոյն սպի
տակ՝ և զենեալ ոչխարն և հանեալ
զգառինսն 'ի փորոյն. և էր այն այն
պէս ասացն։ Եւ բերեալ ոչխար մի՝
ասէ, ոչխարս այս մէկ գառն ունի
'ի

'ի փորն. անձն սեաւ և գլուխն սպի
տակ՝ և լինքն որձ. և զենեալ տես
ին այնպէս: Նուաստ հովիւն, զայս
երկու բռուն գեհս որ կայ ձեր առա
ջի, զամէնին գիտեմ, թէ որն է՝ որ
ծնանելոյ է. և որն է՝ որ ստերջ է, և
որն է, որ որձ ծնանի՝ և որն է որէգ
և որն սեաւ կամ սպիտակ, կամ որն
խայտախարի. ձեր գիտունքն կար
են գիտել զայս: Նոքին զօրականքն
ոչ ամենևին: Նաև հովիւն ասաց գի
տացիք՝ որ ես չեմ այն տգէտն, և
յիմարն՝ զոր դուք խնդրէք. այլ
թէ կամիք՝ ես ցուցանեմ: Նոր
թագաւորն զևր անխա նայեկին
բունէ, թալանէ, և զինչ ունի
զամէն առնու. և իմէջ քաղաքին,
'ի հրապարակին կախէ. և չարա
չար տանջէ՝ որ ամէն քաղաքացիքն
տեսանեն. և տանին՝ թագաւորա
նեն և ասեն, թէ սպանեցին. և ե
րեք օր 'ի քաղաքն կանչեցնեն, թէ
զինչ մարդ որ գայ՝ զայն նայիցի

 գործն

գործն 'ի յանձն առնու. նայ
ապրանքն զամէն այն մարդոյն
տանք՝ որ 'ի նորա տեղն նստի:
Այն մարդն, որ զայն ամէն խաղ
'քութին տեսանէ, և լսէ՝ զոր
յայն նայխալին գլուխն անցուցին.
և յառաջ գայ թէ ես լինիմ թա
գաւորին նայիպ. այն մարդն
է յիմար, և ոգէտ. զայն բանե
ցէք՝ 'ի մէջ որմին դրէք կենդանի,
որ այլ չի փլչիլ. և 'ի չէն մնայ:
Իսկ նորա եկեալ պատմեցին թա
գաւորին. և թագաւորն արարեալ
այնպէս. եգիտ զայրմն որ մինչ
դեռ կանչեցնէին 'ի քաղաքին՝
թէ ով գայ զայն նայիպին զիշխա
նութին, և զգործն յանձն առնու,
նա զնոր ապրանքն և զհայրենիքն
նմա տամք: Յայնժամ ջրմն. և
թօնի այրմն յառաջ վազեաց և ա-
սաց՝ թէ ես յանձն առնում զայն
նայիպութին. և հարցին զնա՝ թէ
տեսեր ընդ այն նայիպին հետ ինչ
արա

տարրին ։ Նա ասէ՝ այո տեսի ։ բայց ես այլ աղէկ առնեմ, որ ղէրդ զայն չ լինիմ։ Նոյնպէս առեալ վաղվաղակի տարեալ եդին կենդանի յորմս շինուածոյն ։ և հաստատուն եկաց շինուածն։ Ցուցանէ առակս։ Եթէ ոք զընկերս տեսանէ ՚ի գործ թագաւորի, կամ մեծամեծաց ձեռն անկեալ՝ և այնու պատճառաւն ՚ի յաղքատութե̅ և ՚ի տուգանս անկեալ ։ և ինքն յանդգնեալ ՚ի նոյն գործն ձեռնարկանէ ։ նման նմա լինիցի ։ և ՚ի կենացն ևս զրկեսցի ։

Ասի յառակաց՝ թէ ագռաւք երկու կռուէին ՚ի մէջ փողոցին ։ և մին յաղթեաց ընկերին, և ձգեաց զնա ։ և հպարտացեալ, ել ՚ի բարձր տանիս ։ և սկսաւ կարկաչել՝ և ձայնել բարձր, որ յաղթեաց ընկերին, և հպարտացաւ ինքն ընդ իւր անձն ։ Նոյն ահա արծուի մի ՚ի վերուստ էառ զինքն ։ և վե ՃԾԹ

բացաւ յօդս երկնից։ Ցուցանէ
առակս. թէ որ խնդայ ՚ի կորուստ
թշնամւոյն իւրոյ. և ուրախանայ
հպարտութբ. թէ յաղթեցի ընկե-
րին. գայ և ՚ի նա նեղութին յանկար-
ծակի, որ վայ տայ իւր անձինն՝ ոփ
ասէ դաւիթ. գուբն զոր փորեաց։
և Տրն ասէ՝ թէ որով չափով չափի։

ՃԿ Բան յառակաց՝ թէ աղքատն օթեր
էր ՚ի ծառ մի, և ի մէջ գիշեր
ին տեսաւ փառաւորանել զԱծ. և
աղաղակէր անասնելի ձայնիւ. լու-
եալ աղուէսն. և գայ առ աղքատն
և ասէ մեր քահանայ, էջ ՚ի ծառէդ
՚ի վայր, զի այսօր տօն է մեծի մե-
կարապետին. և փիլիսոփայ չու-
նիմք, որ կատարեմք զտօնս։ Ասէ
աղքատն սակաւ մի համբերեա մինչև
գայ քեռլին իմ, որ հանդիսիւ տօն
առնեմք. և իբրև առաւօտ եղև,
գայր շունն քերց յանկարծակի.
և բուռնեաց զաղուէսն։ և նա այլ ընդ-
այլ

այլ ձայնէր , և գուայր ։ Մե-
խոսօղն, վայ ինձ թէ այդպիսի
գարշելի ձայնիւդ կամէիր կատա
րել զոտն մեծի սբ կարապետին ։
Յուցանէ առակս ։ Թէ որ ջանայ
նենգել ընկերին իւրոյ· ինքն անկցի
յորոգայթն որ Քս հրամայէ · և
սաղօմօն· որ փորէ ։

Ասի յառակաց՝ թէ ժողովեցան երեսուն նապաստակք· խորհուրդ արարին, և ասացին ։ թէ եկայք, երթամք ամէնքս միաբան անկանիմք 'ի ծովն· որ ազատիմք 'ի յայս դառն կենացս · զի կարի ող կար է ստեղծեր զմեզ Ա. Ծ. թէ գազանքէն, թէ հաւքէն զմեզ ուտէնալու է որ մեռանիմք.քն այս կենօքս ապրիմք։ Եւ 'ի գնալն իւրեանց տեսին շատ գորտունս · և ճիչ բարձեալ գորտանցն փախեան, և անկան 'ի ջուրն, և թաքեան ։ և նապաստակքն գոհացան զԱ.Ծ · զի

Ձկա



ոկարք

տկարք տեսլին քանզի ինքեանս ։
Ցուցանէ առակս։ Թէ մի հայիր 'ի
մարդն՝ որ բարձր է քան զքեզ՝ և
մխիթարեսցիս։ և թէ մեղաւորես ․ մի
հայիր 'ի կարի արդարն՝ և անյոյս
լինիր․ այլ հայեաց 'ի մեծ մարդիկ,
և մխիթարիր ․ և յուսով դիմեա
առ Յն, և փրկիս ։

ՃԿԲ Մեք յառակաց՝ թէ 'ի տօնի զատ-
կին եկին Թռչունքն ամ, և խոս-
տովանէին ըստ օրինացն․ եկին
ընդ նոսա սակաւ մի և հողամաղք։
խոստովանէին քահանային՝ թէ
չեմք մեղուցեալ․ բայց զի որսացաք
զմուկն, և զգորտ, և կերինք։ Իսկ նա
մերժեաց զնոսա պիղծս կոչելով,
և նզ երթեալ ստացան գանձս բա-
զում, և մատուցին քահանային․ և
տարեալ այնու արդարացոյց զնոսա
ասելով․ ոչ գիտացիք խոստովա-
նիլ՝ զի այն ձեզ Թռչունքն են և հա-
ղորդեաց զնոսա ։ Ո՜ ագահ ե-
պիսկո

պիսկոպոսացն , և քահանայից ,
առաւելս նուաճակէ։ զի զպտունկս և
զայլս մերձեն յեկեղեցւոյ , և դար
ձեալ ընդունին կաշառօք ։

Սուր յառակաց՝ Թէ բուն հրշէ ՃԿԳ
տակ առաքեաց առ արծուին.
և խնդրեաց զդուստր նը՟ր հարսն։ և
ասէ դու տունջեան քաջամարտիկ
ես և ես գիշերոյ. պատշաճ է մեզ
խնամութին. և յանձն էառ տալ.
և՛ի լինել հարսանեացն , 'ի տուէ
լոյս ոչ կարէր տեսանել փեսայն, և՛ի
գիշերի հարսն. և ծաղր առնէին
զնա բաղէքն. և լուծաւ հար
սանիքն ։ Ցուցանէ առակս. Որ
հաւատացեալ մարդ զդուստր իւր
տայ այլասեռի խաւարեցելոյ 'ի
լուսոյ ։

Այր մի գնալով 'ի ճանապարհի ՃԿԴ
հանդիպեցաւ արանց՝ որք զձո
ղանս կապեալ 'ի բուն վէմ մի , զի

շարժեսցեն զվէմն և առ ինքեանս
քարշեսցեն. բայց յամենունց կող
մանց քարշէին. կամելով իւրաքան
չիւրոք առ ինքն քարշել՝ և իւրա
ցուցանել. Իսկ քարն ամենևին ան
շարժելի մնայր՝ և անխախտ։ Յետ
այսր, ով մարդիկք, եթէ կամիք
շարժել զդա ՚ի տեղւոջէ իւրմէ,
՚ի միոջէ կողմանէ քարշեցէք, զի
շարժեսցի. քանզի յամենայն կող
մանէ քարշելով զդա շարժել անհ
նարին է։ Բայց նոքա ոչ կամեցան
լսել նմա. այլ յամառեալ քարշէին
ըստ սովորութեան իւրեանց՝ վն որոյ
քարն մնայր անշարժ։ Յուցանէ։
Վէմն է ինքն Քս ըստ ՚Իւաննէսի
և Պօղոսի. Իսկ քարշօղքն առ ին
քեանս Քրիստոնեայք, զի իւրա
քանչիւրոք ազգ քրիստոնէից կամի
հակառակութբ զՔս առ ինքն
քարշել՝ այսինքն իւրացուցանել՝
բայց Քս անշարժ մնայ՝ և ոչ առ
միոք գնայ։ քանզի Քս ոչ կամի
զհա

պահպանութիւն և զընդդիմու-
թիւն հաւատացելոց նորոց. այլ
զսէր և զմիաբանութիւն նոցին.
որովք շարժի Քրիստոս առ նոսա։

## Մ․Ա․Ր․Դ։

---

### Յանգ գրոյս։

Նախ յառաջաբանութիւն սակս աշ-
խարհաց, ներ ում խօսի բանս
յերկրաչափութէ, նա և յիշատա-
կէ զանուանս արանցն, որք եղեն
գտօղք երկրաց. նաև թէ որոյ
հրամանաւ 'ի խնդիր եղեն։ նա և
զանուանս չափուց և կշռոց։ այլ
և զմասունս երկրի բաժանէ յերիս
Նու զորքանութիւն ծովուց բացա-
տրէ. և զպարունակութիւն նո-
ցունց սահմանէ հանդերձ պարա-
գայիւք։ և զանուանակոչութիւն
նոյն բայորոշ է։

Զուա

զԱռաջին մասն դնէ զԵւրօպիոյ
սկսեալ 'ի սեպտայէ, և յաւարտէ
Թրակիայիւ և Եղլադայիւ. Ներ
ում պարունակին աշխարհ.ք երկո
տասանք. սկսանի յերեսն. 19.

զԵրկրորդ մասն սահմանէ
զԱփրիկայ, սկսեալ 'ի նունոյ սեպ
տայէ՝ և ծայրաւորէ կարմրով
ծովու և հարաւայնով ծովու. նո
րում բաժանէ զաշխարհս եօթն.
բայց զեօթներորդն 'ի յոլովս հա
տանէ. սկսանի յերեսն. 26.

զԵրրորդն զԱսիայ, սահմա
նէ յարեւմտից ծովախառնորդիւն
Պոնտոսի, իսկ հարաւոյ արե
մտից ծայրիւ նունոյ կարմրոյ ծո
վու. և աւարտէ արևելականաւ
հարաւայնով, և հիւսիսայնով
Սկիւթիանոսիւ՝ և բաժանէ յաշ
խարհս. խբ. Գեղեցկապէս և մին
բամասնաբար զաշխարհս Հայոց
բացորոշելով. Այլ զաշխարհն
Սարմացւոց յանուանէ և եթ յիշէ
լով.

լով. նոյնպէս և զաշխարհն հնդ-
կաց. սկսանի յերեսն. 32։

Չորրորդ մղոնաչափութե՛ զբա-
ցակայութիս նոցունց բացատրե-
լով. ՚ի գո՛այ սկսանելով և
յամենեսան կողմունս ընթանալով
բացատրե։ սկսանի յերեսն. 65։

Անո՛ւանք գետոց սկսանին, յե-
րեսն. 69։

Այլ և անո՛ւանք գետոց ոչ ՚ի
Ասիոյ արարեալ այլ յայլմէ։ և
բղխմունք նոցունց, և ընթացքն նո
ցունց. յերեսն. 70։

Անո՛ւանք քաղաքաց հնդակաց՝
վաճառք նոցունց։ և փարթամու-
թիւք, ողքանութիւք, և հոյակապու-
թիւք իւրեանց. յերեսն. 77։ բայց
բանին շարադրութին դժեհկա-
բար։

# Երկրորդ Գիրքն է
# ԱՂՈՒԵՍԱԳԻՐՔ:

Ագռաւու զպանիրն 'ի բերանն ունել. գլուխ. ԼԴ:
Ագռաւու ձագս խրատելն. ՀԵ:
Աղէկսանդրու յինքնուրոյն գնալն դեսպան. ԺԴ:
Աղեքսանդրու պատահելն եղէր աշխարհի. ԺԵ:
Աղեքսանդրու զնուռնն կորելն. ԺԹ:
Աղեքսանդրու զօրու նուրոյ ձեան պատահելն. Ի:
Աղեքսանդրու մեռանելն. ԺԷ:
Աղուէսու զատուն դատուելն. ԼԷ:
Աղուէսու և խեցգեռնի եղբայր լինելն. ԼԹ:
Աղուէսու ցուլան մերձ 'ի մահ գտանելն. ԾԷ:
Աղուէսու զթուղթ գտանելն, և առ գայլն տանելն. ԿԷ:

Աղուէ

Աղուեսու զգայլ խաբելն. կէ։
Աղուեսու զպանիր յորոգայթն գտանելն. կը։
Աղուեսու քաղցնուլն, և իմէջ հորոյն զքար գտանելն. հ։
Աղուեսու գետարար լինելն. հա։
Աղուեսու զպաղ գտանելն. հբ։
Աղուեսու զգրաւ գտանելն. հգ։
Աղուեսու զկաքաւ ըմբռնելն. ճդ։
Աղուեսու զ չիտ ըմբռնելն. ճե
Աղուեսու արծուոյ եղբայրանալն. ճլգ։
Աքատի գնալն ՚ի գեւղմի. ծե։
Աքատ երիցու մտա մսա գործ գնալն. ճծ։
Այծոյ ՚ի բարձր պատնստելն. ճխէ։
Այրի կնոջ զգող տղայ ունելն. լը։
Այրւոյ զտասն այծ ունել. ճխե։
Արանց երկուց ընկեր անալն. ճծա։
Առիւծու ՚ի քար այր մտանելն. ճծժ։
Առիւծու հիւանդանալն և բժշկաց խնդրելն. ճէ։

Առիւ

Առիւծու զաղրճես սպասաւոր
կալնուլն. խս:
Առիւծու տեսանելն զփախուստ
կենդանեացն. հգ:
Առիւծու հիւանդանալն, և էր
էշոյ տես գալն. հզ:
Առիւծու, գայլոյն, և աղուէսին
եղբայրանալն. ձբ:
Առնն եղանելն 'ի դժուար գալն
'ի վէր. ղը:
Առնն աղքատանալն 'ի ղալաթե
այ՝ և զարտ վաճառելն. ժգ:
Առնն ըմբռնելն 'ի գողութե. խա:
Առնն գերեզմանակորի, և խա
թունին. խը:
Առնն բաղրկանի զբեռնն տա
նելն. խե:
Առնն միոյ յեշէմ գնալն. խզ:
Առնն միոյ առ թագաւորն մատա
նելն. ճա:
Առնն մեծատանն գնալ խնամախօս. ծդ:
Առնն գնացողի առ դուռն. ձծէ:
Առնն մարդասպանի փախուստն. ծթ:

Քունն յիմարի, և ունողի զմի դե
կան . ղ։

Քունն հողագործի զակամաթ լա
րեքն . ղդ։

Քունն զլեզու հորթուն հատա
նեքն . ղե։

Քունն աղքատի զմիս խորովեքն . ղզ։

Քունն բարւոյ չարութեց զատեքն։
ճիգ։

Քունն ցանողի զծմերուկ . ճլդ։

Քունն որ զիւր ժամանակս 'ի մեղս
եր . ճլե։

Քունն զգայլ ըմբռնեքն և զոտ
ներն կապեքն . ճխբ։

Քունն զէշ կորուսանեքն . ճխդ։

Քունն հարիւր մոթ հաց վաստա
կեքն . ճխթ։

Քունն 'ի հող վարսն զերիս գանդան
դատանեքն . ճթ։

Քունն զհաղար խոզս 'ի մի վայր ա
ծեքն . ճժա։

Քունն պարտկանի և անձրկի . ճծբ։

Բանն զհազար կաղապար ոսկիս
թաղելն. ՃԺԴ։

Բարուոյ երիցու կռուելն. ՃԻ։

Բրադլի բռնութի զայն յամուս
նութին. ՀԷ.

Բրադլին և ոպոպի զծնօղին դար
մանելն. ՀԹ։

Բրծուոյ վերանալն ՚ի տապ. ԿԲ։

Բրծուոյ նեռամահար լինելն. ԿԴ։

Բրծուոյ եկաքեւն չարակամ. ԼԴ։

Բանն ունօղի զկին բարկացօղ. ՃԼԴ։

Բանն ունօղի զկին անզգամ. ՃԼԱ

Բանն ունօղի զկին դեղեցիկ. ՃԼԷ։

Բարձր ծառն որոյ մեղկութեր. ՃԻԱ։

Բժշկապետի զայն ՚ի բժշկմ. ՃԲ։

Բուռն և արծուոյ խնամանալն. ՃԿԴ։

Գաղանին յանմարդաբնակ տե
ղւոջ. ԽԲ։

Գաղանին ծովայնոյ՝ զհուր ու
տելն ԽԴ։

Գաղանին, որոյ ձուն դեղէ։

Գաւազանին ծուխայնոյ յորոյ բերա
նոյն հոտ անոյշ գայ. խէ։
Գայլոյ և աղուէսու եղբայրա
նալն. կէ։
Գայլոյ ընդ գառանց, և խոյ արա
ցելն. ձդ։
Գայլոյ 'ի լերին երանելն. ձխդ։
Գառն զձմերուկ գողանալն. ձի։
Եղբօր ուժեղին գնալ առ հայրն,
և խոստովանելն. ժդ։
Երկուց աքլորաց կռուոյն. ձծթ։
Երկուց արանց յոյժ բարեկամաց.
ձծդ։
Երնջուցն խայտալն, և զեղենան
խրատելն. կ։
Թագաւորի դեսպանաց զանգան
կոչելն. ճ։
Թդրի բարեմանի զձաշ կոչելն. ճբ։
Թդրի յարևմուտս յաթոռ ելա
նելն. դ։
Թդրի որդւոյ 'ի մերջին աղբատու
թի հասանելն. դ։
Թդրի նեղանալն 'ի լուոց. ե։

Թղ̃թն զմի խոզ ունին և սիրեն· ղ̃
Թղ̃թն զմիակեց տեսանեն· ղ̃ե։
Թղ̃թն միոյ մեռանին· և միոյ
ապրին· ժ̃ե։
Թղ̃թն հազար ամն ունին· խ̃գ։
Թագաւորն շրջին իւր ի̃ խուրոյ գա-
ռանն· խ̃ե։
Թղ̃թն զբարձր զախուն կնգնեն· խ̃ը։
Թղ̃թն զբերեցիկ զոյգ ի ունին· խ̃թ։
Թղ̃թն երիցս զերազ տեսանեն· ը̃։
Թղ̃թն զժառանգ ոչ ունին· լ̃ա։
Թղ̃թն զանխռաուութի առնեն· լ̃ը։
Թղ̃թն միոյ սիրելի օձն· կ̃թ։
Թղ̃թն աշտարակ շինեն· ՃԾ̃ը։
Թռչնոյ ՚ի տանի զատկի գայն· Ճկ̃ե։

Ժողովումն թռչնոց կացուցա
նել թղ̃թր զսիրամարգն· ղ̃ե։
Ժողովումն թռչնոց կացուցանել
զարտուտն թղ̃թր· ՃԾ̃ղ։
Ժողովումն երեմնից նկարելոյն· Ճկ̃ա

Ուրան աւետարանին· ժ̃բ։
Իմաստնոյ աւագերիցոյ· Ճխ̃գ։

Իմաստ

Իմաստնոյ ճարտարապետի · ՃԻԵ ։
Իմաստնոյ աղքատի զծայլ որդե
ունիլն · ՃԽԾ ։
Իջոյ 'ի դժոխային տեղին · ՃԼ ։
Իջոյ առնուլ զյաւանսն յարօ · ՃՂ ։
Իջոյ անկանելն 'ի գետն · ՃԾ ։
Իջոյ մեծարելն 'ի Հարսանիս · ՃՂ ։
Իջոյն աւետիս տալն մն որդւոյ · ՃԷ ։
Իշխանի որդւոյ մեռանելն · ԺԴ ։
ուսելնն խաւարի · ՂԷ ։
Իմորդւոյ զբունն ոչ գտանելն · ՃԻԵ ։
Խոզին և բզեզին և այլկենդանեաց ·
ԶԵ ։
Խոսելն եղեն և ձիոյն ըստ մխմ · ՃԻԶ ։
Ծառ միհնդեկից աշխարհէն · ՃԺԴ
Կապելեն որ ապուղայ ասի · ԽԷ ։
Կապելեն զամբողուն առնուլն ՀԶ ։
Կատուն զփիզոն հագանելն · ԽԹ ։
Կատուն լուսակալ լինելն · Ծ ։
Կենդանեաց զորով այն լունելն ՃԾԵ ։
Կենդանեաց անոխակալութեն · ՃԽԹ ։

Կնոջ երեք երեսի ջուր լինելն • Ճխը:
Կնոջն գնալն յԼ՚ծեմ, ԹԺ:
Կնոջ ընդ դրախտ շրջելն • ծդ:
Կնոջ այրւոյ զկով մի ունելն • հբ:
Կուսին հաւատաւորի • ղթ:
…արանին հեղի և համբերողի ծդ
…արցումն ընդ աղօթեսին …
արուեստի • լե:
…ինդ բան 'ի մարդկանէ անդ…
լի • խգ:
…իւսան աշխատելն երեք ամ 'ի
բաղդաւորաղաք • Ճխղ:
Զկան 'ի ջրոյն ելանելն • Ճլթ:
Զկան 'ի կեռ գալն • Ճխ:
Զմուան չորացուցանելն զբոյսս • ղ…
Ճանապարհորդի հանդչելն յաղ
բերն • ձը:
Մեծատանն ունողի զժառանգ
զքեռորդին • ղը:
Մկնից զսկեհ չունելն ևզզեն • Ճմէ:
Միայնակեցի, նստելն խվ 'ի վիմի • է:
Միայնակեցին, 'ի սահմանս դեղջ
ընակողջն • խդ:

Միայ

Միայնակեցին, որ տուր դշնուն. ճխէ։
Միայնակեցին չնացողի երկս ամս. ճխը։
Միայնակեցի դաշնադրութին. ՃԾԳ.

Նանենւոյն պարծելն ընդ ձիթենին. ՃԼԲ։

Յանմարդաբնակն լերին մրջիւնն. ՂԴ։

Որսորդն կալնուլ զկաքաւն. ՃԷ։
Որսորդ մի յարեւմուտս. ԾԱ։
Ուղտք երեք, եւ աղուէսք երեք. ԾԲ։
Ուղտոյ, գայլոյ, եւ աղուէսու գնալն. ՀԵ։

Փերմոսին բռաղմօրեայ. ԿԴ։

Պառաւոյ դող օխս կատրելն. ՃԼԵ։
Պարծելն եկեղեցւոյ. ՃԼԴ։
Սնդիկնոսացն երկուց. Ճ։
Սպիտակ հաւուն ՚ի տունս թգրայ. ՃԾԵ։
Սաձառաւականայն տասսանց. ՃԾԻ։
Սարգին որն՚ ղոտամունս. ԿԾ։
Սաձառակնին դալ՚ ի քղաք մի. ՃԼԹ։

Սեմին

Մ խէն ամէ սից կողմանց քարշելն. ձկդ:

Բ՝ահամայեն գողանալ զկոյն ծը: Բ՝աղաքէն, բաղմա ձանապարհի. ձժզ:

Ոձի մնտոխկնոս լինելն. հա:

Ոձին եղանեն՝ ի ծակեն. ձժը:

Ոձի գնալն՝ ի դուր դաշտ. ձժթ:

Ոթելն աքլորեն՝ ի ծառն. ձկ:

---

Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ աւարտեցաւ գրքուկս շահաւէտս:

՚Ի Թուին. 1669. Յունվարի. 20:

Իսկ ըստ հայոց. ռՃժը.

Տրեխ. ժը:

Մ. Ն. Բ. Փ:

Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР